ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2015
02.2015
03.2015
04.2015
Ապրիլ
05.2015
06.2015
07.2015
08.2015
09.2015
10.2015
11.2015
12.2015

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 22-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2015

Ապրիլ

թիվ 4 (200)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ՍՏՈՒԿ» ՍՊԸ-ին տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, «Մարիուս» ՍՊԸ-ին գրավատնային գործունեության իրականացման լիցենզիա տրամադրելու, ինչպես նաև «ԻԴՐԱՄ» դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող ՍՊԸ-ի որոշ մասնաճյուղեր գրանցելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները «Պարմա» ՍՊԸ-ի թիվ 1 մասնաճյուղին արտարժույթի առուվաճառքի լիցենզիա տրամադրելու, որոշ ՈՒՎԿ ՍՊԸ-ների և ՓԲԸ-ների մասնաճյուղեր գրանցելու, ինչպես նաև որոշ ՓԲԸ-ների մասնաճյուղերի գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 10 գրավատների, 1 ԱՓԲԸ-ի նկատմամբ տուգանք կիրառելու և 1 ԱՓԲԸ-ի, 1 արտարժույթի փոխանակման կետի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 47-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի թիվ 138-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

42 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 48-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի թիվ 93-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

44 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 49-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի հունիսի 8-ի թիվ 293-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

45 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 50-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

46 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 67-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 70-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

47 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 79-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Ճանապարհային ոստիկանության վարչական տույժերի, տուգանքների հաշվառման տեղեկատվական համակարգից տվյալներ ստանալու և վճարումների կատարման համար այդ տվյալները պարտադիր ստուգելու մասին կարգը և պայմանները հաստատելու մասին»

56 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 93-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 230-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

56 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 94-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 231-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

57 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «ՍՏՈՒԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիան (որոշում թիվ 87Ա):
- ***Գրավատնային գործունեության իրականացման լիցենզիա է տրամադրվել*** «Մարիուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 96Ա):
- ***Դադարեցվել են*** «ԻԴՐԱՄ» դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Կոմիտաս» և «Ռաֆֆի» մասնաճյուղերը (որոշում թիվ 97Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «Պարմա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թիվ 1 մասնաճյուղին (որոշում թիվ 99Ա):
- ***Գրանցվել են*** «ԲԼԵՍՍ» և «ՍԵՖ Ինտերնեյշնլ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համապատասխանաբար «Սիսիան» և «Նոյեմբերյան» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/245Ա, 1/288Ա):
- ***Գրանցվել են*** «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն և «Ինգո Արմենիա» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունների համապատասխանաբար «Կոմիտաս» և «Մալաթիա» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/258Ա, 1/298Ա):
- ***Գրանցվել են*** «Հայբիզնեսբանկ», «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» փակ բաժնետիրական ընկերությունների համապատասխանաբար «Արաբկիր» և «Սայաթ-Նովա» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/302Ա, 1/345Ա):
- ***Թույլատրվել է դադարեցնել*** «Արցախբանկ» և «Յունիբանկ» փակ բաժնետիրական ընկերությունների «Սայաթ Նովա» և «Հրազդան», «Լոռի» մասնաճյուղերի գործունեությունը (որոշումներ թիվ 1/327Ա, 1/340Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 10 գրավատների, 1 ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 8185000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/238Ա, 1/239Ա, 1/276Ա-1/278Ա, 1/308Ա, 1/317Ա, 1/318Ա, 1/320Ա, 1/339Ա, 1/321Ա) և 1 ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության, 1 արտարժույթի փոխանակման կետի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/265Ա, 1/291Ա):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի թիվ 138-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով օպտիմալացնել արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորման և կարգավորման գործընթացները, բարելավել արժութային շուկայի կարգավորման արդյունավետությունը,

հիմք ընդունելով «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, 49-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի ««Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ը հաստատելու մասին» թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ը (այսուհետ՝ Կանոնակարգ 10) հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների վարչությանը՝ մինչև սույն թվականի հուլիսի 1-ն ապահովել սույն որոշմամբ հաստատված Կանոնակարգ 10-ի 131-րդ կետի կիրառումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը՝ բացառությամբ սույն որոշմամբ հաստատված Կանոնակարգ 10-ի 131-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում սույն թվականի հուլիսի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
13 մարտի 2015 թ., N 47-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թվականի մարտի 12-ի թիվ 47-Ն որոշմամբ

«ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ»

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ 10

ԲԱԺԻՆ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է.
1) փոխանակման կետերի, դրանց մասնաճյուղերի լիցենզավորման և կարգավորման ընթացակարգերը,
2) փոխանակման կետերի աշխատակիցներին ներկայացվող մասնագիտական որակավորման չափանիշները և նրանց քննելու կարգը,
3) արտարժույթի առուվաճառքի գործառնությունների իրականացման կարգը:

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. մարտի 12-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.04.2015 թ. (ՀՀԳՏ N9 (521)[1], 15.04.2015):

2. Սույն կանոնակարգի իմաստով փոխանակման կետն իրավաբանական անձ է, ինչպես նաև մինչև 2007 թվականի փետրվարի 3-ը լիցենզիա ստացած անհատ ձեռնարկատեր, որը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիայի հիման վրա կարող է իրականացնել արտարժույթի առուվաճառքի կանխիկ գործառնություններ միայն ֆիզիկական անձանց հետ՝ Հայաստանի Հանրապետության դրամով:

ԳԼՈՒԽ 2. ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3. Սույն կանոնակարգում օգտագործվում են հետևյալ հասկացությունները.

1) ***«անձնագրային տվյալներ»***՝ անձնագրի սերիա և անձնագրի համար, իսկ անձնագրի բացակայության դեպքում՝ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալներ,
2) ***«հանրային ծառայությունների համարանիշ»***՝ Հայաստանի Հանրապետության կողմից անձին տրամադրված հանրային ծառայությունների համարանիշ (սոցիալական ապահովության քարտի համար) կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար,
3) ***«առաջին խմբի մեջ մտնող արտարժույթ»***՝ ԱՄՆ դոլար, եվրո, ճապոնական իեն, անգլիական ֆունտ ստեռլինգ, շվեյցարական ֆրանկ, կանադական դոլար, շվեդական կրոն, դանիական կրոն, ավստրալիական դոլար,
4) ***«զինված անվտանգության ծառայություն»***՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանություն կամ «պահնորդական ծառայություն»՝ «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով,
5) ***«Կենտրոնական բանկ»***՝Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
6) ***«մասնաճյուղ»***՝անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ փոխանակման կետի գործառնական դրամարկղից դուրս տեղակայված առանձնացված ստորաբաժանում, որն իրականացնում է փոխանակման կետի գործառույթները,
7) ***«խանութ»***՝«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված առևտրի օբյեկտի տեսակ,
8) ***«առևտրի կենտրոն»***՝«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված առևտրի իրականացման վայրի տեսակ,
9) ***«որակավորող կազմակերպություն»***՝Կենտրոնական բանկի կողմից ընտրված կազմակերպություն, որն իրականացնում է փոխանակման կետի աշխատակցի մասնագիտական որակավորման ստուգում:

ԲԱԺԻՆ II. ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 3. ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ

4. Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա ստանալու համար լիցենզավորվող անձը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) լիցենզիա ստանալու մասին դիմումը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի,
2) տեղեկանք բանկից (բանկերից) ցպահանջ կամ ժամկետային հաշիվներում առնվազն մեկ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամի առկայության մասին,
3) տարածքի սեփականության, անհատույց օգտագործման, վարձակալության (ենթավարձակալության) կամ հավատարմագրային կառավարման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը,
4) տարածքի հատակագիծը՝ հաստատված իրավասու մարմնի կամ համապատասխան լիցենզիա ունեցող մարմնի կողմից, որի վրա պետք է նշագրված լինեն փոխանակման կետի դրամարկղի գտնվելու վայրը և այն նվազագույն տարածքը, որը բավարարում է սույն կանոնակարգի 56-րդ և 57-րդ կետերի պահանջները,
5) դրամապահոցի բացակայության դեպքում՝ ինկասացիոն կազմակերպության կամ զինված անվտանգության ծառայության հետ կնքված պայմանագրերի պատճենները, իսկ սույն կանոնակարգի 74-րդ կետը բավարարող հյուրանոցներում գործող փոխանակման կետերի դեպքում՝ սույն կանոնակարգի 74-րդ կետում նշված ապահովագրության պայմանագրերը ու հիմնավորում հյուրանոցի ներքին անվտանգության կողմից անվտանգության ապահովման մասին,

6) պետական տուրքի վճարման անդորրագիրը,
7) հիմնավորումներ (համապատասխան լիցենզիա, ՀԴՄ կտրոն, հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի N 511-Ն որոշման իմաստով և այլն) այն մասին, որ դիմումատուն հանդիսանում է տվյալ խանութում առուվաճառք իրականացնող իրավաբանական անձը կամ տվյալ առևտրի կենտրոնում առևտրի իրականացման կազմակերպիչը կամ տվյալ հյուրանոցում հյուրանոցային ծառայություններ մատուցող իրավաբանական անձը,
8) ստորև թվարկված փաստաթղթերից որևէ մեկը՝
   8.1) Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր ոստիկանության հետ կնքված պայմանագիրը և փաստաթուղթ՝ հաստատված Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր ոստիկանության համապատասխան ստորաբաժանման կողմից՝ փոխանակման կետում անվտանգության ազդարարման համակարգի և ազդարարման ուղիղ կապի ոտնակի սարքին լինելու մասին, կամ
   8.2) պայմանագիր՝ կնքված զինված անվտանգության ծառայության հետ՝ փոխանակման կետի տարածքի անվտանգության ապահովման վերաբերյալ, որը բավարարում է սույն կանոնակարգի 76-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջները, կամ
   8.3) ապահովագրության պայմանագիր, որը բավարարում է սույն կանոնակարգի 76-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դրույթները, իսկ սույն կանոնակարգի 77-րդ կետում նշված հիմքերի առկայության դեպքում՝ սույն կանոնակարգի 77-րդ կետով պահանջվող պայմանագիրը կամ գրավոր հայտարարությունը,
9) աշխատակցի (աշխատակիցների) մասնագիտական որակավորման վկայականի պատճենը:

5. Փոխանակման կետերը մասնաճյուղ բացելու համար Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝
1) մասնաճյուղի լիցենզիա ստանալու մասին դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի,
2) տեղեկանք բանկից (բանկերից)՝ ցպահանջ կամ ժամկետային հաշիվներում փոխանակման կետի և յուրաքանչյուր մասնաճյուղի համար առնվազն մեկ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամի առկայության մասին,
3) սեփականության, անհատույց օգտագործման, վարձակալության (ենթավարձակալության) կամ հավատարմագրային կառավարման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը,
4) տարածքի հատակագիծը՝ հաստատված իրավասու մարմնի կամ համապատասխան լիցենզիա ունեցող մարմնի կողմից, որի վրա պետք է նշագրված լինեն փոխանակման կետի դրամարկղի գտնվելու վայրը և այն նվազագույն տարածքը, որը բավարարում է սույն կանոնակարգի 56-րդ և 57-րդ կետերի պահանջները,
5) դրամապահոցի բացակայության դեպքում՝ ինկասացիոն կազմակերպության կամ զինված անվտանգության ծառայության հետ կնքված պայմանագրի պատճենը, իսկ սույն կանոնակարգի 74-րդ կետը բավարարող հյուրանոցներում գործող փոխանակման կետերի դեպքում՝ սույն կանոնակարգի 74-րդ կետում նշված ապահովագրության պայմանագրերը ու հիմնավորում հյուրանոցի ներքին անվտանգության կողմից անվտանգության ապահովման մասին,
6) պետական տուրքի վճարման անդորրագիրը,
7) հիմնավորումներ (համապատասխան լիցենզիա, ՀԴՄ կտրոն, հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի N 511-Ն որոշման իմաստով և այլն) այն մասին, որ դիմումատուն հանդիսանում է տվյալ խանութում առուվաճառք իրականացնող իրավաբանական անձը կամ տվյալ առևտրի կենտրոնում առևտրի իրականացման կազմակերպիչը կամ տվյալ հյուրանոցում հյուրանոցային ծառայություններ մատուցող իրավաբանական անձը,
8) ստորև թվարկված փաստաթղթերից որևէ մեկը՝
   8.1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության հետ կնքված պայմանագիրը և փաստաթուղթ՝ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության համապատասխան ստորաբաժանման կողմից՝ փոխանակման կետում անվտանգության ազդարարման համակարգի և ազդարարման ուղիղ կապի ոտնակի սարքին լինելու մասին, կամ

8.2) պայմանագիր՝ կնքված զինված անվտանգության ծառայության հետ՝ փոխանակման կետի տարածքի անվտանգության ապահովման վերաբերյալ, որը բավարարում է սույն կանոնակարգի 76-րդ կետի պահանջները, կամ

8.3) ապահովագրության պայմանագիր, որը բավարարում է սույն կանոնակարգի 76-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դրույթները, իսկ սույն կանոնակարգի 77-րդ կետում նշված հիմքերի առկայության դեպքում՝ սույն կանոնակարգի 77-րդ կետով պահանջվող պայմանագիրը կամ գրավոր հայտարարությունը,

9) աշխատակցի (աշխատակիցների) մասնագիտական որակավորման վկայականի պատճենը:

6. Փոխանակման կետի գործունեության վայրի փոփոխման դեպքում Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

1) լիցենզիայի վերաձևակերպման դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 3-ի,

2) տարածքի սեփականության, անհատույց օգտագործման, վարձակալության (ենթավարձակալության) կամ հավատարմագրային կառավարման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը,

3) տարածքի հատակագիծը՝ հաստատված իրավասու մարմնի կամ համապատասխան լիցենզիա ունեցող մարմնի կողմից, որի վրա պետք է նշագրված լինեն փոխանակման կետի դրամարկղի գտնվելու վայրը և այն նվազագույն տարածքը, որը բավարարում է սույն կանոնակարգի 56-րդ և 57-րդ կետերի պահանջները,

4) դրամապահոցի բացակայության դեպքում՝ ինկասացիոն կազմակերպության կամ զինված անվտանգության ծառայության հետ կնքված պայմանագրի պատճենը, իսկ սույն կանոնակարգի 74-րդ կետը բավարարող հյուրանոցներում գործող փոխանակման կետերի դեպքում՝ սույն կանոնակարգի 74-րդ կետում նշված ապահովագրության պայմանագրերը ու հիմնավորում հյուրանոցի ներքին անվտանգության կողմից անվտանգության ապահովման մասին,

5) պետական տուրքի վճարման անդորրագիրը,

6) հիմնավորումներ (համապատասխան լիցենզիա, ՀԴՄ կտրոն, հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի N 511-Ն որոշման իմաստով և այլն) այն մասին, որ դիմումատուն հանդիսանում է տվյալ խանութում առուվաճառք իրականացնող իրավաբանական անձը կամ տվյալ առևտրի կենտրոնում առևտրի իրականացման կազմակերպիչը կամ տվյալ հյուրանոցում հյուրանոցային ծառայություններ մատուցող իրավաբանական անձը,

7) ստորև թվարկված փաստաթղթերից որևէ մեկը՝

7.1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության հետ կնքված պայմանագիրը և փաստաթուղթ՝ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության համապատասխան ստորաբաժանման կողմից՝ փոխանակման կետում անվտանգության ազդարարման համակարգի և ազդարարման ուղիղ կապի ոտնակի սարքին լինելու մասին, կամ

7.2) պայմանագիր՝ կնքված զինված անվտանգության ծառայության հետ՝ փոխանակման կետի տարածքի անվտանգության ապահովման վերաբերյալ, որը բավարարում է սույն կանոնակարգի 76-րդ կետի պահանջները, կամ

7.3) ապահովագրության պայմանագիր, որը բավարարում է սույն կանոնակարգի 76 կետի 2-րդ ենթակետով սահմանված դրույթները, իսկ սույն կանոնակարգի 77-րդ կետում նշված հիմքերի առկայության դեպքում՝ սույն կանոնակարգի 77-րդ կետով պահանջվող պայմանագիրը կամ գրավոր հայտարարությունը,

8) լիցենզիայի բնօրինակը:

7. Անհատ ձեռնարկատեր փոխանակման կետը գործունեության վայրի փոփոխության դեպքում պետք է բավարարի սույն կանոնակարգի 6-րդ կետով սահմանված դրույթները՝ բացառությամբ 6-րդ ենթակետի:

8. Ներկայացվող տեղեկանքների վաղեմությունը Կենտրոնական բանկ ներկայացնելու պահին չպետք է գերազանցի երկամսյա ժամկետը:

9. Սույն կանոնակարգի 4-րդ, 5-րդ կամ 6-րդ կետերում նշված փաստաթղթերը ստանալու պահից 30-օրյա ժամկետում Կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է կայացնում լիցենզիան տրամադրելու կամ վերաձևակերպելու մասին կամ սույն կանոնակարգի 10-րդ կետով նախատեսված դեպքերում մերժում է ներկայացված դիմումը: Փոխանակման կետերի լիցենզավորման համար նշանակություն ունեցող փաստեր պարզաբանելու նպատակով սույն կետում նշված 30-օրյա ժամկետը Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ կարող է կասեցվել, բայց ոչ ավելի, քան մեկ անգամ և առավելագույնը երեք ամիս ժամկետով,

ընդ որում, անհրաժեշտ փաստեր պարզաբանելուց հետո դիմումի քննության ժամկետը չպետք է գերազանցի 30-օրյա ժամկետի և մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը: Լիցենզավորված անձին լիցենզիա տրամադրելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Կենտրոնական բանկը լիցենզավորված անձին տալիս է լիցենզիա՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 4-ի, ինչպես նաև լիցենզիայով նախատեսված աշխատանքներն իրականացնող պատասխանատու անձի (անձանց) մասին լիցենզիայի ներդիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 5-ի, որը հանդիսանում է լիցենզիայի անբաժանելի մասը:

10. Կենտրոնական բանկի խորհուրդը մերժում է ներկայացված դիմումը, եթե՝

1) ներկայացված փաստաթղթերը թերի են, կեղծ և (կամ) հակասում են օրենքներին և այլ իրավական ակտերին,
2) լիցենզավորվող անձը կամ աշխատակիցը (աշխատակիցները) օրենքի (իրավաբանական անձի համար՝ նաև կանոնադրության) ուժով կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով իրավունք չունի զբաղվելու արտարժույթի առուվաճառքով,
3) աշխատակիցը (աշխատակիցները) չունի մասնագիտական որակավորման վկայական կամ սույն կանոնակարգի 21-րդ կետով սահմանված դեպքում չի ստացել որակավորման վկայական:
4) դրամարկղային տարածքը և տեխնիկական հագեցվածության պայմանները չեն համապատասխանում սույն կանոնակարգով սահմանված պահանջներին:

11. Այն դեպքում, երբ ներկայացված փաստաթղթերը թերի են, կեղծ և (կամ) հակասում են օրենքներին և այլ իրավական ակտերին, ապա լիցենզիա ստանալու դիմումը մերժվում է, եթե այդ մասին պատշաճ ձևով տեղեկացումը Կենտրոնական բանկի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում դիմումատուն չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր: Ընդ որում, Կենտրոնական բանկը ներկայացված փաստաթղթերի թերի և (կամ) օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող լինելու վերաբերյալ տեղեկացումն ուղարկում է փաստաթղթերը ստանալու օրվանից տասն աշխատանքային օրվա ընթացքում՝ նշելով թերի և (կամ) օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող բոլոր փաստաթղթերը: Եթե դիմումը քննելու ընթացքում դիմումատուն և (կամ) դրան կից փաստաթղթերում ներկայացված տեղեկությունները փոփոխվել են, ապա դիմումատուն ներկայացնում է նաև փոփոխված տեղեկությունները՝ մինչև Կենտրոնական բանկի կողմից դիմումը մերժելու կամ լիցենզիա տրամադրելու վերաբերյալ որոշման կայացումը: Սույն կետով նշված դեպքերում լիցենզիա ստանալու դիմումը Կենտրոնական բանկ ներկայացված է համարվում փոփոխված տեղեկությունները և (կամ) պահանջվող փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրը:

12. Դիմումը մերժելու դեպքում Կենտրոնական բանկի խորհրդի որոշման մեջ նշվում են դիմումի մերժման հիմքերը:

13. Օդանավակայանում, հյուրանոցում, երկաթուղային կայարանում, առևտրի կենտրոնում կամ խանութում կարող է արտարժույթի առուվաճառքի լիցենզիա ստանալ և արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնել միայն մեկ փոխանակման կետ: Բացառություն է կազմում այն դեպքը, երբ տվյալ տարածքում գործունեություն են ծավալում նշված փոխանակման կետի մասնաճյուղերը:

14. Փոխանակման կետի տարածքի վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման և հավատարմագրային կառավարման պայմանագիրը լուծվելու դեպքում միայն տվյալ տարածքում կարող է լիցենզիա ստանալ և գործունեություն ծավալել այլ փոխանակման կետ:

15. Մինչև գործունեությունը սկսելը՝ լիցենզիա ստացած փոխանակման կետը Կենտրոնական բանկ է ներկայացնում ծրագիր պարունակող համակարգչային սարքավորման գործարկման համաձայնություն ստանալու դիմում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի «Արտարժույթի առուվաճառքի և արտարժույթի դիլերային առուվաճառքի գործունեություն իրականացնող անձանց կողմից կիրառվող հսկիչ-դրամարկղային մեքենաներին և համակարգչային սարքավորումներին ներկայացվող պահանջները, գրանցման կարգը և շահագործման կանոնները հաստատելու մասին» թիվ 90-Ն որոշմամբ հաստատված «Արտարժույթի առուվաճառքի և արտարժույթի դիլերային առուվաճառքի գործունեություն իրականացնող անձանց կողմից կիրառվող հսկիչ-դրամարկղային մեքենաների և ծրագիր պարունակող համակարգչային սարքավորումների գրանցման կարգը և շահագործման կանոնները» հավելված 2-ի 5-րդ կետի:

16. Կենտրոնական բանկի կողմից տրամադրված լիցենզիան ստանալուց հետո փոխանակման կետը գործունեությունը փաստացի սկսելու դեպքում նախօրոք Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի հայտարարություն՝ փոխանակման կետի գործունեությունը սկսելու մասին՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 12-ի:

ԳԼՈՒԽ 4. ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

17. Փոխանակման կետի աշխատակիցը պետք է ունենա Կենտրոնական բանկի կողմից տրված մասնագիտական որակավորման վկայական (այսուհետ՝ որակավորման վկայական), ընդ որում, փոխանակման կետերի այն աշխատակիցները, ովքեր չունեն որակավորման վկայական և արտարժույթի առուվաճառքի գործառնություններ են իրականացնում որպես անհատ ձեռնարկատեր՝ իրենց անունով տրամադրված լիցենզիայի կամ որպես աշխատակից լիցենզիային կից ներդիրում ընդգրկված լինելու հիման վրա, ինչպես նաև նախկինում տրամադրված անժամկետ մասնագիտական որակավորման վկայականներ ունեցող աշխատակիցները պետք է հանձնեն մասնագիտական որակավորման քննություն և ստանան նոր վկայական:

18. Փոխանակման կետի աշխատակիցը որակավորման ստուգումն անցնում է որակավորող կազմակերպություններում, որոնց ցանկը հրապարակվում է Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում:

19. Կենտրոնական բանկի կողմից որակավորման վկայականը տրվում է սույն կանոնակարգի 21-րդ կետով սահմանված դեպքում՝ Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցած կամ որակավորող կազմակերպության կողմից որակավորման վկայական ստացած անձին:

20. Անձը կարող է դիմել Կենտրոնական բանկ որակավորման վկայական ստանալու նպատակով միայն այն դեպքում, երբ ներկայացվել է փոխանակման կետի ներդիրում ընդգրկվելու համար փոխանակման կետի, մասնաճյուղի լիցենզավորման փուլում կամ ներդիրի վերաձևակերպման ժամանակ, ինչպես նաև սույն կանոնակարգի 33-րդ կետով սահմանված դեպքում:

21. Այն դեպքում, երբ որևէ կազմակերպություն Կենտրոնական բանկի կողմից չի ընտրվել որպես որակավորող կազմակերպություն և (կամ) որակավորող կազմակերպության գործունեությունը դադարեցվել է, որակավորման ստուգման անցկացման գործընթացը կազմակերպվում է Կենտրոնական բանկում՝ սույն կանոնակարգով սահմանված ընթացակարգի համաձայն: Սույն կետով նախատեսված դեպքում սույն կանոնակարգի 4-րդ, 5-րդ, 6-րդ կամ 37-րդ կետերում նշված փաստաթղթերը ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպվում է որակավորման վկայական չունեցող աշխատակցի (այսուհետ՝ թեկնածու) մասնագիտական որակավորման ստուգման քննության անցկացումը Կենտրոնական բանկում:

22. Որակավորված անձանց վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է Կենտրոնական բանկի կամ որակավորող կազմակերպության ինտերնետային կայքում՝ «Որակավորման վկայական ունեցող անձինք» ցուցակում՝ քննությունը հանձնելու օրվանից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում հղում է տրվում որակավորող կազմակերպության կայքէջին:

23. Որակավորող կազմակերպության կամ Կենտրոնական բանկի կողմից որակավորման վկայական ստանալու համար փոխանակման կետի աշխատակիցը պետք է գիտելիքներ ունենա հետևյալ թեմաների վերաբերյալ՝

1) «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենք,
2) «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10,
3) «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք (Կենտրոնական բանկի կողմից փոխանակման կետերի նկատմամբ իրականացվող ստուգումների և վերահսկողության, ինչպես նաև փոխանակման կետերին պատասխանատվության ենթարկելու կարգն ու պայմանները),
4) «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք (պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների էությունը, դրանց վերաբերյալ հաշվետվությունների տրամադրման կարգը),
5) «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենք (Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի օգտին կատարվող պարտադիր վճարների չափը և վճարման կարգը),
6) Փոխանակման կետերի կողմից իրականացվող արժութային գործառնությունների հետ կապված իրավիճակային խնդիրներ:

24. Կենտրոնական բանկում թեկնածուների մասնագիտական համապատասխանության քննությունը (այսուհետ՝ քննություն) անցկացվում է համակարգչային ծրագրով՝ թեստային եղանակով: Թեստը հարցեր պարունակող փաստաթուղթ է, որը մշակվում է սույն կանոնակարգի 23-րդ կետով սահմանված թեմաների շրջանակներում:

25. Կենտրոնական բանկի կողմից կազմված թեստը պարունակում է 30 հարց: Թեստին պատասխանելու համար տրվում է 45 րոպե ժամանակ: Թեստի հարցերից յուրաքանչյուրը պարունակում է մի քանի պա-

տասխան, որոնցից միայն մեկն է միանշանակ ճիշտ: Թեստի հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ, իսկ սխալ պատասխանը՝ զրո միավոր: Սխալ պատասխաններ են համարվում միանշանակ սխալ և ոչ միանշանակ ճիշտ պատասխան նշելը, մեկից ավելի պատասխաններ նշելը կամ որևէ պատասխան չնշելը:

26. Կենտրոնական բանկում անցկացվող քննության թեստերի պատասխանների գնահատումն ու ամփոփումը կատարվում է հետևյալ կերպ. եթե թեկնածուն հավաքել է՝

1) մինչև 25 միավոր, ապա թեկնածուն համարվում է բացասական արդյունք ապահոված,
2) 25 և ավելի միավոր, ապա թեկնածուն համարվում է դրական արդյունք ապահոված:

27. Թեկնածուները Կենտրոնական բանկում քննությանը մասնակցում են՝ քննության օրը ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ և դրա պատճենը,
2) պետական տուրքի վճարման անդորրագիր,
3) հանրային ծառայությունների համարանիշ (ոչ ռեզիդենտների համար՝ առկայության դեպքում):

28. Կենտրոնական բանկում քննությունն անցկացվում է հետևյալ ընթացակարգով՝

1) Քննությունն անցկացվում է առանձնացված սենյակում, որը վերահսկվում է տեսախցիկների միջոցով:
2) Թեկնածուին թույլատրվում է մուտք գործել քննության անցկացման սենյակ անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի ներկայացման դեպքում՝ ըստ նախապես կազմված ցուցակի նստելով համապատասխան համակարգչի մոտ: Ուշացած թեկնածուների համար քննության տևողությունը չի երկարաձգվում:
3) Թեկնածուներին տրվում են բացատրություններ քննության անցկացման հետ կապված տեխնիկական հարցերի վերաբերյալ:
4) Քննության սկիզբը հայտարարելուց հետո թեկնածուն ծանոթանում է առաջադրանքներին և յուրաքանչյուր հարցի (խնդրի) ենթադրյալ պատասխաններից ընտրում է մեկ (իր կարծիքով՝ նշվածներից միանշանակ ճիշտ) պատասխան:
5) Քննության ժամանակ թեկնածուին արգելվում է օգտվել տպագիր, մեքենագիր, ձեռագիր նյութերից, էլեկտրոնային սարքերից (բացառությամբ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված էլեկտրոնային հաշվիչների), ինչպես նաև՝ աղմկել, հուշել, խոսել, հարցեր տալ ներկա գտնվող անձանց, դուրս գալ սենյակից: Եթե թեկնածուն ցանկանում է լքել սենյակը, նրա աշխատանքը համարվում է դադարեցված: Նշված պահանջներից յուրաքանչյուրի չկատարման դեպքում թեկնածուն զրկվում է քննության հետագա ընթացքին մասնակցելու իրավունքից և համարվում է բացասական արդյունք ապահոված:
6) Աշխատանքն ավարտելուց, ինչպես նաև՝ քննության առաջադրանքները կատարելու համար սահմանված ժամանակը սպառվելուց հետո թեկնածուին ներկայացվում է իր հանձնած թեստի արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը (երկու օրինակից), որտեղ արտացոլվում են թեկնածուի միավորները՝ տոկոսային արտահայտությամբ: Հաշվետվությունները ստորագրվում են թեկնածուի կողմից, որոնցից մեկ օրինակը մնում է Կենտրոնական բանկում, մյուսը տրվում է թեկնածուին:

29. Կենտրոնական բանկում անցկացվող քննության թեստերի հարցերի պատասխանների արդյունքները (ելնելով համակարգչային տվյալներից) հաստատում է Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով), որի դրական եզրակացության հիման վրա թեկնածուին տրվում է որակավորման վկայական:

30. Կենտրոնական բանկում որակավորված թեկնածուները կարող են բողոքարկել անցկացված քննության արդյունքները քննության անցկացման օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր դիմում ներկայացնելով Կենտրոնական բանկ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 6-ի, կամ դիմումը լրացնելով Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի համապատասխան էջում: Դիմումը ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը տեղեկացնում է բողոքարկողին բողոքարկման արդյունքների վերաբերյալ:

31. Կենտրոնական բանկի կողմից որակավորման վկայականը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 7-ի, տրվում է որակավորման ստուգում անցած թեկնածուին կամ Որակավորող կազմակերպության կողմից տրված որակավորման վկայական ներկայացրած անձին էլեկտրոնային եղանակով՝ ուղարկվելով թեկնածուի կողմից ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեին քննությունը հանձնելու օրվանից կամ սույն կանոնակարգի 9-րդ կետով սահմանված կարգով փոխանակման կետի, մասնաճյուղի լիցենզիայի տրման կամ 42-րդ կետով սահմանված կարգով լիցենզիայի ներդիրի վերաձևակերպման օրվանից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

32. Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցած անձին որակավորման վկայականը տրվում է երեք տարի ժամկետով՝ հաշված դրա ստորագրման պահից: Որակավորող կազմակերպությունից ստացած որակավորման վկայականի հիման վրա Կենտրոնական բանկի կողմից որակավորման վկայականը տրվում է մինչև հիմք հանդիսացող որակավորման վկայականի վավերականության ավարտը:

33. Գործող փոխանակման կետի ներդիրում ընդգրկված աշխատակցի որակավորման վկայականի ժամկետը լրանալու դեպքում փոխանակման կետը Կենտրոնական բանկ է ներկայացնում աշխատակցի որակավորման վկայականի ստացման համար դիմում՝ կցելով աշխատակցի որակավորումը հավաստող փաստաթուղթը: Կենտրոնական բանկը որակավորումը հավաստող փաստաթղթի հիման վրա փոխանակման կետի աշխատակցին տրամադրում է նոր որակավորման վկայական՝ դիմումը ներկայացնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ սույն կանոնակարգով սահմանված կարգով:

34. Կենտրոնական բանկում որակավորված անձինք որակավորման վկայականները 10 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստով չստանալու կամ էլեկտրոնային փոստի խափանման դեպքում կարող են այդ մասին հայտնել Կենտրոնական բանկին՝ ներկայացնելով գրավոր դիմում Կենտրոնական բանկի նախագահի անունով՝ նշելով այն էլեկտրոնային փոստի հասցեն, որով նա ցանկանում է ստանալ որակավորման վկայականը: Դիմումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում որակավորման վկայականն էլեկտրոնային տարբերակով կրկին տրամադրվում է որակավորված անձին՝ ուղարկվելով նրա դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեին:

ԳԼՈՒԽ 5. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՎԵՐԱԶԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՆԱԽԿԻՆՈՒՄ ՆԵՐԴԻՐ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԵՐԻՆ ՆՈՐ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

35. Փոխանակման կետի գտնվելու վայրի փոփոխության, գտնվելու վայրի կամ գործունեության վայրի հասցեի անվանափոխության (անհատ ձեռնարկատեր փոխանակման կետերի դեպքում՝ բնակության վայրի փոփոխության կամ հասցեի անվանափոխության), վերակազմակերպման, նրա անվանման, ինչպես նաև՝ անհատ ձեռնարկատեր փոխանակման կետերի անձնագրի տվյալների փոփոխման դեպքում փոխանակման կետը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժի մեջ մտնելու օրվանից 15-օրյա ժամկետում Կենտրոնական բանկ ներկայացնել լիցենզիայի վերաձևակերպման դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 8-ի: Դիմումին կցվում են նշված փոփոխությունները հավաստող համապատասխան փաստաթղթերը, նոր անձնագրի (կամ անձը հաստատող այլ փաստաթղթի) պատճենը, ինչպես նաև հանրային ծառայությունների համարանիշը պարունակող փաստաթղթի պատճենը, լիցենզիայի վերաձևակերպման համար վճարված պետական տուրքի վճարման անդորրագիրը և վերաձևակերպման ենթակա լիցենզիայի բնօրինակը: Լիցենզիան վերաձևակերպելու դեպքում լիցենզիայի նոր ներդիր չի տրամադրվում, իսկ նախկին լիցենզիան փոխարինվում է միևնույն համարի նոր լիցենզիայով:

36. Սույն կանոնակարգի 35-րդ կետում նշված փաստաթղթերը ստանալու պահից 30-օրյա ժամկետում Կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է կայացնում լիցենզիան վերաձևակերպելու մասին կամ սույն կանոնակարգի 10-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքերում մերժում է ներկայացված դիմումը:

37. Փոխանակման կետի աշխատակցի (աշխատակիցների) և (կամ) աշխատակցի (աշխատակիցների) անձնագրի տվյալների փոփոխության (եթե տվյալ ներդիրի վրա նշված են աշխատակցի (աշխատակիցների) անձնագրի տվյալները) կամ փոխանակման կետի անվանափոխության դեպքում փոխանակման կետը պարտավոր է լիցենզիայի ներդիրի վերաձևակերպման համար Կենտրոնական բանկ ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1) լիցենզիայի ներդիրի տրամադրման կամ վերաձևակերպման դիմումը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 9-ի,
2) պետական տուրքի վճարման անդորրագիրը,
3) Կենտրոնական բանկի տրամադրած լիցենզիայի՝ վերաձևակերպման ենթակա ներդիրի բնօրինակը,
4) աշխատակցի անձնագրի տվյալների փոփոխության դեպքում՝ նոր անձնագրի (կամ անձը հաստատող այլ փաստաթղթի) պատճենը, ինչպես նաև հանրային ծառայությունների համարանիշը պարունակող փաստաթղթի պատճենը (իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքը),
5) փոխանակման կետի աշխատակցի փոփոխության դեպքում՝ փոխանակման կետի աշխատակցի (աշխատակիցների) կյանքին ու առողջությանը հասցված վնասներից ապահովագրության պայմանագրի պատճենը՝ յուրաքանչյուր աշխատակցի համար առնվազն տասը միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ ապահովագրական գումարի չափով, այն փոխանակման կետերի համար,

որտեղ անվտանգության ազդարարման համակարգի (այդ թվում՝ ոտնակի) փոխարեն առկա է սույն կանոնակարգի 72-րդ կետին կամ 76-րդ կետի 2-րդ ենթակետին համապատասխան ապահովագրություն,

6) փոխանակման կետի աշխատակցի փոփոխության դեպքում՝ աշխատակցի մասնագիտական որակավորման վկայականի պատճենը,

38. Լիցենզիայի ներդիրի վերաձևակերպման դիմումը Կենտրոնական բանկ է ներկայացվում փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից 15-օրյա ժամկետում:

39. Սույն կանոնակարգի 37-րդ կետով նախատեսված դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվանից 20 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը տրամադրում է լիցենզիայի ներդիրը կամ սույն կանոնակարգի 10-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում մերժում է ներկայացված դիմումը: Լիցենզիայի ներդիրի տրամադրումը կատարվում է Կենտրոնական բանկի կողմից:

40. Որակավորման վկայական ունեցող անձն անձնագրի տվյալների փոփոխության դեպքում (եթե տվյալ անձի որակավորման վկայականի վրա նշված են անձնագրի տվյալները) պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել դիմում՝ որակավորման վկայականը վերաձևակերպելու համար՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 10-ի՝ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից 15-օրյա ժամկետում: Դիմումին կից պետք է ներկայացվեն անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի և հանրային ծառայությունների համարանիշի (կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու տեղեկանքի) պատճենները, իսկ եթե տրվել է թղթային որակավորման վկայական՝ նաև վկայականի բնօրինակը: Սույն կետում նշված փաստաթղթերը ստանալու պահից 15 աշխատանքային օրվա ընթացքում նոր որակավորման վկայականը ուղարկվում է դիմում ներկայացրած անձի՝ դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեին:

41. Անհատ ձեռնարկատեր փոխանակման կետը, որը նախկինում չի ունեցել ներդիր, այն ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) լիցենզիայի ներդիրի տրամադրման կամ վերաձևակերպման դիմումը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 9-ի,
2) փոխանակման կետի աշխատակցի (աշխատակիցների) կյանքին ու առողջությանը հասցված վնասներից ապահովագրության պայմանագրի՝ յուրաքանչյուր աշխատակցի համար առնվազն տասը միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ ապահովագրական գումարի չափով պատճենը (այն փոխանակման կետերի համար, որոնց անվտանգության ազդարարման համակարգի (այդ թվում՝ ոտնակի) փոխարեն առկա է սույն կանոնակարգի 72-րդ կետին կամ 76-րդ կետի 2-րդ ենթակետին համապատասխան ապահովագրություն):

42. Սույն կանոնակարգի 41-րդ կետով նախատեսված դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվանից 20 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը տրամադրում է լիցենզիայի ներդիրը կամ սույն կանոնակարգի 10-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում մերժում է ներկայացված դիմումը: Լիցենզիայի ներդիրի տրամադրումը կատարվում է Կենտրոնական բանկի կողմից: Լիցենզիայի ներդիրի տրամադրման մերժումը կատարվում է Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ՝ Կենտրոնական բանկի Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

43. Եթե 35-րդ, 37-րդ, 40-րդ և 41-րդ կետերով պահանջվող փաստաթղթերը թերի են, կեղծ և (կամ) հակասում են օրենքներին և այլ իրավական ակտերին, ապա դիմումը մերժվում է, եթե այդ մասին պատշաճ ձևով տեղեկացումը Կենտրոնական բանկի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում դիմումատուն չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր: Ընդ որում, Կենտրոնական բանկը ներկայացված փաստաթղթերի թերի և (կամ) օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող լինելու վերաբերյալ տեղեկացումն ուղարկում է փաստաթղթերը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ նշելով թերի և (կամ) օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող բոլոր փաստաթղթերը: Եթե դիմումը քննելու ընթացքում դիմումում և (կամ) դրան կից փաստաթղթերում ներկայացված տեղեկությունները փոփոխվել են, ապա դիմումատուն ներկայացնում է նաև փոփոխված տեղեկությունները՝ մինչև Կենտրոնական բանկի կողմից դիմումը մերժելու կամ բավարարելու վերաբերյալ որոշման կայացումը: Սույն կետով նշված դեպքերում դիմումը Կենտրոնական բանկ ներկայացված է համարվում փոփոխված տեղեկությունները և (կամ) պահանջվող փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրը:

ԳԼՈՒԽ 6. ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԵՐԻ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐԻ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

44. Լիցենզիան և (կամ) լիցենզիայի ներդիրը օգտագործման համար ոչ պիտանի դառնալու (վնասվելու, պատռվելու, անընթեռնելի դառնալու և այլն), ոչնչանալու կամ կորելու դեպքում փոխանակման կետը դիմում է ներկայացնում Կենտրոնական բանկ՝ դրա կրկնօրինակը ստանալու և (կամ) կորստի մասին Կենտրոնական բանկի կայքում հրապարակելու համար: Դիմումին կցվում է լիցենզիայի և (կամ) լիցենզիայի ներդիրի բնօրինակը (օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում), լիցենզիայի և (կամ) լիցենզիայի ներդիրի կրկնօրինակը ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագիրը:

45. Եթե անձն ունի նախկինում տրամադրված գործող թղթային որակավորման վկայական, ապա որակավորման վկայականի՝ օգտագործման համար ոչ պիտանի դառնալու (վնասվելու, պատռվելու, անընթեռնելի դառնալու և այլն), ոչնչանալու կամ կորելու դեպքում անձը որակավորման վկայականի կրկնօրինակը ստանալու համար դիմում է ներկայացնում Կենտրոնական բանկ՝ նշելով այն էլեկտրոնային փոստի հասցեն, որով նա համաձայն կլինի ստանալ որակավորման վկայականի կրկնօրինակը: Դիմումին կցվում է որակավորման վկայականի բնօրինակը (օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում):

46. Կենտրոնական բանկը կորած կամ օգտագործման համար ոչ պիտանի դարձած լիցենզիայի և (կամ) լիցենզիայի ներդիրի կրկնօրինակը փոխանակման կետին է հանձնում, իսկ կորած կամ օգտագործման համար ոչ պիտանի դարձած որակավորման վկայականի կրկնօրինակը էլեկտրոնային տարբերակով որակավորված անձին է տրամադրում պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում:

47. Լիցենզիայի, լիցենզիայի ներդիրի և (կամ) որակավորման վկայականի կրկնօրինակի վերին աջ անկյունում կատարվում է «Կրկնօրինակ» նշագրումը:

48. Կորցրած լիցենզիան, լիցենզիայի ներդիրը գտնելու դեպքում փոխանակման կետը գտնված լիցենզիան և (կամ) լիցենզիայի ներդիրը վերադարձնում է Կենտրոնական բանկ:

49. Լիցենզիայի և (կամ) լիցենզիայի ներդիրի կրկնօրինակի կորստի կամ օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում լիցենզիայի և (կամ) լիցենզիայի ներդիրի նոր կրկնօրինակը տրվում է սույն գլխով սահմանված կարգով:

50. Սույն կանոնակարգով նախատեսված էլեկտրոնային փոստի հասցեի խափանման, կորստի և (կամ) էլեկտրոնային եղանակով տրամադրված որակավորման վկայականի ֆայլի կորստի կամ վնասման դեպքում անձը դիմում է ներկայացնում Կենտրոնական բանկ՝ նշելով էլեկտրոնային փոստի այն հասցեն, որով ինքը պատրաստ է ստանալու որակավորման վկայականը: Դիմումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում որակավորման վկայականն էլեկտրոնային տարբերակով կրկին տրամադրվում է որակավորված անձին՝ ուղարկվելով դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեին:

ԳԼՈՒԽ 7. ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

51. Փոխանակման կետի կամ դրա մասնաճյուղի գործունեությունը Կենտրոնական բանկի կողմից դադարեցվում է՝

1) արտարժույթի առուվաճառքի լիցենզիան անվավեր ճանաչելու դեպքում, կամ

2) արտարժույթի առուվաճառքի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու դեպքում:

52. Կենտրոնական բանկի խորհուրդը արտարժույթի առուվաճառքի լիցենզիան ճանաչում է անվավեր, եթե փոխանակման կետն արտարժույթի առուվաճառքի լիցենզիան ստացել է լիցենզավորման ընթացքում ներկայացված կեղծ փաստաթղթերի կամ տեղեկատվության հիման վրա: Սույն կանոնակարգի իմաստով կեղծ են համարվում այն տեղեկությունները կամ փաստաթղթերը, որոնց հիման վրա Կենտրոնական բանկը կայացրել է որոշում, որը չէր կայացնի, եթե այդ տեղեկությունները կամ փաստաթղթերը լինեին ճիշտ և (կամ) արժանահավատ:

53. Կենտրոնական բանկն ուժը կորցրած է ճանաչում փոխանակման կետին տրամադրած արտարժույթի առուվաճառքի լիցենզիան հետևյալ դեպքերում.

1) փոխանակման կետը Կենտրոնական բանկ ներկայացրած աշխատանքային գրաֆիկի համաձայն մեկ տարվա ընթացքում գործունեություն չի իրականացրել կամ մեկ տարվա ընթացքում անընդմեջ աշխատել է ընդամենը 1-ից մինչև 10 (ներառյալ) աշխատանքային օր, կամ
2) փոխանակման կետի կողմից չեն պահպանվել սույն կանոնակարգի 56-րդ և 60-րդ կետերի պահանջները, կամ
3) չեն պահպանվում այն պահանջները, որոնք փոխանակման կետի լիցենզավորման պահի դրությամբ դիտարկվել են որպես նվազագույն պահանջներ, դրանք են՝

3.1) տարածքի նկատմամբ սահմանված նվազագույն մակերեսի պահանջներ, մասնավորապես՝ խանութի ընդհանուր մակերես, խանութի սպասարկման սրահի մակերես, առևտրի կենտրոնի ընդհանուր մակերես ու հյուրանոցի մակերես,

3.2) կազմակերպչին ներկայացվող նվազագույն պահանջներ, մասնավորապես՝ արտարժույթի առուվաճառքի լիցենզիա ունեցող անձը պետք է լինի տվյալ խանութում առուվաճառք իրականացնող իրավաբանական անձը կամ տվյալ առևտրի կենտրոնում առևտրի իրականացման կազմակերպիչը կամ տվյալ հյուրանոցում հյուրանոցային ծառայություններ մատուցող իրավաբանական անձը, կամ

3.3) նախկինում լիցենզավորված փոխանակման կետի տեղակայման վայրի նշանակությանը ներկայացվող նվազագույն պահանջներ, մասնավորապես՝ գործող խանութի, առևտրի կենտրոնի կամ հյուրանոցի առկայություն, որտեղ տեղակայված է փոխանակման կետ,

4) փոխանակման կետի դիմումի հիման վրա (որին կցվում է նաև լիցենզիայի ու ներդիրի բնօրինակը (առկայության դեպքում))՝ դիմումը ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Ընդ որում՝ փոխանակման կետը կարող է լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ դիմումում նշել լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու նախընտրելի ամսաթիվը,

5) արտարժույթի առուվաճառքի լիցենզիա ունեցող անձը դատարանի որոշմամբ ճանաչվել է սնանկ,

6) դադարել է արտարժույթի առուվաճառքի լիցենզիա ունեցող անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը:

54. Սույն կանոնակարգի 51-րդ կետով սահմանված դեպքերում լիցենզիան անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշման պատճենը ստանալուց հետո (բացառությամբ 53-րդ կետի 4-րդ ենթակետում նկարագրված դեպքի) փոխանակման կետը 1 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է լիցենզիան վերադարձնել Կենտրոնական բանկ:

55. Սույն կանոնակարգի 53-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում փոխանակման կետը Կենտրոնական բանկ է ներկայացնում լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին դիմում կամ ժամանակավոր դադարեցնում է գործունեությունը՝ մինչև մեկ տարվա ընթացքում սույն կանոնակարգի 53-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված՝ լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու հիմքերի վերացումը:

ԳԼՈՒԽ 8. ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

56. Սույն կանոնակարգի ընդունումից հետո լիցենզավորվող փոխանակման կետերը և դրանց, ինչպես նաև գործող փոխանակման կետերի՝ սույն կանոնակարգի ընդունումից հետո լիցենզավորվող մասնաճյուղերը կարող են գտնվել և արտարժույթի առուվաճառքի գործառնություններ իրականացնել միայն սույն կետում թվարկված վայրերից որևէ մեկում՝

1) առնվազն հինգ հարյուր քառակուսի մետր ընդհանուր տարածքով խանութում, որից առնվազն երկու հարյուր քառակուսի մետր մակերեսը պետք է զբաղեցնի գործող առևտրի (սպասարկման) սրահը: Ընդ որում՝ խանութի ընդհանուր տարածքը տարբեր սենյակներում կամ հարկերում տեղակայված լինելու դեպքում՝ սենյակները և հարկերը պետք է հարակից լինեն և ունենան ներքին կապ (դուռ, աստիճանավանդակ, վերելակ և այլն): Խանութում առևտրի (սպասարկման) սրահ չհանդիսացող մնացած տարածքը դատարկ (չօգտագործվող) լինելու դեպքում փոխանակման կետը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել հայտարարագիր՝ նշված տարածքը խանութի գործունեության համար ապագայում օգտագործելու մասին,

2) առնվազն երկու հազար քառակուսի մետր տարածքով փակ (ոչ բացօթյա) առևտրի կենտրոնում,

3) առնվազն հազար քառակուսի մետր տարածքով հյուրանոցում,

4) օդանավակայանի տարածքում,

5) երկաթուղային կայարանի տարածքում:

57. Սույն կանոնակարգի 56-րդ կետով նախատեսված մակերեսների և տարածքների չափերը հաշվարկելիս հիմք են ընդունվում սույն կանոնակարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետում, 5-րդ կետի 3-րդ ենթակետում և 6-րդ կետի 2-րդ ենթակետում նշված վկայականների պատճեններում նշված չափերը: Ընդ որում՝ ինքնակամ շինությունների մակերեսը չի ներառվում մակերեսների և տարածքների չափերի հաշվարկի մեջ:

58. Առևտրի կենտրոնում և խանութում փոխանակման կետ կարող է բացվել միայն այն դեպքում, երբ առևտրի կենտրոնի կամ խանութի տարածքում կամ առևտրի կենտրոնի կամ խանութի տարածքից ցանկացած ուղղությամբ մինչև հարյուր մետր հեռավորության վրա առկա չէ արտարժույթի առուվաճառք

իրականացնելու թույլտվություն ունեցող այլ անձ՝ բանկ, վարկային կազմակերպություն, փոխանակման կետ կամ նշված անձանց մասնաճյուղ:

59. Առևտրի կենտրոնում կարող են գործել փոխանակման կետի մեկ և ավելի մասնաճյուղեր, ընդ որում, եթե առևտրի կենտրոնի տարածքը գերազանցում է երկու հազար քառակուսի մետրը, ապա տվյալ առևտրի կենտրոնի առևտրի կազմակերպիչը երկու հազար քառակուսի մետր տարածքը գերազանցող յուրաքանչյուր հազար քառակուսի մետր տարածքում կարող է փոխանակման կետի մասնաճյուղի լիցենզիա ստանալ:

60. Խանութում արտարժույթի առուվաճառքի լիցենզիա կարող է ստանալ և խանութում փոխանակման կետի գործունեություն կարող է իրականացնել միայն տվյալ խանութում առուվաճառք իրականացնող իրավաբանական անձը (բացառությամբ՝ սույն կանոնակարգի 63-րդ կետով նախատեսված դեպքերի): Ընդ որում, խանութում արտարժույթի առուվաճառքի լիցենզիա կարող է տրամադրվել միայն այն իրավաբանական անձին, որը հանդիսանում է տվյալ խանութի առնվազն հինգ հարյուր քառակուսի մետր տարածքի վրա (որից երկու հարյուր քառակուսի մետր՝ առևտրի սրահի տարածքի վրա) գործունեություն ծավալող միակ իրավաբանական անձը:

61. Առևտրի կենտրոնում արտարժույթի առուվաճառքի լիցենզիա կարող է ստանալ և առևտրի կենտրոնում փոխանակման կետի գործունեություն կարող է իրականացնել միայն առևտրի իրականացման կազմակերպիչը, հյուրանոցում՝ հյուրանոցային ծառայություններ մատուցող իրավաբանական անձը, իսկ երկաթուղային կայարանում և օդանավակայանում՝ երկաթուղային կայարանի և օդանավակայանի կազմակերպիչը կամ շահագործողը:

62. Մինչև սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելը լիցենզիա ստացած փոխանակման կետերի կողմից մասնաճյուղ բացելու դեպքում փոխանակման կետի մասնաճյուղի վրա տարածվում են սույն կանոնակարգի 56-րդ և 60-րդ կետերով սահմանված պահանջները:

63. Եթե խանութը բավարարում է 56-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պայմանները, սակայն գտնվում է սույն կանոնակարգի 56-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված առևտրի կենտրոնի տարածքում, ապա այդպիսի դեպքերում խանութում առուվաճառք իրականացնող իրավաբանական անձը չի կարող ստանալ փոխանակման կետի լիցենզիա և իրականացնել փոխանակման կետի գործունեություն:

64. Փոխանակման կետը պետք է ունենա սեփականության իրավունքով իրեն պատկանող կամ վարձակալությամբ (ենթավարձակալությամբ) կամ անհատույց օգտագործմամբ կամ հավատարմագրային կառավարմամբ վերցված տարածք: Տարածքի սեփականության իրավունքը, վարձակալության (ենթավարձակալության), անհատույց օգտագործման կամ հավատարմագրային կառավարման պայմանագրերից բխող իրավունքները պետք է գրանցված լինեն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:

65. Փոխանակման կետը, բացառությամբ հյուրանոցում գտնվողի, պետք է ունենա հարակից տարածքներից առանձնացված գործառնական դրամարկղ (այսուհետ՝ դրամարկղ):

66. Փոխանակման կետի դրամարկղը պետք է բավարարի հետևյալ պահանջները. ունենա առանձին մուտք՝ կողպվող դռնով, պայմանով, որ տվյալ տարածք դրսից հնարավոր է մուտք գործել միայն հիշյալ դռնով: Դրամարկղի դիմային մասի պատը պետք է ունենա առնվազն 1 մ բարձրություն, որից վերև պետք է տեղադրված լինի ապակե մասը: Ընդ որում՝ դիմային մասի պատի և ապակու բարձրությունը պետք է լինի առնվազն 2.5 մ, դրամարկղի դիմային ապակին պետք է տեղակայված լինի այնպես, որ բացառվի հաճախորդի և փոխանակման կետի աշխատակցի անմիջական շփումը, ինչպես նաև՝ ապահովի կանխիկ փողը (դրամական միջոցները) հաշվելու դիտողական հսկողությունը թե՛ հաճախորդի, թե՛ փոխանակման կետի աշխատակցի կողմից: Դրամարկղի դիմային մասի պատի և ապակու միացման տեղում պետք է տեղադրված լինի փողի (դրամական միջոցների) փոխանցման արկղ, ինչպես նաև սեղանիկ՝ հաճախորդի կողմից գումարի վերահաշվարկման համար: Փոխանակման կետում պետք է տեղադրված լինի աշխատակցի և հաճախորդի խոսակցությունները միմյանց լսելի դարձնող խոսափող:

67. Փոխանակման կետը պետք է ապահովված լինի սույն կանոնակարգի 98-րդ կետի պահանջներին համապատասխանող տեսագրման և ձայնագրման համակարգերով: Համակարգը պետք է ապահովի տեսագրված և ձայնագրված տեղեկատվության պահպանում համակարգչում կամ ցանկացած արտաքին կրիչի վրա, որը հնարավորություն կտա պարզորոշ դիտելու և լսելու կատարված տեսագրությունն ու ձայնագրությունը: Փոխանակման կետի դիմային ապակու վրա տեսանելի վայրում (հյուրանոցում գործող փոխանակման կետերի դեպքում՝ հաճախորդի համար տեսանելի վայրում) պետք է նաև փակցված լինի «Փոխանակման կետի տարածքը տեսագրվում և ձայնագրվում է» բովանդակությամբ հայտարարություն:

68. Փոխանակման կետում տեղադրված համակարգչային, ինչպես նաև տեսաձայնագրման համակարգերը հնարավորություն պետք է տան յուրաքանչյուր պահի արտահանելու և Կենտրոնական բանկ ներկայացնելու համապատասխան տեսաձայնագրությունները:

69. Կանխիկ գումարի պահպանման համար փոխանակման կետը պետք է ունենա դրամապահոց կամ կանխիկ փողի (դրամական միջոցների) ամենօրյա տեղափոխման, հանձնման ու պահպանման վերաբերյալ ինկասացիոն կազմակերպության (անհրաժեշտության դեպքում՝ նաև դրամապահոց ունեցող որևէ բանկի (բանկի մասնաճյուղի)) հետ կնքված համապատասխան պայմանագիր: Եթե փոխանակման կետի տարածքի անվտանգության ապահովումը տեղում (այն շինության տարածքում, որտեղ տեղակայված է փոխանակման կետը) շուրջօրյա ռեժիմով կամ ոչ աշխատանքային օրերին/ժամերին իրականացնում է զինված անվտանգության ծառայությունը, որի հետ կնքված է համապատասխան պայմանագիր, ապա դրամապահոցի կամ ինկասացիոն պայմանագրի առկայությունը պարտադիր չէ:

70. Դրամապահոցը պետք է առանձնացված լինի հարակից տարածքներից, ունենա մեկ կողպվող երկաթյա դուռ (առնվազն 10 սմ հաստությամբ), որը պետք է բացվի դրամարկղի կողմից: Դրամապահոցի պատերը պետք է լինեն երկաթբետոնից, որոնց հաստությունը պետք է լինի առնվազն 12 սմ: Դրամապահոցը պետք է լինի ուղղանկյուն զուգահեռանիստ և ունենա նվազագույնը 1մ^3 ներքին ծավալ:

71. Փոխանակման կետի դրամապահոցը կարող է տեղակայված լինել փոխանակման կետի գործառնական դրամարկղի տարածքից դուրս, բայց նույն խանութի/առևտրի կենտրոնի տարածքում: Եթե փոխանակման կետը և առևտրի կազմակերպիչը տարբեր անձինք են, ապա փոխանակման կետը դրամապահոցի տարածքի համար պետք է ունենա տվյալ տարածքի սեփականության, անհատույց օգտագործման, վարձակալության (ենթավարձակալության) կամ հավատարմագրային կառավարման պայմանագիր:

72. Փոխանակման կետի դրամապահոցը փոխանակման կետի գործառնական դրամարկղի տարածքից դուրս տեղակայված լինելու դեպքում փոխադրվող դրամական միջոցները պետք է առնվազն հինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ ապահովագրական գումարի չափով ապահովագրված լինեն փոխանակման կետի գործառնական դրամարկղի տարածքից դեպի փոխանակման կետի դրամապահոց և փոխանակման կետի դրամապահոցից դեպի փոխանակման կետի գործառնական դրամարկղ տանող ճանապարհին հնարավոր գողության, կողոպուտի և հարձակումների ռիսկերից, իսկ փոխանակման կետի աշխատակիցների կյանքն ու առողջությունը պետք է առնվազն տասը միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ ապահովագրական գումարի չափով ապահովագրված լինեն փոխանակման կետի գործառնական դրամարկղի տարածքից դեպի փոխանակման կետի դրամապահոց և փոխանակման կետի դրամապահոցից դեպի փոխանակման կետի գործառնական դրամարկղ տանող ճանապարհին անձի կյանքին ու առողջությանը հասցված վնասներից:

73. Եթե առևտրի կենտրոնում կամ խանութում տեղակայված են մեկից ավելի փոխանակման կետեր (փոխանակման կետ ու նշված փոխանակման կետի մասնաճյուղ(եր)), ապա նշված փոխանակման կետերը (փոխանակման կետերի մասնաճյուղ(եր)ը) իրենց դրամական միջոցները կարող են պահել միևնույն դրամապահոցում: Դրամապահոցը պետք է բավարարի սույն կանոնակարգի 70-րդ կետով սահմանված պահանջները, ինչպես նաև դրամապահոցում պետք է առանձնացված լինեն կողպվող մետաղյա դռներով հատուկ խցիկներ՝ ըստ փոխանակման կետերի լիցենզիաների: Առանձնացված յուրաքանչյուր խցիկի վրա պետք է նշված լինի փոխանակման կետի լիցենզիայի համարը: Ընդ որում՝ յուրաքանչյուր խցիկում առկա գումարը համարվում է նշված փոխանակման կետերի դրամարկղի մնացորդ: Նշված դրամապահոցում, բացի տվյալ փոխանակման կետ(եր)ի գումարներից, այլ գումարներ պահպանվել չեն կարող:

74. Այն դեպքում, երբ փոխանակման կետը գտնվում է հյուրանոցի տարածքում, որտեղ հյուրանոցի և փոխանակման կետի անվտանգությունն ապահովում է հյուրանոցի ներքին անվտանգության ծառայությունը, ինչպես նաև փոխանակման կետն ունի առնվազն հինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ ապահովագրական գումարի չափով դրամարկղում առկա դրամական միջոցների շուրջօրյա կամ ոչ աշխատանքային օրերին/ժամերին ապահովագրություն՝ գողության, կողոպուտի և հարձակումների ռիսկերից, ապա սույն կանոնակարգի 69-րդ կետով սահմանված պահանջները պարտադիր չեն: Նշված դեպքում պետք է առկա լինի պայմանագիր (կամ գրավոր հայտարարություն՝ տրված հյուրանոցի ներքին անվտանգության ծառայության կողմից) հյուրանոցի ներքին անվտանգության ծառայության կողմից փոխանակման կետի անվտանգությունն ապահովելու մասին:

75. Փոխանակման կետի դրամարկղը (առկայության դեպքում՝ նաև դրամապահոցն ու հաճախորդների սպասարկման տարածքը) պետք է սարքավորված լինի անվտանգության ազդարարման համակարգով, իսկ դրամարկղում գտնվող աշխատակցի աշխատասեղանի տակ պարտադիր պետք է տեղադրված լինի աշխատանքային ժամերին գործող ազդարարման ոտնակ: Անվտանգության ազդարարման ողջ համակարգը պետք է միացված լինի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության համապատասխան ստորաբաժանման հետ՝ հիմնավորված համապատասխան պայմանագրով: Փոխանակման կետը պետք է ունենա Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության համապատասխան ստորաբաժանման կողմից հաստատված՝ անվտանգության ազդարարման

համակարգի և ազդարարման ուղիղ կապի ոտնակի սարքին լինելու մասին համապատասխան փաստաթուղթ (շահագործման ակտ): Եթե փոխանակման կետն իրականացնում է ամենօրյա ինկասացիա, ապա անվտանգության ազդարարման համակարգի առկայությունը պարտադիր չէ գումարն ինկասացնելուց հետո:

76. Սույն կանոնակարգի 75-րդ կետով սահմանված պահանջները պարտադիր չեն, եթե.

1) փոխանակման կետի տարածքի անվտանգությունն աշխատանքային ժամերին կամ շուրջօրյա տեղում (այն շինության տարածքում, որտեղ տեղակայված է փոխանակման կետը) իրականացնում է զինված անվտանգության ծառայությունը, և սույնի վերաբերյալ առկա է համապատասխան պայմանագիր, կամ
2) փոխանակման կետն ունի առնվազն հինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ ապահովագրական գումարի չափով դրամարկղում առկա դրամական միջոցների ապահովագրություն՝ գողության, կողոպուտի և հարձակումների ռիսկերից, ինչպես նաև փոխանակման կետի աշխատակիցների կյանքին ու առողջությանը հասցված վնասներից ապահովագրություն՝ յուրաքանչյուր աշխատակցի համար առնվազն տասը միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ ապահովագրական գումարի չափով:

77. Եթե փոխանակման կետը գտնվում է հյուրանոցում, որտեղ հյուրանոցի ու փոխանակման կետի անվտանգությունն ապահովում է հյուրանոցի ներքին անվտանգության ծառայությունը, ապա սույն կանոնակարգի 75-րդ կետով սահմանված պահանջները պահպանելու փոխարեն փոխանակման կետում կարող է տեղադրված լինել միայն անվտանգության ազդարարման ոտնակ, որը պետք է միացված լինի հյուրանոցի ներքին անվտանգության ծառայությանը: Նշված դեպքում պետք է առկա լինի պայմանագիր (կամ գրավոր հայտարարություն՝ տրված հյուրանոցի ներքին անվտանգության ծառայության կողմից) հյուրանոցի ներքին անվտանգության ծառայության կողմից փոխանակման կետի անվտանգությունն ապահովելու մասին, որը պետք է նշում պարունակի նաև հյուրանոցի ներքին անվտանգության ծառայության կողմից փոխանակման կետի անվտանգության ապահովման շրջանակներում անվտանգության ազդարարման ոտնակի շահագործված լինելու փաստի վերաբերյալ:

78. Փոխանակման կետի դրամարկղը (առկայության դեպքում՝ նաև դրամապահոցն ու հաճախորդների սպասարկման տարածքը) պետք է սարքավորված լինի շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման համակարգով: Ընդ որում, շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման համակարգը պետք է տեղադրված լինի փոխանակման կետի ամբողջ տարածքում և միացված լինի Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման կենտրոնի «911» ծառայությանը՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով:

79. Արտարժույթի առուվաճառք իրականացնելու համար փոխանակման կետի տարածքը պետք է ունենա հետևյալ տեխնիկական հագեցվածությունը՝

1) չհրկիզվող պահարան,
2) դրամանիշերի իսկությունը ստուգող սարք,
3) դրամանիշերը հաշվելու սարք,
4) քաղաքային հեռախոս,
5) դրամարկղի դիմային մասի սեղանիկի վրա տեղադրված հաշվիչ մեքենա՝ հաճախորդների կողմից հաշվարկներ կատարելու համար,
6) արտարժույթի առուվաճառքի փոխարժեքներն արտացոլող վահանակ (վահանակներ),
7) համակարգչային սարքավորում և (կամ) հսկիչ-դրամարկղային մեքենա (համակարգչային սարքավորման հետ պարտադիր են նաև տպող սարք և անխափան սնուցման սարք):

80. Ընդ որում՝ սույն կանոնակարգի 79-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերում նշված իրերը պետք է լինեն սարքին վիճակում:

81. Կենտրոնական բանկը սահմանում է տարածքային և տեխնիկական հագեցվածության լրացուցիչ պայմաններ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 11-ի, որոնք փոխանակման կետերը կարող են կիրառել իրենց գործունեությունն առավել անվտանգ դարձնելու նպատակով: Հավելված 11-ով սահմանված տարածքային և տեխնիկական հագեցվածության լրացուցիչ պայմանները չեն փոխարինում սույն գլխով սահմանված՝ տարածքային և տեխնիկական հագեցվածության նկատմամբ նվազագույն պահանջներին:

82. Փոխանակման կետը կարող է իրականացնել տարածքի կամ տեխնիկական հագեցվածության պայմանների (այդ թվում՝ սույն կանոնակարգի 56-րդ կետում նշված տարածքներում փոխանակման կետի դրամարկղի դիրքի) փոփոխություն: Տարածքի կամ տեխնիկական հագեցվածության պայմանների փոփո-

խության աշխատանքների ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում փոխանակման կետն այդ մասին գրավոր տեղեկատվություն է ներկայացնում Կենտրոնական բանկ: Տեղեկատվությունը ստանալուց հետո Կենտրոնական բանկի համապատասխան ստորաբաժանումները մեկամսյա ժամկետում իրականացնում են այդ պայմանների փոփոխության ուսումնասիրություն և արդյունքների վերաբերյալ գրավոր տեղեկացնում փոխանակման կետին: Ընդ որում, եթե փոխանակման կետը կատարել է դրամարկղի դիրքի փոփոխություն, ապա փոխանակման կետը պետք է Կենտրոնական բանկ ներկայացնի նաև տարածքի փոփոխված հատակագիծը՝ հաստատված իրավասու մարմնի կամ համապատասխան լիցենզիա ունեցող մարմնի կողմից, որի վրա պետք է նշագրված լինեն փոխանակման կետի դրամարկղի գտնվելու վայրը և այն նվազագույն տարածքը, որը բավարարում է սույն կանոնակարգի 56-րդ կետով սահմանված պահանջները:

ԲԱԺԻՆ III. ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ: ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 9. ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

83. Փոխանակման կետը կարող է գործառնություններ իրականացնել միայն լիցենզավորված վայրում:

84. Փոխանակման կետի դրամարկղային տարածքում (բացառությամբ՝ հյուրանոցների տարածքներում գտնվողների) պետք է իրականացվի միայն լիցենզիայով նախատեսված գործունեություն:

85. Արտարժույթի առուվաճառքի գործառնություններ կարող են իրականացնել միայն համապատասխան որակավորման վկայական ունեցող և Կենտրոնական բանկի տրամադրած լիցենզիայի ներդիրում ընդգրկված աշխատակիցները, ինչպես նաև՝ նախկինում արտարժույթի առուվաճառք իրականացնելու լիցենզիա ստացած որակավորման վկայական ունեցող անհատ ձեռնարկատերերը:

86. Փոխանակման կետն արտարժույթի առուվաճառքի գործարքներ իրականացնելիս ինքնուրույն է սահմանում առուվաճառքի փոխարժեքները:

87. Եթե փոխանակման կետի փոխարժեքներն արտացոլող վահանակի վրա արտացոլված է տվյալ արժույթի փոխարժեքը, և եթե դրամարկղում առկա են պահանջվող գումարը և համապատասխան անվանական արժեքով դրամանիշեր, ապա փոխանակման կետը չի մերժում տվյալ գործարքի իրականացումը:

88. Փոխանակման կետը կարող է գործարք կատարել միայն փողի (դրամական միջոցների) փոխանցման արկղի միջոցով: Հաճախորդների սպասարկման տարածքի առկայության դեպքում գործարքը պետք է իրականացվի դեպի նշված տարածք նայող՝ փողի (դրամական միջոցների) փոխանցման արկղի միջոցով:

89. Փոխանակման կետը դրամարկղի ներսում հաճախորդի համար տեսանելի վայրում տեղակայված փոխարժեքներն արտացոլող վահանակի (վահանակների) վրա փակցնում է իր կողմից իրականացվող արտարժույթի առուվաճառքի գործառնությունների տեսակների ցանկը և փոխարժեքները: Փոխանակման կետը փոխարժեքներն արտացոլող վահանակը տեղադրում է միայն փոխանակման կետի դրամարկղում՝ բացառությամբ հյուրանոցներում գտնվող փոխանակման կետերի, որոնց փոխարժեքներն արտացոլող վահանակը տեղադրվում է սպասարկման սրահում: Փոխանակման կետի դրամարկղի ներսում, իսկ հյուրանոցում գտնվող փոխանակման կետի դեպքում՝ սպասարկման սրահում, փոխարժեքներն արտացոլող վահանակը տեղադրվում է այնպես, որպեսզի այն փակ տարածքից դուրս տեսանելի չլինի:

90. Դրամարկղից դուրս, իսկ հյուրանոցներում գտնվող փոխանակման կետերի դեպքում՝ սպասարկման սրահից դուրս վահանակ ունենալու դեպքում փոխանակման կետը վահանակի վրա կարող է նշել միայն «Տարադրամի փոխանակման կետ» արտահայտությունը (ցանկության դեպքում՝ նաև դրա օտարալեզու տարբերակը), լիցենզավորված անձի անվանումը, լիցենզիայի համարը, աշխատանքային օրերը և ժամերը:

91. Փոխանակման կետի դիմային մասի ապակու վրա (հյուրանոցում գործող փոխանակման կետի դեպքում՝ հաճախորդի համար տեսանելի վայրում) պետք է փակցված լինեն Կենտրոնական բանկի կողմից տրամադրված լիցենզիայի և լիցենզիայի ներդիրի բնօրինակը կամ պատճենը, ինչպես նաև՝ աշխատանքային օրերը և ժամերը:

92. Աշխատանքի ընթացքում փոխանակման կետի աշխատակիցները պարտավոր են ունենալ անձը հաստատող փաստաթուղթ և կրել լուսանկարով այցեքարտ, որտեղ պետք է նշված լինեն լիցենզավորված անձի անվանումը, աշխատակցի անունը, ազգանունը:

93. Աշխատանքային ժամերի ընթացքում փոխանակման կետի դրամարկղում չեն կարող գտնվել այլ անձինք՝ բացի լիցենզիայում կամ լիցենզիայի ներդիրում նշված անձանցից:

94. Դրամարկղի դուռն աշխատանքային օրվա ընթացքում պետք է լինի կողպված: Եթե փոխանակման կետն ունի հաճախորդների սպասարկման տարածք, ապա ինկասացիայի ընթացքում հաճախորդների սպասարկման սրահի դռների և պատուհանների փակ լինելը պարտադիր է:

95. Փոխանակման կետը պարտավոր է հաճախորդներին ապահովել շրջանառության համար պիտանի (ոչ հնամաշ) Հայաստանի Հանրապետության դրամանիշերով:

96. Փոխանակման կետը կարող է մատուցել նաև հետևյալ ծառայությունները՝ հնամաշ կամ վնասված դրամանիշերի փոխանակում պիտանի դրամանիշերով, բարձր անվանական արժեքի դրամանիշերի փոխանակում ցածր անվանական արժեքի դրամանիշերով և հակառակը: Եթե այդ ծառայությունները վճարովի են, ապա դրանց սակագները պետք է փակցված լինեն հաճախորդների համար տեսանելի վայրում:

97. Այն փոխանակման կետերը, որոնք չունեն սույն կանոնակարգով սահմանված դրամապահոց կամ իրենց տարածքի անվտանգության ապահովումն իրականացնելու մասին զինված անվտանգության ծառայության հետ կնքված համապատասխան պայմանագիր, յուրաքանչյուր աշխատանքային օրվա ավարտից հետո պարտավոր են դրամարկղում առկա մեկ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող գումարի մնացորդը հանձնել համապատասխան ինկասացիոն կազմակերպությանը: Ինկասացիան հիմնավորող փաստաթղթերը պետք է պահվեն փոխանակման կետում առնվազն 1 տարի ժամկետով:

98. Փոխանակման կետը պետք է սարքավորված լինի տեսագրման և ձայնագրման այնպիսի համակարգով, որը պետք է ապահովի ու փաստացի իրականացնի՝

1) փոխանակման կետի աշխատակցի և հաճախորդների միջև արտարժույթի փոխանակման գործընթացի տեսագրում ու ձայնագրում, մասնավորապես հաճախորդների կողմից փոխանակման կետի աշխատակցին դրամական միջոցների փոխանցում, փոխանակման կետի աշխատակցի կողմից դրամական միջոցների հաշվարկում, հաճախորդին անդորրագրի ու դրամական միջոցների փոխանցում: Տեսագրումը պետք է իրականացվի այնպես, որ հնարավորություն տա տեսագրելու փողի փոխանցման արկղը, նույնականացնելու փոխանակվող արժույթի տեսակներն ու հաճախորդին (այդ թվում՝ պարզորոշ երևա հաճախորդի դեմքը),
2) փոխանակման կետի ներքին և արտաքին տարածքների տեսագրում ու ձայնագրում, մասնավորապես դրամարկղի դռան և դիմային մասի (փողի փոխանցման արկղի հատված) մոտ փոխանակման կետի տարածքից դուրս կատարվող գործողությունները,
3) փոխանակման կետի դրամարկղի ներսում տեղի ունեցող գործողությունները, այդ թվում՝ աշխատակիցների գործողությունները,
4) տեսագրությունների ու ձայնագրությունների որակը պետք է հնարավորություն տա հստակ դիտելու և լսելու կատարված տեսագրություններն ու ձայնագրությունները:

99. Եթե փոխանակման կետը սույն կանոնակարգի 69-րդ ու 97-րդ կետերի համաձայն իրականացնում է դրամական միջոցների ինկասացում, ապա փոխանակման կետում սարքավորված տեսագրման և ձայնագրման համակարգը պետք է ապահովի և փաստացի իրականացնի փոխանակման կետի աշխատակցի կողմից ինկասատորին, ինչպես նաև ինկասատորի կողմից փոխանակման կետի աշխատակցին դրամական միջոցների (կամ պարկի) փոխանցման գործընթացի ամբողջական տեսագրում ու ձայնագրում:

100. Տեսագրված և ձայնագրված նյութերը պետք է պահպանվեն յուրաքանչյուր օրվա համար առանձին՝ համակարգչում կամ ցանկացած արտաքին կրիչի վրա՝ համարակալելով ըստ այդ օրվա ամսաթվի: Տեսաձայնագրություններում պետք է նշվեն տեսագրման ամսաթիվը և ժամը: Ընդ որում, արտարժույթի առուվաճառքի գործարքների ժամերը ֆիսկալ հաշվետվությունում (էլեկտրոնային գրանցումների մատյանում) և տեսաձայնագրություններում պետք է համապատասխանեն իրար: Տեսագրված և ձայնագրված նյութերը պետք է պահպանվեն փոխանակման կետում առնվազն 180 օր:

101. Փոխանակման կետերը պարտավոր են գործունեության վայրում ունենալ իրենց գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերը կամ պատճենները:

102. Սույն կանոնակարգի 4-րդ, 5-րդ, 6-րդ կետերում նշված պայմանագրերի ժամկետները լրանալուց հետո անմիջապես կնքվում են նոր պայմանագրեր և 15-օրյա ժամկետում Կենտրոնական բանկ են ներկայացվում դրանք կամ նախկին պայմանագրերի ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթղթերը, ինչպես նաև՝ անհատույց օգտագործման, վարձակալության (ենթավարձակալության) կամ հավատարմագրային կառավարման իրավունքի պետական գրանցման նոր վկայականի պատճենը:

103. Փոխանակման կետը պետք է գործի համաձայն իր կողմից Կենտրոնական բանկ ներկայացված աշխատանքային ռեժիմի: Փոխանակման կետը պարտավոր է հայտարարված աշխատանքային ռեժիմի յուրաքանչյուր փոփոխության դեպքում նախապես տեղեկացնել Կենտրոնական բանկին՝ ներկայացնելով հայտարարություն՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 13-ի:

104. Փոխանակման կետն իր գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու դեպքում նախապես պետք է տեղեկացնի Կենտրոնական բանկին՝ ներկայացնելով սույն կանոնակարգի Հավելված 14-ով սահմանված հայտարարությունը: Ընդ որում, եթե փոխանակման կետի գործունեությունը համաձայն ներկայացված Հավելված 14-ի դադարեցվել է անորոշ ժամկետով, ապա փոխանակման կետը կարող է գործունեությունը վերսկսել միայն Կենտրոնական բանկին նախապես տեղեկացնելուց հետո՝ լրացնելով սույն կանոնակարգի Հավելված 14-ի միայն 2-րդ մասը:

105. Համակարգչի, համակարգչային ծրագրի, տպող սարքի, հսկիչ-դրամարկղային մեքենայի (եթե կիրառվում է այդպիսին), սույն կանոնակարգի 98-րդ կետով սահմանված տեսագրման և ձայնագրման համակարգերի խափանման կամ էլեկտրասնուցման անջատման դեպքում փոխանակման կետը պարտավոր է անմիջապես դադարեցնել գործունեությունը՝ այդ մասին տեղեկացնելով Կենտրոնական բանկին՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 14-ի (առանց նշելու գործունեությունը դադարեցնելու պատճառը):

106. Կենտրոնական բանկի կողմից փոխանակման կետերում տեղադրված համակարգչային ծրագրի խափանման դեպքում (եթե անհրաժեշտություն է առաջացել Կենտրոնական բանկի համապատասխան մասնագետի այցը) Կենտրոնական բանկ է ներկայացվում սույն կանոնակարգի Հավելված 15-ով սահմանված դիմումը:

107. Սույն կանոնակարգի 16-րդ, 103-րդ, 104-րդ և 105-րդ կետերում սահմանված հայտարարությունները պետք է Կենտրոնական բանկ ներկայացվեն Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի միջոցով կամ էլեկտրոնային փոստով, իսկ նշված ձևերով ներկայացման անհնարինության դեպքում՝ թղթային տարբերակով: Էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկատվություն ներկայացնելու դեպքում ներկայացման ժամանակահատված է սահմանվում Կենտրոնական բանկի էլեկտրոնային փոստի սերվերում նշված տեղեկատվության գրանցման ժամանակահատվածը:

108. Աշխատանքային օրվա ցանկացած պահի՝ փոխանակման կետի դրամարկղում չի կարող լինել մեկ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամից և (կամ) Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով դրան համարժեք առաջին խմբի մեջ մտնող արտարժույթից, ինչպես նաև ռուսական ռուբլուց ու վրացական լարիից պակաս գումար: Փոխանակման կետում առկա գումարը դրամարկղում առկա ամբողջ գումարի, դրամապահոցի մնացորդի ու ինկասացված գումարների հանրագումարն է: Փոխանակման կետում առկա գումարի հաշվարկում չեն ներառվում ներգրավված փոխառությունները: Փոխառություն ներգրավելու դեպքում փոխանակման կետը պետք է ունենա փոխառության ներգրավման պայմանագիր: Ըստ էության, եթե օրվա ավարտին իրականացվում է փոխառության վերադարձ կամ գումարի ելքագրում, ապա դրամապահոցի մնացորդը գիշերվա ընթացքում կամ ինկասացված գումարը չպետք է պակաս լինի մեկ միլիոն ՀՀ դրամից և (կամ) Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով դրան համարժեք առաջին խմբի մեջ մտնող արտարժույթից, ինչպես նաև՝ ռուսական ռուբլուց ու վրացական լարիից: Բացառություն է կազմում միայն այն դեպքը, երբ փոխանակման կետը ժամանակավոր դադարեցնում է իր գործունեությունը, որի ժամանակ ամբողջ գումարը կարող է ելքագրվել:

109. Փոխանակման կետի դրամարկղի դիմային ապակու վրա՝ հաճախորդի համար տեսանելի վայրում (հյուրանոցում գործող փոխանակման կետի դեպքում՝ հաճախորդի համար տեսանելի վայրում), ընթեռնելի տառերով և թվերով պետք է փակցված լինի տեղեկատվություն այն մասին, որ բողոքների և առաջարկությունների դեպքում հաճախորդները կարող են դիմել Կենտրոնական բանկ: Նշված հայտարարության մեջ պետք է նշվեն փոխանակման կետերի վերահսկողության համար Կենտրոնական բանկի պատասխանատու ստորաբաժանման հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն:

110. Կենտրոնական բանկի վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանումը փոխանակման կետի գործունեության պարզաբանման և մեկնաբանման կարիք ունեցող հարցադրումների վերաբերյալ, ինչպես նաև առանձին վերահսկողական նպատակներից ելնելով՝ փոխանակման կետերից կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ (այդ թվում՝ տեսագրություններ ու ձայնագրություններ)՝ ներկայացնելով ծանուցում, որը ստորագրվում է Կենտրոնական բանկի վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կամ նրան փոխարինող անձի կողմից: Փոխանակման կետը ծանուցումը ստանալուց հետո ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում (եթե ծանուցման մեջ այլ ժամկետ նշված չէ) ներկայացնում է ծանուցմամբ պահանջվող պարզաբանումները և (կամ) այլ տեղեկությունները: Ծանուցմամբ փոխանակման կետի լիազոր ներկայացուցիչը կարող է հրավիրվել Կենտրոնական բանկի վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանում՝ պարզաբանումներ տալու համար: Փոխանակման կետում իրականացված ստուգման արդյունքներով, ինչպես նաև ծանուցմամբ կարող է պահանջվել Կենտրոնական բանկ ներկայացնել սույն կանոնակարգի 98-րդ կետով սահմանված տեսագրություններն ու ձայնագրությունները: Նշված դեպքերում փոխանակ-

ման կետը սահմանված ժամկետում պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել պահանջվող տեսագրություններն ու ձայնագրությունները, որոնք պետք է լինեն MPEG կամ AVI ընդլայնումով (ֆորմատներով):

111. Ծանուցման արդյունքում տրամադրված տեղեկությունները պետք է լինեն ամբողջական և արժանահավատ:

112. Փոխանակման կետի կողմից ԿԲ ներկայացվող ցանկացած գրության, դիմումի կամ տեղեկանքի վերին ձախ մասում պետք է պարունակվի նշում՝ փոխանակման կետի անվանման, լիցենզիայի համարի ու հասցեի մասին:

ԳԼՈՒԽ 10. ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

113. Փոխանակման կետն իր գործարքները պետք է իրականացնի համապատասխան ծրագրով ապահովված և սահմանված կարգով գրանցված համակարգչային սարքավորման կամ հսկիչ-դրամարկղային մեքենայի միջոցով՝ պահպանելով դրանց օգտագործման ու շահագործման համար սահմանված կանոնները:

114. Փոխանակման կետի իրականացրած բոլոր գործառնությունները պարտադիր հաշվառվում են նրանց ֆիսկալային հաշվետվությունում (այսուհետ՝ էլեկտրոնային գրանցումների մատյան)՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 17-ի: Դրանք են՝

1) արտարժույթի առուվաճառքի գործարքները,
2) փոխանակման կետի սեփականատիրոջ կողմից ավելացված կամ պակասեցված գումարները (շրջանառության միջոցների ավելացում կամ պակասեցում),
3) փոխանակման կետերի գործունեության համար անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական բյուջե վճարվող գումարները, ինչպես նաև՝ ստացված վարկերը (փոխառությունները և այլն),
4) ինկասացիոն կազմակերպություններին տրամադրված և վերջիններից հետ ստացված միջոցները:

115. Փոխանակման կետը պարտավոր է հաճախորդին տրամադրել արտարժույթի առուվաճառքի յուրաքանչյուր գործարքի կատարման վերաբերյալ անդորրագիր, որն առնվազն պետք է պարունակի սույն կանոնակարգի Հավելված 16-ով սահմանված տեղեկատվությունը: Անդորրագրի օրինակը պետք է ստորագրվի աշխատակցի կողմից և հաճախորդին տրամադրվի նախքան վաճառված կանխիկի տրամադրումը կամ առնվազն կանխիկի հետ միաժամանակ: Փոխանակման կետը պարտավոր է հաճախորդին տրամադրել հաճախորդի հետ իրականացված գործարքի տվյալներին (գործարքի օր, ժամ, ծավալ և փոխարժեք) համապատասխանող անդորրագիր, հակառակ դեպքում անդորրագիրը համարվում է չտրամադրված:

116. Արտարժույթի առուվաճառքի մեկանգամյա գործարքի գումարը (այդ թվում՝ մեկ անձի կողմից տարբեր արտարժույթներով իրականացվող մեկանգամյա գործարքների հանրագումարը՝ դրամային արտահայտությամբ) մեկ հարյուր հազար դրամը գերազանցելու դեպքում հաճախորդից պահանջվում է անձը հաստատող փաստաթուղթ և անդորրագրի վրա լրացվում են հաճախորդի անունը, ազգանունը, անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները, ինչպես նաև այն ստորագրվում է հաճախորդի կողմից:

117. Փոխանակման կետի կողմից արտարժույթի վաճառքի մեկանգամյա գործարքի գումարը (այդ թվում՝ մեկ անձի հետ տարբեր արտարժույթներով իրականացվող մեկանգամյա արտարժույթի վաճառքի գործարքների հանրագումարը՝ դրամային արտահայտությամբ) չորս հարյուր հազար դրամը գերազանցելու դեպքում այդ գործարքների վերաբերյալ փոխանակման կետը կազմում և Կենտրոնական բանկի վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման պահանջով Կենտրոնական բանկ է ներկայացնում օրական հաշվետվություն՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 19-ի: Փոխանակման կետը պարտավոր է սույն կետով սահմանված յուրաքանչյուր գործարքի դեպքում հաճախորդի անձը հաստատող փաստաթղթի պատճենը, ինչպես նաև սույն կետով սահմանված օրական հաշվետվությունները պահպանել առնվազն 1 տարի:

118. Սույն կանոնակարգի 116-րդ և 117-րդ կետերով սահմանված պահանջներից խուսափելու կամ դրանք չկատարելու նպատակով չի թույլատրվում արժութային գործարքը բաժանել երկու կամ ավելի մասերի: Արժութային վերահսկողություն իրականացնելու ընթացքում բաժանված գործարքները կարող են դիտարկվել որպես մեկ գործարք:

119. Փոխանակման կետերին արգելվում է առանց հաճախորդների փաստացի ներկայության իրականացնել գործարքներ՝ գրանցելով դրանք ֆիսկալային հաշվետվություններում: Նշված դեպքերը դիտարկվում են որպես գործարքներ, որոնց դեպքում փաստացի չեն պահպանվում սույն կանոնակարգի 115-րդ կետով սահմանված պահանջները:

120. Փոխանակման կետի աշխատակցի կամ ղեկավարի կողմից իր անձնական գումարներով փոխանակման գործարքներ իրականացնելու դեպքում անդորրագրի վրա լրացվում են աշխատակցի կամ ղեկավարի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները՝ անկախ գումարի մեծությունից. ընդ որում՝ փոխանակման կետի աշխատակցի կամ ղեկավարի կողմից մեկ օրվա ընթացքում տարբեր արժույթներով իրականացված գործարքների հանրագումարը չորս հարյուր հազար դրամը գերազանցելու դեպքում այդ գործարքները ներառվում են սույն կանոնակարգի 117-րդ կետով սահմանված օրական հաշվետվության մեջ:

121. Փոխանակման կետի աշխատանքն ապահովող կիրառական ծրագրային համակարգում (այսուհետ՝ Ծրագիր) ելքի կամ մուտքի գործարք գրանցելու դեպքում «Նպատակ» դաշտում կատարվում են հետևյալ գրանցումները.

1) սույն կանոնակարգի 114-րդ կետի 2-րդ ենթակետի դեպքում նշվում է համապատասխանաբար «Մուտք» կամ «Ելք»,
2) սույն կանոնակարգի 114-րդ կետի 3-րդ ենթակետի դեպքում նշվում է՝ «Ելք-ծախս» կամ «Մուտք-փոխառության ներգրավում» կամ «Ելք-փոխառության վերադարձ»,
3) սույն կանոնակարգի 114-րդ կետի 4-րդ ենթակետի դեպքում նշվում է՝ «Ելք-ինկասացիա» կամ «Մուտք-ինկասացիա»:

122. Եթե լիցենզավորված անձը արտարժույթի առուվաճառքից բացի իրականացնում է նաև սույն կանոնակարգով իրեն վերապահված այլ գործունեություն, ապա արտարժույթի առուվաճառքի գծով պետք է կատարվի առանձին հաշվառում:

123. Փոխանակման կետերի դրամարկղի մնացորդը պետք է համապատասխանի էլեկտրոնային գրանցումների մատյանի տվյալներին: Ինչպես աշխատանքային ժամերին, այնպես էլ աշխատանքային ժամերից հետո փոխանակման կետի ամբողջ տարածքում առկա փողը (դրամական միջոցները) համարվում է դրամարկղի մնացորդ:

124. Փոխանակման կետի աշխատակիցը աշխատանքային օրվա ավարտից հետո Ծրագրի միջոցով կատարում է դրանում առկա տեղեկատվության կրկնօրինակում այլ արտաքին կրիչների վրա (մագնիսական սկավառակ, լազերային սկավառակ կամ այլ), որը պետք է պահպանվի մինչև հաջորդ կրկնօրինակումը:

125. Եթե փոխանակման կետը տեղադրել է հսկիչ-դրամարկղային մեքենա, ապա նա պետք է թղթային եղանակով վարի գրանցումների մատյան, որի էջերը կարվում և համարակալվում են փոխանակման կետի կողմից և հաստատվում Կենտրոնական բանկի կողմից: Գրանցումների մատյանը թղթային եղանակով վարելու դեպքում փոխանակման կետը պետք է յուրաքանչյուր գործարք իր կատարման պահին հաշվառի գրանցումների մատյանում: Գրանցումների մատյանում պետք է արտացոլվեն սույն կանոնակարգի 114-րդ կետում նշված բոլոր գործարքները: Գրանցումների մատյանները փոխանակման կետի կողմից ամբողջովին լրացվելուց հետո պահպանվում են առնվազն 3 տարի:

126. Փոխանակման կետերը պարտավոր են մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող շաբաթվա երրորդ աշխատանքային օրը (ներառյալ) Կենտրոնական բանկ ներկայացնել նախորդ շաբաթվա գործարքների ծավալների ու ձևավորված փոխարժեքների մասին արտարժույթի առուվաճառքի վերաբերյալ հաշվետվություն՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 18-ի՝ ըստ շաբաթվա օրերի: Սույն կանոնակարգի իմաստով հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր շաբաթվա երկուշաբթիից մինչև կիրակի ընկած ժամանակահատվածը, ընդ որում, հաշվետվության մեջ համապատասխան սյուներում նշվում են հաշվետու ժամանակաշրջանի սկզբի և վերջին օրերի ամսաթվերը:

127. Փոխանակման կետերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվետվություններ ներկայացնելիս օգտագործում են յուրաքանչյուր արտարժույթի տեսակի գծով իրենց իրականացրած արտարժույթի առուվաճառքի գործարքների միջին փոխարժեքները՝ առանձին՝ առքի և առանձին՝ վաճառքի համար, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ՄՓառք= (ԱԾ1*ԱՓ1+ԱԾ2*ԱՓ2+...+ԱԾn*ԱՓn) / (ԱԾ1+ԱԾ2+...+ԱԾn),$$

$$ՄՓվաճառք= (ՎԾ1*ՎՓ1+ՎԾ2*ՎՓ2+...+ՎԾn*ՎՓn) / (ՎԾ1+ՎԾ2+...+ՎԾn), որտեղ՝$$

ՄՓառք - առքի միջին փոխարժեք,
ՄՓվաճառք - վաճառքի միջին փոխարժեք,
ԱԾi - «i»-րդ գործարքի առքի ծավալ,
ԱՓi - «i»-րդ գործարքի առքի փոխարժեք,
ՎԾi - «i»-րդ գործարքի վաճառքի ծավալ,
ՎՓi - «i»-րդ գործարքի վաճառքի փոխարժեք,
«i» - փոփոխական թիվ, որը փոխվում է 1-ից «n»:


128. Եթե փոխանակման կետը տեղադրել է հսկիչ-դրամարկղային մեքենա, ապա սույն կանոնակարգի Հավելված 18-ի պահանջները բավարարող արտարժույթի առուվաճառքի հաշվետվությունը պետք է կազմվի թղթային եղանակով:

129. Եթե փոխանակման կետը տեղադրել է Կենտրոնական բանկի պահանջները բավարարող ծրագիր պարունակող համակարգչային սարքավորում, ապա սույն կանոնակարգի Հավելված 18-ով պահանջվող հաշվետվությունը կլրացվի/կմշակվի ծրագրի կողմից՝ ավտոմատ կերպով: Հաշվետվությունը պետք է ներկայացվի Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի միջոցով կամ էլեկտրոնային փոստով, իսկ այդ ձևերով ներկայացման անհնարինության դեպքում՝ թղթային տարբերակով:

130. Փոխանակման կետերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, ինչպես նաև այլ տեղեկությունները պետք է լինեն արժանահավատ և ամբողջական:

131. Հաշվետվությունն էլեկտրոնային եղանակով ներկայացնելիս ֆայլը կոդավորվում է: Ֆայլի կոդն ունի հետևյալ կառուցվածքը.

Օրինակ՝



ԳԼՈՒԽ 11. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

132. Մինչև 2016 թվականի ապրիլի 30-ը փոխանակման կետերը պետք է դիմեն Կենտրոնական բանկ փոխանակման կետերի լիցենզիաները սույն կանոնակարգի Հավելված 4-ին համապատասխանեցնելու նպատակով: Եթե նշված գործընթացում բացահայտվում են սույն կանոնակարգի 53-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված հիմքերը, ապա Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ նշված փոխանակման կետերի լիցենզիաները Կենտրոնական բանկի կողմից ճանաչվում են ուժը կորցրած:

133. Մինչև 2015 թվականի օգոստոսի 1-ը փոխանակման կետերը պետք է ապահովեն սույն կանոնակարգի 78-րդ և 98-րդ կետերի պահանջները և համապատասխանելու վերաբերյալ սույն կետով սահմանված ժամկետում հայտարարություն ներկայացնեն Կենտրոնական բանկ:

Հավելված 1

«Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
պարոն _____

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն _____

Խնդրում եմ տրամադրել արտարժույթի առուվաճառքի լիցենզիա:

Լիցենզավորվող անձի մասին

Ներքոնշյալն այն նվազագույն տեղեկատվությունն է, որը Դուք պարտավոր եք ներկայացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

1. Լիցենզավորվող անձի տվյալներ							
1.1. Լիցենզավորվող անձի անվանումը՝							
1.2. Կազմակերպական-իրավական ձևը՝							
1.3. Գտնվելու վայրը՝							
1.4. Գործունեության վայրը՝							
1.5. ՀՎՀՀ-ն (ռեզիդենտների համար)՝							
1.6. Պետական գրանցման վայրը, համարը և ամսաթիվը՝							
1.7. Հեռախոսահամարը (գործադիր մարմնի ղեկավարի և/կամ նման պարտականություններ կատարող այլ պաշտոնատար անձի)							
1.8. Փոստային հասցեն, որով լիցենզավորվող անձը համաձայն կլինի ստանալ արտարժույթի առուվաճառքի լիցենզիան							
2. Տեղեկություններ այլ անձանց կանոնադրական հիմնադրամում լիցենզավորվող անձի՝ ձայնի իրավունք տվող մասնակցությունների վերաբերյալ							
Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ-ն (ռեզիդենտների համար)		Գտնվելու վայրը		Մասնակցության չափը (ՀՀ դրամով)		Մասնակցության չափը (%)	
1.							
2.							
3. Տեղեկություններ լիցենզավորվող անձի մասնակիցների վերաբերյալ							
3.1. Մասնակցություն ունեցող իրավաբանական անձինք							
Կազմակերպության անվանումը, ՀՎՀՀ-ն (ռեզիդենտների համար)		Գտնվելու վայրը		Մասնակցության չափը (ՀՀ դրամով)		Մասնակցության չափը (%)	
1.							
2.							
3.2. Մասնակցություն ունեցող ֆիզիկական անձինք							
Անունը, ազգանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայության համարանիշը		Բնակության վայրը		Մասնակցության չափը (ՀՀ դրամով)		Մասնակցության չափը (%)	
1.							
2.							
4. Օրենքի ուժով, կանոնադրությամբ կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով Դուք զրկվե՞լ եք արտարժույթի առուվաճառք իրականացնելու իրավունքից:				Այո		Ոչ	
«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:							

Փոխանակման կետը գործելու է՝

☐ խանութում, որտեղ գործունեություն է ծավալում «_____» ընկերությունը: Խանութի ընդհանուր մակերեսը (ներքին) կազմում է ___ ք.մ., որից սպասարկման սրահը՝ ___ ք.մ.,

☐ առևտրի կենտրոնում, որտեղ առևտրի իրականացման վայրի կազմակերպիչը «_____» ընկերությունն է: Առևտրի կենտրոնի ընդհանուր մակերեսը (ներքին) կազմում է ___ ք.մ., որից սպասարկման սրահը՝ ___ ք.մ.,

☐ հյուրանոցում, որտեղ հյուրանոցային ծառայություններ մատուցում է «_____» ընկերությունը: Հյուրանոցի ընդհանուր տարածքը (ներքին) կազմում է ___ ք.մ.,

☐ երկաթուղային կայարանի տարածքում,

☐ օդանավակայանի տարածքում:

Աշխատանքային ռեժիմի վերաբերյալ

Հայտարարում եմ, որ գործելու եմ հետևյալ աշխատանքային ռեժիմով՝

☐

Շաբաթվա օրերը	Աշխատանքային օրվա սկիզբ	Աշխատանքային օրվա ավարտ	Ընդմիջում
Երկուշաբթի			
Երեքշաբթի			
Չորեքշաբթի			
Հինգշաբթի			
Ուրբաթ			
Շաբաթ			
Կիրակի			

☐ Աշխատելու եմ շուրջօրյա՝ առանց ընդմիջման/ընդմիջումով (_____)
ընդգծել նշել ժամանակահատվածը

☐ Փոխանակման կետը չի աշխատելու պաշտոնապես հայտարարված տոնական և սգո օրերին*
**-դաշտը լրացվում է միայն նշված օրերին չաշխատելու դեպքում*

Աշխատակցի մասին

Ներքոնշյալն այն նվազագույն տեղեկատվությունն է, որը Դուք պարտավոր եք ներկայացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

1. Անձնական տվյալներ	
1.1. Անունը, ազգանունը, հայրանունը	
1.2. Ծննդյան ամսաթիվը (օր/ամիս/տարի)	
1.3. Քաղաքացիությունը	
1.4. Անձնագրի տվյալները	
1.5. Հանրային ծառայությունների համարանիշը	
1.6. Բնակության վայրը (հաշվառված և փաստացի)	
1.7. Հեռախոսահամարը (բնակության վայրի և բջջային)	
1.8. Էլեկտրոնային փոստի հասցեն	
1.9. Մասնագիտական որակավորման վկայականի առկայություն. ☐ առկա է Որակավորող կազմակերպության կողմից տրված վկայական ☐ առկա է Կենտրոնական բանկի կողմից տրված վկայական ☐ Կանոնակարգի 21-րդ կետի հիմքով անհրաժեշտ է քննության կազմակերպում	

2. Տեղեկություններ այլ անձանց կանոնադրական հիմնադրամում ձայնի իրավունք տվող մասնակցությունների վերաբերյալ			
Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (ՀՀ դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			
3.			
4.			

3. Աշխատանքային գործունեությունը (վերջին 5 տարվա համար), ընդ որում՝ պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից):

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետները	Պաշտոնը	Պարտականությունները	Նշագրում կատարեք, եթե աշխատանքային գործունեությունն աշխատանքային գրքույկում ներառված չէ
1.					
2.					

Հավաստիացնում եմ, որ փոխանակման կետի տարածքն ու տեխնիկական հագեցվածությունը համապատասխանում են «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» ԿԲ Կանոնակարգ 10-ի 8-րդ գլխի պահանջներին:

Տեղեկացնում եմ, որ փոխանակման կետում առկա է/առկա չէ դրամապահոց
(ընդգծել)

Հավաստիացնում եմ, որ ներկայացվող փաստաթղթերում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը կարող է հանգեցնել օրենքով սահմանված քրեական կամ վարչական պատասխանատվության:

Համաձայն եմ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Դիմող՝ _____
(անուն, ազգանուն)
Պաշտոնը՝ _____

Ամսաթիվ՝ _____
օր/ամիս/տարի

Ստորագրություն՝ _____

Հավելված 2

«Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի

«_____» փոխանակման կետ

Լիցենզիա թիվ _____

Հասցե _____

Փոստային հասցե*_____

Հեռախոսի համար _____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
պարոն _____

ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ՄԱՍՆԱՁՅՈՒՂԻ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն _____

Խնդրում եմ տրամադրել լիցենզիա՝ արտարժույթի առուվաճառքի գործառնությունները _____ վայրում իրականացնելու համար՝ կապված մասնաճյուղ հիմնելու հետ:

Աշխատանքային ռեժիմի վերաբերյալ

Հայտարարում եմ, որ գործելու եմ հետևյալ աշխատանքային ռեժիմով՝

☐

Շաբաթվա օրերը	Աշխատանքային օրվա սկիզբ	Աշխատանքային օրվա ավարտ	Ընդմիջում
Երկուշաբթի			
Երեքշաբթի			
Չորեքշաբթի			
Հինգշաբթի			
Ուրբաթ			
Շաբաթ			
Կիրակի			

☐ Փոխանակման կետն աշխատելու է շուրջօրյա՝ առանց ընդմիջման/ընդմիջումով (_____)
ընդգծել նշել ժամանակահատվածը

☐ Փոխանակման կետը չի աշխատելու պաշտոնապես հայտարարված տոնական և սգո օրերին*
**-դաշտը լրացվում է միայն նշված օրերին չաշխատելու դեպքում*

Աշխատակցի մասին

Ներքոհիշյալն այն նվազագույն տեղեկատվությունն է, որը Դուք պարտավոր եք ներկայացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

1. Անձնական տվյալներ	
1.1. Անունը, ազգանունը, հայրանունը	
1.2. Ծննդյան ամսաթիվը (օր/ամիս/տարի)	
1.3. Քաղաքացիությունը	

* *Լրացվում է այն հասցեն, որով լիցենզավորվող անձը համաձայն կլինի ստանալ լիցենզիան:*

1.4. Անձնագրի տվյալները	
1.5. Հանրային ծառայությունների համարանիշը	
1.6. Բնակության վայրը (հաշվառված և փաստացի)	
1.7. Հեռախոսահամարը (բնակության վայրի և բջջային)	
1.8. Էլեկտրոնային փոստի հասցեն	

1.9. Մասնագիտական որակավորման վկայականի առկայություն.

☐ առկա է Որակավորող կազմակերպության կողմից տրված վկայական

☐ առկա է Կենտրոնական բանկի կողմից տրված վկայական

☐ Կանոնակարգի 21-րդ կետի հիմքով անհրաժեշտ է քննության կազմակերպում

2. Տեղեկություններ այլ անձանց կանոնադրական հիմնադրամում ձայնի իրավունք տվող մասնակցությունների վերաբերյալ

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (ՀՀ դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			

3. Աշխատանքային գործունեությունը (վերջին 5 տարվա համար), ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետները	Պաշտոնը	Պարտակա-նությունները	Նշագրում կատարեք, եթե աշխատանքային գործունեությունը աշխատանքային գրքույկում ներառված չէ
1.					
2.					

Հայտարարում եմ, որ.

☐ նախկինում ներկայացված փաստաթղթերում փոփոխություն չի կատարվել,

☐ կատարվել են այն փոփոխությունները, որոնք կից ներկայացվել են:

Հավաստիացնում եմ, որ փոխանակման կետի տարածքն ու տեխնիկական հագեցվածությունը համապատասխանում են «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» Կենտրոնական բանկի կանոնակարգ 10-ի 8-րդ գլխի պահանջներին:

Տեղեկացնում եմ, որ փոխանակման կետում առկա է/առկա չէ դրամապահոց

(ընդգծել)

Հավաստիացնում եմ, որ ներկայացվող փաստաթղթերում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը կարող է հանգեցնել օրենքով սահմանված քրեական կամ վարչական պատասխանատվության:

Ես համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Դիմող _____

(անուն, ազգանուն)

Պաշտոնը _____

Ամսաթիվ _____

օր/ամիս/տարի

Ստորագրություն _____

Հավելված 3

«Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների
լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի

«_____» փոխանակման կետ

Լիցենզիա թիվ _____

Հասցե _____

Փոստային հասցեն* _____

Հեռախոսի համար _____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
պարոն_____

ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԴԻՄՈՒՄ՝ ԿԱՊՎԱԾ ՀԱՍՑԵԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Հարգելի պարոն_____,

Խնդրում եմ վերաձևակերպել_____ լիցենզիան՝ կապված գործունեության հասցեի
(նշել փոխանակման կետի անվանումը և լիցենզիան)
փոփոխության հետ:

Գործունեության նոր հասցեն է _____
(նշել փոխանակման կետի գործունեության նոր հասցեն)

Հայտարարում եմ, որ.

- ☐ նախկինում ներկայացված փաստաթղթերում փոփոխություն չի կատարվել,
- ☐ կատարվել են այն փոփոխությունները, որոնք կից ներկայացվել են:

Հավաստիացնում եմ, որ փոխանակման կետի նոր տարածքն ու տեխնիկական հագեցվածությունը համապատասխանում են «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» Կենտրոնական բանկի Կանոնակարգ 10-ի 8-րդ գլխի պահանջներին:

Տեղեկացնում եմ, որ փոխանակման կետում առկա է/առկա չէ դրամապահոց: *(ընդգծել)*

Դիմող _____
(անուն, ազգանուն)

Պաշտոնը _____

Ամսաթիվ _____
օր/ամիս/տարի

Ստորագրություն _____

* *Որով լիցենզավորվող անձը համաձայն կլինի ստանալ լիցենզիան:*

Հավելված 4

«Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների
լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի

(Լիցենզիայի դիմերես)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Լիցենզիան տրվել է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
«__» _____ 20 _ թ.
թիվ _____ որոշմամբ

Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա թիվ _____

Սույն լիցենզիան տրվում է _____

(լիցենզավորված անձի անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը, Ա/Ձ-ի դեպքում՝ նաև հարկային ծառայությունների համարանիշը, իսկ բացակայության դեպքում՝ անձնագրի տվյալները)

արտարժույթի առուվաճառքի գործառնություններ իրականացնելու համար:

Գտնվելու վայրը _____

Ա/Ձ-ի դեպքում՝ հաշվառման հասցեն _____

Գործունեության վայրը _____

Լիցենզիան տրված է անժամկետ:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____

(Լիցենզիայի դարձերես)

Փոխանակման կետի տեղակայման վայրը՝_____*,

* *(նշվում է խանութ, առևտրի կենտրոն, հյուրանոց, երկաթուղային կայարան կամ օդանավակայան)*

որտեղ գործունեություն է ծավալում «_____» ընկերությունը:

Տարածքի չափերը, որտեղ գտնվում է փոխանակման կետը՝

Ընդհանուր տարածք ____ ք.մ.

Սպասարկման սրահ ____ ք.մ.

(Լիցենզիայում փոփոխություններ կատարելու դեպքում համապատասխան որոշման ամսաթիվն ու համարը նշվում են լիցենզիայի դիմերեսի վերին աջ անկյունում:)

Հավելված 5

«Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԹԻՎ _____ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ

ՆԵՐԴԻՐ ԹԻՎ _____

Լիցենզիայով նախատեսված աշխատանքներն իրականացնող պատասխանատու անձի (անձանց) մասին

Անուն, ազգանուն,	հանրային ծառայությունների համարանիշ, իսկ բացակայության դեպքում՝ անձնագրի տվյալներ
1. _____	_____
2. _____	_____

Սույն ներդիրը _____

(փոխանակման կետի անվանումը)

արտարժույթի առուվաճառքի թիվ _____ լիցենզիայի (տրված __/_____/ 20__ թ.) անբաժանելի մասն է:

Հաստատում եմ՝
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ՝

«__»_____ 20__ թ.

Հավելված 6

«Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
պարոն_____

ԴԻՄՈՒՄ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ

Բողոքարկողի անունը, ազգանունը _____

Բողոքարկողի անձնագրի տվյալները _____

Բողոքարկողի հանրային ծառայությունների համարանիշը _____

Քննության անցկացման օրը, ամիսը, տարեթիվը _____

Որակավորման տեսակը _____

Հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն _____

_____

Բողոքարկման պատճառ հանդիսացած խնդրահարույց հարցի նկարագրությունը

_____

_____

Դիմող՝ «__»_____ 20__ թ.

Հավելված 7

«Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների
լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն N

Սույն վկայականը տրվում է

_____ -ին
(անունը, ազգանունը)

_____
(հանրային ծառայությունների համարանիշ, իսկ բացակայության դեպքում՝ անձնագրի տվյալներ)

փոխանակման կետի աշխատակցի պաշտոնում աշխատելու համար:

Սույն վկայականն ուժի մեջ է մինչև «__»_____ 20__ թ.

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ՝ _____
«__»_____ 20__ թ.

Հավելված 8

«Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների
լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի

«_____» փոխանակման կետ

Լիցենզիա թիվ _____

Հասցե_____

Փոստային հասցեն*_____

Հեռախոսի համար _____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
պարոն _____

ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն_____

Խնդրում եմ վերաձևակերպել _____
(նշել փոխանակման կետի անվանումը և լիցենզիան)

լիցենզիան՝ կապված

_____
(նշել վերաձևակերպման անհրաժեշտության հիմքը)

* *Որով լիցենզավորվող անձը համաձայն կլինի ստանալ լիցենզիան:*

Հայտարարում եմ, որ.

- ☐ նախկինում ներկայացված փաստաթղթերում փոփոխություն չի կատարվել,
- ☐ կատարվել են այն փոփոխությունները, որոնք կից ներկայացվել են:

Դիմող _____
(անուն, ազգանուն)

Պաշտոնը _____

Ամսաթիվ _____
օր/ամիս/տարի

Ստորագրություն _____

Հավելված 9

«Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի

« _____» փոխանակման կետ

Լիցենզիա թիվ՝ _____

Հասցե՝_____

Փոստային հասցեն[*]_____

Հեռախոսի համար _____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
պարոն _____

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ՝

Տրամադրել լիցենզիայով նախատեսված աշխատանքներն իրականացնող պատասխանատու անձի (անձանց) մասին լիցենզիայի ներդիր:

_____
(աշխատակցի (աշխատակիցների), ԱՁ-ի անունը, ազգանունը)

Վերաձևակերպել լիցենզիայով նախատեսված աշխատանքներն իրականացնող պատասխանատու անձի (անձանց) մասին լիցենզիայի ներդիրը՝ կապված

_____ - ին ներդիրում ընդգրկելու
(աշխատակցի անունը, ազգանունը)

_____ - ին ներդիրից հանելու հետ:
(աշխատակցի անունը, ազգանունը)

_____ - ի անձնագրի տվյալների փոփոխության հետ:
(աշխատակցի անունը, ազգանունը)

[*] *Որով լիցենզավորվող անձը համաձայն կլինի ստանալ լիցենզիան:*

Աշխատակցի մասին

Ներքոհիշյալն այն նվազագույն տեղեկատվությունն է, որը Դուք պարտավոր եք ներկայացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

1. Անձնական տվյալներ	
1.1. Անունը, ազգանունը, հայրանունը	
1.2. Ծննդյան ամսաթիվը (օր/ամիս/տարի)	
1.3. Քաղաքացիությունը	
1.4. Անձնագրի տվյալները	
1.5. Հանրային ծառայությունների համարանիշը	
1.6. Բնակության վայրը (հաշվառված և փաստացի)	
1.7. Հեռախոսահամարը (բնակության վայրի և բջջային)	
1.8. էլեկտրոնային փոստի հասցեն	
1.9. Մասնագիտական որակավորման վկայականի առկայություն. ☐ առկա է Որակավորող կազմակերպության կողմից տրված վկայական ☐ առկա է Կենտրոնական բանկի կողմից տրված վկայական ☐ Կանոնակարգի 20-րդ կետի հիմքով անհրաժեշտ է քննության կազմակերպում	

2. **Տեղեկություններ այլ անձանց կանոնադրական հիմնադրամում ձայնի իրավունք տվող մասնակցությունների վերաբերյալ**

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (ՀՀ դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			

3. Աշխատանքային գործունեությունը (վերջին 5 տարվա համար, ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից):

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետները	Պաշտոնը	Պարտակա-նությունները	Նշագրում կատարեք, եթե աշխատանքային գործունե-ությունը աշխատանքային գրքույկում ներառված չէ
1.					
2.					

Հավաստիացնում եմ, որ ներկայացվող փաստաթղթերում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը կարող է հանգեցնել օրենքով սահմանված քրեական կամ վարչական պատասխանատվության:

Ես համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Դիմող _____
(անուն, ազգանուն)

Պաշտոնը _____

Ամսաթիվ _____
օր/ամիս/տարի

Ստորագրություն _____

Հավելված 10

«Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն_____

Խնդրում եմ վերաձևակերպել իմ որակավորման վկայականը՝ կապված անձնագրի տվյալների փոփոխության հետ:

էլեկտրոնային փոստի հասցե _____

Դիմող _____
(անուն, ազգանուն)

Ամսաթիվ _____
օր/ամիս/տարի

Ստորագրություն _____

Հավելված 11

«Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի

Գործունեությունն առավել անվտանգ դարձնելու նպատակով սահմանված տարածքային և տեխնիկական հագեցվածության լրացուցիչ պայմաններ, որոնք կարող են կիրառել փոխանակման կետերը

Փոխանակման կետի տարածքն ու տեխնիկական հագեցվածությունը կարող են բավարարել նաև հետևյալ պահանջները.

ա) դրամարկղի պատերը, հատակը և առաստաղը կարող են առանձնացված լինել հարակից տարածքներից երկաթբետոնե (առնվազն 12 սմ հաստությամբ), քարե (առնվազն 25 սմ հաստությամբ) կամ պողպատե (առնվազն 0.8 սմ հաստությամբ) շինանյութից ու զրահապատ ապակուց կառուցված պատերով, իսկ պատուհանները (առկայության դեպքում) կարող են լինել միայն զրահապատ ապակուց.

բ) փոխանակման կետը կարող է ունենալ հաճախորդների սպասարկման տարածք, որը կարող է առանձնացված լինել արտաքին միջավայրից երկաթբետոնե (առնվազն 12 սմ հաստությամբ), քարե (առնվազն 25 սմ հաստությամբ) կամ պողպատե (առնվազն 0.8 սմ հաստությամբ) շինանյութով և ապահովել հաճախորդի անվտանգությունը գործարքի ժամանակ: Հաճախորդների սպասարկման տարածքի պատուհանները (առկայության դեպքում) կարող են լինել միայն զրահապատ ապակուց, իսկ մուտքի դուռը՝ երկշերտ պողպատից: Մուտքի դռան վրա կարող է տեղադրված լինել ավտոմատ կառավարվող էլեկտրոնային կողպեք, որը հնարավորություն կտա փոխանակման կետի աշխատակցին՝ տարածության վրա բացելու կամ փակելու այդ դուռը, և նաև հնարավորություն կտա հաճախորդին այն բացելու՝ փոխանակման կետից դուրս գալու ժամանակ:

գ) փոխանակման կետի դրսի կողմից կարող է տեղադրված լինել տեսախցիկ, որը կարող է հնարավորություն տալ նկարահանելու և հետևելու փոխանակման կետի (դրսի կողմից) մուտքի մոտ կատարվող գործողություններին: Մյուս տեսախցիկը կարող է տեղադրված լինել փոխանակման կետի հաճախորդների սպասարկման տարածքում այնպես, որ հնարավորություն տա նկարահանելու և հետևելու հաճախորդների սպասարկման սրահում կատարվող գործողություններին: Փոխանակման կետի սպասարկման տարածքի մուտքի դռան երկու կողմից կարող է փակցված լինել «Փոխանակման կետի տարածքը և դրա շրջակայքը տեսագրվում են» բովանդակությամբ հայտարարություններ:

Հավելված 12

«Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի

«_____» փոխանակման կետ
Լիցենզիա թիվ _____
Հասցե _____
Փոստային հասցեն _____
Հեռախոսի համար _____

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տեղեկացնում ենք Ձեզ, որ փոխանակման կետը _____/_____/_____/_____-ից.
օր ամիս տարի ժամ
սկսում է իր գործունեությունը:

_____ _____/_____/_____
անուն, ազգանուն, պաշտոնը *օր ամիս տարի*

_____
ստորագրություն

Հավելված 13

«Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի

«_____» փոխանակման կետ
Լիցենզիա թիվ _____
Հասցե _____
Փոստային հասցեն _____
Հեռախոսի համար _____

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տեղեկացնում ենք ձեզ, որ փոխանակման կետը _____/_____/_____թ-ից
օր ամիս տարի
գործելու է հետևյալ աշխատանքային ռեժիմով՝

☐

Շաբաթվա օրերը	Աշխատանքային օրվա սկիզբ	Աշխատանքային օրվա ավարտ	Ընդմիջում
Երկուշաբթի			
Երեքշաբթի			
Չորեքշաբթի			
Հինգշաբթի			
Ուրբաթ			
Շաբաթ			
Կիրակի			

☐ Աշխատելու եմ շուրջօրյա՝ առանց ընդմիջման/ընդմիջումով _____
ընդգծել նշել ժամանակահատվածը

☐ Փոխանակման կետը չի աշխատելու պաշտոնապես հայտարարված տոնական և սգո օրերին*
**-դաշտը լրացվում է միայն նշված օրերին չաշխատելու դեպքում*

_____ _____/_____/_____
անուն, ազգանուն, պաշտոնը *օր ամիս տարի*

_____
ստորագրություն

Հավելված 14

«Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի

«_____» փոխանակման կետ

Լիցենզիա թիվ _____

Հասցե _____

Փոստային հասցեն _____

Հեռախոսի համար _____

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Տեղեկացնում ենք Ձեզ, որ փոխանակման կետը.

1*. Դադարեցնում է իր աշխատանքային գործունեությունը[1]

☐ սկսած _____/_____/_____/_____ -ից
օր ամիս տարի ժամ

մինչև _____/_____/_____/_____-ը.
օր ամիս տարի ժամ

☐ անորոշ ժամկետով և վերսկսելու դեպքում պարտավորվում ենք ***<u>նախապես</u>*** տեղեկացնել ՀՀ կենտրոնական բանկին:

2**. Վերսկսում է իր աշխատանքային գործունեությունը՝ _____/_____/_____/_____-ից
օր ամիս տարի ժամ

**- աշխատանքային գործունեությունը վերսկսելու դեպքում այս դաշտը չի լրացվում,*

***- լրացվում է միայն աշխատանքային գործունեությունը անորոշ ժամկետով դադարեցնելուց հետո վերսկսելու դեպքում:*

_____ _____/_____/_____
անուն, ազգանուն, պաշտոնը *օր ամիս տարի*

_____
ստորագրություն

Հավելված 15

«Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի

«_____» փոխանակման կետ

Լիցենզիա թիվ _____

Հասցե _____

Փոստային հասցեն _____

Հեռախոսի համար _____

Դ Ի Մ Ու Մ

Տեղեկացնում ենք Ձեզ, որ փոխանակման կետի համակարգչային ծրագիրը խափանվել է:

Խնդրում ենք տրամադրել համապատասխան մասնագետ:

_____ __/_____/____

անուն, ազգանուն, պաշտոնը օր ամիս տարի

_____

ստորագրություն

Հավելված 16

«Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի

Արտարժույթի առուվաճառքի վերաբերյալ անդորրագրի ձև

Արտարժույթի առուվաճառքի վերաբերյալ անդորրագիր					
N⁰	*Համար*	Ամսաթիվ	*Ամսաթիվ*	ժամ	*ժամ*
Փոխանակման կետ՝					
Անվանում	*ՓԿ անվանում*				
Գտնվելու վայր	*Գործունեության վայր*				
Արտոնագիր	*Արտոնագրի N⁰*	ՀՎՀՀ	*Հարկ վճարողի հաշվի համար*	Համակարգիչ	*Համակարգչի գրանցման համար*
Հաճախորդ՝					
Անվանում	*Հաճախորդի անվանումը*				
Փաստաթուղթ	*Հաճախորդի անձնագրի տվյալներ*				
Գործարքի մանրամասնություններ՝					
Գործարքի տեսակը	*Գործարքի տեսակը («արտարժույթի առք» կամ «արտարժույթի վաճառք», «արժույթի մուտք», «արժույթի ելք»)*				
Փոխանակման փոխարժեքը ՀՀ դրամով	*Փոխարժեքը թվերով («մուտք» կամ «ելք» տեսակի գործարքների համար չի մուտքագրվում)*				
Մուտք (հաճախորդից ընդունված)	Գումար	*գումարը թվերով*	Արժույթ	*արտարժույթի կոդ*	
	Գումարը տառերով				
Ելք (հաճախորդին տրվող)	Գումար	*գումարը թվերով*	Արժույթ	*արտարժույթի կոդ*	
	Գումարը տառերով				
Կատարող	*Նշվում է կատարող պատասխանատուն*				
Կատարող	*Կատարողի ստորագրությունը*				

Հավելված 17

«Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի

ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ՖԻՍԿԱԼԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՅԱՆ)

Ամսաթիվ (սկիզբ) *ժամանակահատվածի սկիզբ* **Ամսաթիվ (վերջ)** *ժամանակահատվածի վերջ*

Փոխանակման կետ՝					
Անվանում	*ՓԿ անվանում*				
Գործունեության վայր		*Գործունեության իրականացման վայր*			
Արտոնագիր	*Արտոնագրի №*	ՀՎՀՀ	*Հարկ վճարողի հաշվի համար*	Համակարգիչ	*Համակարգչի գրանցման համար*

Արտարժույթի տեսակը	*արտարժույթի՝ Ստանդարտացման միջազգային կազմակերպության կոդ*					
Մնացորդ օրվա սկզբին	*Դրամարկղի մնացորդը օրվա սկզբին*					
N⁰	**Ամսաթիվ**	**Տեսակ**	**Մուտք**		**Ելք**	
			Գումար	**Փոխարժեք**	**Գումար**	**Փոխարժեք**
Ընդամենը			*Ընդհանուր գումարը*		*Ընդհանուր գումարը*	
Մնացորդ օրվա վերջին	*Դրամարկղի մնացորդը օրվա վերջին*					

Արտարժույթի տեսակը	*արտարժույթի՝ Ստանդարտացման միջազգային կազմակերպության կոդ*					
Մնացորդ օրվա սկզբին	*Դրամարկղի մնացորդը օրվա սկզբին*					
N⁰	**Ամսաթիվ**	**Տեսակ**	**Մուտք**		**Ելք**	
			Գումար	**Փոխարժեք**	**Գումար**	**Փոխարժեք**
Ընդամենը			*Ընդհանուր գումարը*		*Ընդհանուր գումարը*	
Մնացորդ օրվա վերջին	*Դրամարկղի մնացորդը օրվա վերջին*					

Արտարժույթի տեսակը	*արտարժույթի՝ Ստանդարտացման միջազգային կազմակերպության կոդ*					
Մնացորդ օրվա սկզբին	*Դրամարկղի մնացորդը օրվա սկզբին*					
N⁰	**Ամսաթիվ**	**Տեսակ**	**Մուտք**		**Ելք**	
			Գումար	**Փոխարժեք**	**Գումար**	**Փոխարժեք**
Ընդամենը			*Ընդհանուր գումարը*		*Ընդհանուր գումարը*	
Մնացորդ օրվա վերջին	*Դրամարկղի մնացորդը օրվա վերջին*					

Յուրաքանչյուր արտարժույթով տեղեկատվությունը ներկայացվում է առանձին (մնացորդ օրվա սկզբին – շարժ – մնացորդ օրվա վերջին):

«Փոխարժեք» սյունակում լրացվում է լիցենզավորված անձի սահմանած փոխարժեքը ՀՀ դրամով:

ՀՀ դրամի համար և Կանոնակարգ 10-ի 111-րդ կետի 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերում նշված գործարքների իրականացման ժամանակ «Փոխարժեք» սյունակը չի լրացվում:

Հավելված 18

«Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի

Արտարժույթի առուվաճառքի վերաբերյալ հաշվետվություն

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ					
Ամսաթիվ (սկիզբ) Փոխանակման կետ Անվանումը Գործունեության վայր	Ամսաթիվ (վերջ)				
Արտոնագիր		ՀՎՀՀ		Համակարգիչ	
Շաբաթվա օրերը	Արտարժույթի տեսակը (ISO կոդը)	Առքի ծավալը	Առքի միջին փոխարժեքը	Վաճառքի ծավալը	Վաճառքի միջին փոխարժեքը

Ընդամենը՝ ըստ արտարժույթի	Արտարժույթի տեսակը (ISO կոդը)	Առքի ծավալը	Առքի միջին փոխարժեքը	Վաճառքի ծավալը	Վաճառքի միջին փոխարժեքը

Յուրաքանչյուր արտարժույթով ներկայացվում է առանձին տեղեկատվություն:

Փոխարժեքի սյունակում լրացվում է օրական միջին կշռված փոխարժեքը՝ ՀՀ դրամով, իսկ «ընդամենը» բաժնի փոխարժեքի սյունակում նշվում է շաբաթվա միջին կշռված փոխարժեքը:

Հավելված 19

«Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի

Չորս հարյուր հազար դրամը գերազանցող գործարքների վերաբերյալ հաշվետվություն

Ամսաթիվ	
Փոխանակման կետի անվանումը	
Գործունեության վայրը	
Լիցենզիայի համարը	
ՀՎՀՀ	

Հ/Հ	Հաճախորդ		Արտարժույթի տեսակը (ISO կոդը)	Գործարքի տեսակը (առք/վաճառք)	Փոխարժեքը	Գործարքի գումարը ՀՀ դրամով
	Անուն, ազգանուն	Անձնագրի համար/ՀԾՀ				

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի թիվ 93-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով բարելավել արժութային շուկայի կարգավորման արդյունավետությունը,

հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իա» կետերը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» թիվ 93-Ն որոշման հավելված 1-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 15) կատարել հետևյալ լրացումները.

1) Կանոնակարգ 15-ի 2-րդ կետի աղյուսակը լրացնել նոր 21-րդ տողով՝ հետևյալ բովանդակությամբ.

21	Հաշվետվություն չորս հարյուր հազար դրամը գերազանցող արտարժույթի առուվաճառքի գործարքների վերաբերյալ	33	օրական

2) Կանոնակարգ 15-ի 3-րդ կետի աղյուսակը լրացնել նոր 20-րդ տողով՝ հետևյալ բովանդակությամբ.

20	Հաշվետվություն չորս հարյուր հազար դրամը գերազանցող արտարժույթի առուվաճառքի գործարքների վերաբերյալ	33	օրական

3) Կանոնակարգ 15-ը լրացնել նոր 20.5 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«20.5. Սույն կանոնակարգի 2-րդ և 3-րդ կետերում ընդգրկված աղյուսակներում նշված թիվ 33 հաշվետվությունը բաղկացած է 1 աղյուսակից: Հաշվետվության մեջ լրացվում են արտարժույթի առուվաճառքի այն գործարքների տվյալները, որոնց դեպքում վարկային կազմակերպության կողմից արտարժույթի վաճառքի մեկանգամյա գործարքի գումարը (այդ թվում՝ մեկ անձի հետ տարբեր արտարժույթներով իրականացվող մեկանգամյա արտարժույթի վաճառքի գործարքների հանրագումարը՝ դրամային արտահայտությամբ)՝ բացառությամբ տվյալ անձի կողմից վարկերի գծով մարումների նպատակով իրականացված արտարժույթի առքի գործարք(ներ)ի, գերազանցում է չորս հարյուր հազար դրամը: Վարկային կազմակերպությունը պարտավոր է սույն կետով սահմանված յուրաքանչյուր գործարքի դեպքում հաճախորդի անձը հաստատող փաստաթղթի պատճենը պահպանել առնվազն 1 տարի: Աղյուսակի 3-րդ սյունակի մեջ լրացվում է անձնագրի սերիան և համարը կամ հանրային ծառայությունների համարանիշը, եթե որպես հաճախորդի նույնականացման միջոց ներկայացվել է նույնականացման քարտը:»:

4) Կանոնակարգ 15-ը լրացնել նոր 31.3 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«31.3. Սույն կանոնակարգի 2-րդ և 3-րդ կետերում նշված թիվ 33 հաշվետվությունը կազմվում է հաշվետվությամբ ներկայացման ենթակա չորս հարյուր հազար դրամը գերազանցող արտարժույթի առուվաճառքի գործարքների կնքման դեպքում և պահպանվում է առնվազն 1 տարի: Հաշվետվությունը Կենտրոնական բանկ է ներկայացվում Կենտրոնական բանկի վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման պահանջով:»:

5) Կանոնակարգ 15-ը լրացնել նոր՝ Զև թիվ 33 հաշվետվական ձևով՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
13 մարտի 2015 թ., N 48-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. մարտի 12-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.04.2015 թ. (ՀՀԳՏ N9 (521)[1], 15.04.2015):

Հավելված 1

ՀՀ թիվ 33

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Չորս հարյուր հազար դրամը գերազանցող արտարժույթի առուվաճառքի գործարքների վերաբերյալ

Վարկային կազմակերպության անվանումը _____

Միևչև _____ *թ.*

(հազար դրամ)

Հ/Հ	Հաճախորդ		Գնվող արժույթ (ISO կոդը)	Վաճառվող արժույթ (ISO կոդը)	Փոխարժեք	Գործարքի գումարը համարժեք ՀՀ դրամով
	Անուն, ազգանուն	Անձնագիր/ՀԾՀ				
1	2	3	4	5	6	7

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի հունիսի 8-ի թիվ 293-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով բարելավել արժութային շուկայի կարգավորման արդյունավետությունը,

հիմք ընդունելով «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը և 7-րդ հոդվածի 9-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի հունիսի 8-ի «Մասնագիտացված անձանց կողմից հաճախորդներին արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունները հավաստիացնող փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 293-Ն որոշմամբ հաստատված «Մասնագիտացված անձանց կողմից հաճախորդներին արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունները հավաստիացնող փաստաթղթերի տրամադրման» կարգում (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Կարգի 5-րդ կետի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն կարգի 4-րդ կետի «ժբ», «ժգ» և «ժդ» ենթակետերով սահմանված տեղեկատվության առկայությունն անդորրագրերի վրա պարտադիր է չորս հարյուր հազար դրամ գումարը գերազանցող առք ու վաճառքի գործառնությունների համար, իսկ փոխանակման կետերի և վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների դեպքում՝ մեկ հարյուր հազար դրամ գումարը գերազանցող գործառնությունների համար:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
13 մարտի 2015 թ., N 49-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. մարտի 12-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.04.2015 թ. (ՀՀԳՏ N9 (521)[1], 15.04.2015):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով բարձրացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից մակրոպրուդենցիալ գործիքների կիրառման արդյունավետությունը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ գլուխը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «ժթ» կետերով և 36-րդ հոդվածի 1-ին մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 2) կատարել հետևյալ լրացումները.

1) Կանոնակարգ 2-ի Հավելված 11-ի 2-րդ կետը «մասնաճյուղերի կողմից» բառերից հետո լրացնել «Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (փակագծում՝ Մուդիզ) վարկանշային գործակալությունների կողմից տրամադրված երկարաժամկետ միջոցների ներգրավման Ա-(Ա3) և բարձր վարկանիշ ունեցող բանկերից,» բառերով,

2) Կանոնակարգ 2-ի Հավելված 11-ի 2-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Սույն կետով սահմանված բանկի՝ վարկանիշ չունենալու դեպքում հաշվի է առնվում տվյալ բանկի գործունեության նկատմամբ հսկողության հնարավորություն ունեցող անձի վարկանիշը:»:

2. Սույն որոշմամբ լրացված Կանոնակարգ 2-ի Հավելված 11-ի 2-րդ կետով սահմանված բանկերից ներգրավված միջոցները պարտադիր պահուստավորման նորմատիվի հաշվարկում կարող են ընդգրկվել նվազեցված դրույքաչափով, եթե ապահովվել են ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի հունվարի 21-ի թիվ 6-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ և 3-րդ նախադասություններով սահմանված դրույթները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
13 մարտի 2015 թ., N 50-Ն

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. մարտի 12-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 3.04.2015 թ. (ՀՀԳՏ N9 (521)[1], 15.04.2015):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 70-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «բիզ» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պարբերականների թողարկման և հրապարակման կարգն ու պայմանները հաստատելու մասին» թիվ 70-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պարբերականների թողարկման և հրապարակման կարգն ու պայմանները» հավելված 1-ի 2-րդ կետի 2-րդ ենթակետը և ենթահավելված 1-ի աղյուսակի 2-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
26 մարտի 2015 թ., N 67-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. մարտի 24-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2.04.2015 թ. (ՀՀԳՏ N9 (521)[1], 15.04.2015):

Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Ճանապարհային ոստիկանության վարչական տույժերի, տուգանքների հաշվառման տեղեկատվական համակարգից տվյալներ ստանալու և վճարումների կատարման համար այդ տվյալները պարտադիր ստուգելու մասին կարգը և պայմանները հաստատելու մասին[*]

Նպատակ ունենալով

սահմանել Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Ճանապարհային ոստիկանության վարչական տույժերի (տուգանքների) դիմաց վճարումների ընդունման ժամանակ այդ տույժերի (տուգանքների) հետ կապված տվյալները պարտադիր ստուգելու և Ճանապարհային ոստիկանության վարչական տույժերի տեղեկատվական շտեմարանից մի շարք տվյալներ վճարահաշվարկային ծառայություն մատուցող կազմակերպություններին հասանելի դարձնելու գործընթացը,

հիմք ընդունելով

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածը,

ղեկավարվելով

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Ճանապարհային ոստիկանության վարչական տույժերի, տուգանքների հաշվառման տեղեկատվական համակարգից տվյալներ ստանալու և վճարումների կատարման համար այդ տվյալները պարտադիր ստուգելու մասին կարգը և պայմանները» (այսուհետ՝ Կարգ)՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից չորս ամիս ժամկետով հայտարարվում է Կարգով սահմանված գործընթացն ապահովող ավտոմատացված համակարգի թեստավորման ժամանակաշրջան, որից հետո Կարգով սահմանված պահանջների կիրառումը պարտադիր է ոստիկանության վարչական տույժերի վճարումների ընդունման և կատարման համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հուլիսի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
10 ապրիլի 2015 թ., N 79-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թվականի ապրիլի 8-ի թիվ 79-Ն որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐԻ, ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՏՎՅԱԼՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՍՏՈՒԳԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կարգը սահմանում է Ճանապարհային ոստիկանության վարչական տույժերի, տուգանքների հաշվառման տեղեկատվական համակարգից տույժերի, տուգանքների վերաբերյալ սահմանված տվյալները վճարումների ընդունման ժամանակ Ֆինանսական կազմակերպությանը հասանելի դարձնելու, ինչպես նաև, վճարումների ընդունման հետ կապված Ճանապարհային ոստիկանության վարչական տույժերի, տուգանքների հաշվառման տեղեկատվական համակարգի հետ համապատասխան տվյալները պարտադիր ստուգելու մասին պահանջները:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. ապրիլի 8-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 18.04.2015 թ. (ՀՀԳՏ N10 (522)[1], 29.04.2015):

2. Սույն կարգը տարածվում է այն Ֆինանսական կազմակերպությունների վրա, որոնք իրականացնում եմ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժերի, տուգանքների դիմաց վճարումների ընդունումը և կատարումը:

ԳԼՈՒԽ 2. ԿԻՐԱՌՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3. Ստորև նշված հասկացությունները սույն կարգում օգտագործվում են հետևյալ նշանակությամբ.

1) ***Բանկ***՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) կողմից լիցենզավորված և Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկ, ինչպես նաև օտարերկրյա բանկի մասնաճյուղ:
2) ***Վճարահաշվարկային կազմակերպություն***՝ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի համաձայն լիցենզավորված վճարահաշվարկային կազմակերպություն:
3) ***Ֆինանսական կազմակերպություն***՝ Բանկը և Վճարահաշվարկային կազմակերպությունը:
4) ***Ճանապարհային ոստիկանություն (ՃՈ)***՝ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» և «Ոստիկանության ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված մարմին:
5) ***Հաճախորդ***՝ Ֆինանսական կազմակերպության կողմից սպասարկվող անձ, որը իրականացնում է գանձապետարան ուղղված Պարտապանի վճարումները կանխիկ դրամական միջոցներով կամ անկանխիկ եղանակով՝ վճարային գործիքների կիրառման միջոցով (այդ թվում՝ էլեկտրոնային փողերով):
6) ***Պարտապան***՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն Ճանապարհային ոստիկանության տույժերի, տուգանքների գծով՝ չվճարված, չմարված պարտավորություն ունեցող անձ:
7) ***Չվճարված պարտավորություն***՝ օրենքով սահմանված դեպքերում Ճանապարհային ոստիկանության կողմից վերահսկվող եկամուտների՝ այդ թվում Ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների հետ կապված տույժերի, տուգանքների, ԱՊՊԱ պայմանագիր չկնքելու դիմաց նշանակված տուգանքների գծով (որոնց դասակարգումը նշված է Կարգի 4-րդ կետով) Պարտապանի կողմից դեռևս չվճարված պարտավորություն:
8) ***Հաճախորդի կողմից վճարված, սակայն ՃՈ հաշվին չմուտքագրված գումար (ՃՈ հաշվին դեռ չմուտքագրված գումար)***՝ չվճարված պարտավորության դիմաց Հաճախորդի կողմից վճարված գումար, որը դեռ չի մուտքագրվել Ճանապարհային ոստիկանության համապատասխան գանձապետական հաշվին:
9) ***Մարված պարտավորության գումար***՝ Հաճախորդի կողմից վճարված գումար, որը մուտքագրվել է Ճանապարհային ոստիկանության համապատասխան գանձապետական հաշվին:
10) ***Վարչական տույժի որոշման համարը***՝ Ճանապարհային ոստիկանության կողմից Վարչական տույժ (տուգանք) նշանակելու մասին ընդունված որոշման համարը, ԱՊՊԱ պայմանագիր չկնքելու հետ կապված տուգանքի համարը, ինչպես նաև Ճանապարհային ոստիկանի կողմից տուգանված վարորդին կամ հետիոտնին տրված (դուրս գրված) Ակտի համարը:
11) ***Վճարման ընդունման (կատարման) մասին հաստատում՝ Ֆինանսական կազմակերպության*** կողմից տեղեկատվության տրամադրում ***Ճանապարհային ոստիկանությանը***՝ կապված Պարտապանի չվճարված պարտավորությունների դիմաց Հաճախորդից փաստացի ընդունված վճարումների վերաբերյալ**:**
12) ***Անդորրագիր***՝ Հաճախորդից վճարումն ընդունող ֆինանսական կազմակերպության կողմից ձևավորված վճարահաշվարկային փաստաթուղթ, որը տրամադրվել (ուղարկվել) է հաճախորդին, և (կամ) հաճախորդի հանձնարարականի հետ կապված ֆինանսական կազմակերպության էլեկտրոնային համակարգում կատարված համապատասխան էլեկտրոնային գրառում, որը հավաստում է Հաճախորդի կողմից կանխիկ միջոցներով կամ անկանխիկ եղանակով վճարման կատարումը և ֆինանսական կազմակերպության կողմից հաճախորդի նկատմամբ հանձնարարականի կատարման պարտավորության ստանձնումը:
13) ***Կենտրոնական բանկի միջնորդություն***՝ սույն կարգի իմաստով՝ Կենտրոնական բանկի կողմից համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունների փոխանցման ապահովումը՝ Ֆինանսական կազմակերպությունների և Ճանապարհային ոստիկանության միջև: Կենտրոնական բանկի միջնորդությունը չի կարող նշանակել կամ որևէ կերպ մեկնաբանվել, որ Կենտրոնական բանկի

վրա կարող է դրվել սույն ենթակետով չնախատեսված որևէ այլ գործառույթ: Կենտրոնական բանկի միջնորդության հետ կապված Կենտրոնական բանկը իրականացնում է.

ա) Սույն կարգով սահմանված հաղորդագրություններին համապատասխան տեղեկատվության փոխանցումը՝ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեխնիկածրագրային տիրույթի միջոցով,

բ) Կենտրոնական բանկի կողմից տրամադրված և շահագործվող տեխնիկածրագրային տիրույթի բնականոն աշխատանքի ապահովում:

14) ***Հաղորդագրությունների փոխանցման ավտոմատացված ծառայություն (service)***՝ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեխնիկածրագրային տիրույթ, որի միջոցով իրականացվում է սույն կարգով սահմանված տեղեկատվության փոխանակումը ֆինանսական կազմակերպությունների և Ճանապարհային ոստիկանության միջև:

15) ***Հաղորդագրություն***՝ տեխնիկածրագրային միջավայրում տեղեկատվության փոխանցման միավոր:

16) ***Վարչական տույժերի հաշվառման տեղեկատվական համակարգ*** *(այսուհետ՝* ***«ՃՈ տույժերի, տուգանքների համակարգ»)»***՝ Հայաստանի Հանրապետության Ճանապարհային Ոստիկանությանը պատկանող կենտրոնացված տեղեկատվական համակարգ, որտեղ գրանցվում, հաշվառվում և վարվում են վարչական տույժերը, տուգանքները:

17) ***Ավտոմատացված համակարգ***՝կիրառվող տեխնիկածրագրային միջոցների համախմբություն ***(Հաղորդագրությունների փոխանցման ավտոմատացված ծառայությունը և «ՃՈ տույժերի, տուգանքների համակարգը»),*** որն ապահովում է Ճանապարհային ոստիկանության տեղեկատվական շտեմարանից համապատասխան տվյալների ստացումը՝ Ֆինանսական կազմակերպության կողմից Պարտապանից վճարումների ընդունման և կատարման գործընթացների իրականացման համար:

ԳԼՈՒԽ 3. ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐԻ, ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4. Յուրաքանչյուր ֆինանսական կազմակերպություն Ճանապարհային ոստիկանության «ՃՈ տույժերի, տուգանքների համակարգում» հաշվառվող վարչական տույժերի, տուգանքների դիմաց վճարումների ընդունումը պետք է իրականացնի Ավտոմատացված համակարգով՝ սույն կարգով սահմանված գործընթացի համաձայն: Ընդ որում, Ճանապարհային ոստիկանությանն ուղղված վճարումների հետ կապված վարչական տույժերը, տուգանքները դասակարգվում են ըստ նշված տեսակների.

ա) Ճանապարհային տեսախցիկների միջոցով արձանագրված խախտումների դիմաց տույժեր, տուգանքներ,

բ) Ճանապարհային ոստիկանի կողմից վարորդի նկատմամբ արձանագրված խախտումների դիմաց տույժեր, տուգանքներ (որոնց դիմաց տրվում է Ճանապարհային ոստիկանի լրացված ակտը),

գ) ԱՊՊԱ պայմանագիր չունենալու դիմաց նշանակված վարչական տույժեր, տուգանքներ,

դ) Օտարերկրյա տրանսպորտային միջոցների նկատմամբ նշանակված տույժեր, տուգանքներ,

ե) Ճանապարհային ոստիկանի կողմից հետիոտնի նկատմամբ նշանակված վարչական տույժեր, տուգանքներ,

զ) Այլ տույժեր, որոնք իրավական ակտերով սահմանված կարգով գրանցվում են «ՃՈ տույժերի, տուգանքների համակարգում»:

5. «ՃՈ տույժերի, տուգանքների համակարգում» հաշվառված տույժերի, տուգանքների դիմաց վճարումն ընդունվում և կատարվում է սույն կարգով նշված սկզբունքների համաձայն: Ընդ որում.

1) Հաճախորդի կողմից Ճանապարհային ոստիկանությանն ուղղված վարչական տույժերի, տուգանքների դիմաց վճարումների կատարման համար պահանջվում է նշանակված Վարչական տույժի, տուգանքի որոշման համարը կամ այլ համապատասխան տվյալներ, ըստ սույն Կարգի 28-րդ կետի 5-րդ ենթակետի (թիվ 1 հաղորդագրության հարցվող տվյալի): Սույն տվյալները Հաճախորդը.

ա) տրամադրում է իրեն սպասարկող Ֆինանսական կազմակերպությանը, երբ սպասարկվում է վերջինիս մասնաճյուղում, կամ

բ) մուտքագրում է Ֆինանսական կազմակերպության կողմից կիրառվող համակարգի համապատասխան դաշտում, երբ Հաճախորդի սպասարկումը կատարվում է հեռահար սպասարկման համակարգով կամ ավտոմատ ինքնասպասարկման տերմինալով:

Ֆինանսական կազմակերպությունը կարող է սահմանել հարցում կատարելու համար հաճախորդի կողմից տվյալների ներկայացման ընթացակարգ:

2) Ֆինանսական կազմակերպությունը, մինչև Հաճախորդից՝ ճանապարհային ոստիկանության ուղղված վճարային կարգադրության ընդունումը և կատարումը իրականացնում է վարչական տույժի, տուգանքի հետ կապված տվյալների ստուգում՝ ուղարկելով սույն կարգով սահմանված «Հարցում առկա վարչական տույժերի վերաբերյալ» (այսուհետ՝ թիվ 1) հարցումային հաղորդագրությունը «ՃՈ տույժերի, տուգանքների համակարգին»: Ընդ որում, յուրաքանչյուր հարցումային հաղորդագրություն կատարվում է առցանց սկզբունքով:

3) «ՃՈ տույժերի, տուգանքների համակարգը» ստացված (թիվ 1) հարցումային հաղորդագրության մեջ նշված տվյալները համակարգում առկա տվյալների հետ ստուգվելու արդյունքում,

ա) Տվյալների համապատասխանության դեպքում, ի պատասխան, Ֆինանսական կազմակերպությանն ուղարկվում է «Վճարման ենթակա վարչական տույժի (տուգանքի) վերաբերյալ» (այսուհետ՝ թիվ 2) հաղորդագրությունը, որը պարունակում է վարչական տույժի, տուգանքի հետ կապված մի շարք տվյալներ, այդ թվում չվճարված պարտավորության գումարը (թիվ 1 հաղորդագրության ստացման պահին): Ճանապարհային ոստիկանության յուրաքանչյուր վարչական տույժի, տուգանքի դիմաց ուղարկվում է առանձին թիվ 2 հաղորդագրությունը:

բ) Եթե Պարտապանի պարտավորությունը լրիվ վճարված է և (կամ) մարված, ապա ի պատասխան հարցումային հաղորդագրության՝ «ՃՈ տույժերի, տուգանքների համակարգի» կողմից հարցում ներկայացնող Ֆինանսական կազմակերպությանն ուղարկվում է համապատասխան (թիվ 2) հաղորդագրություն, որտեղ նշվում է վճարված և (կամ) մարված պարտավորության մասին:

գ) Հարցումը ճիշտ չձևակերպվելու կամ հաղորդագրությունների ուղարկումը անհնարին լինելու դեպքում, կամ տվյալների բացակայության դեպքում համակարգի կողմից այդ մասին էլեկտրոնային եղանակով ձևավորվում և տրամադրվում է համապատասխան տեղեկացում՝ նշելով վերջինիս պատճառը:

4) Ֆինանսական կազմակերպությունների և «ՃՈ տույժերի, տուգանքների համակարգի» միջև հարցումների կատարումը և դրանց ի պատասխան համապատասխան հաղորդագրությունների փոխանցումը իրականացվում է միայն Կենտրոնական բանկի Հաղորդագրությունների փոխանցման ավտոմատացված ծառայության միջոցով:

6. Ֆինանսական կազմակերպությանը տրամադրվում են այն վարչական տույժի, տուգանքի վերաբերյալ համապատասխան տվյալները (ըստ թիվ 2 հաղորդագրության), որոնց հետ կապված «ՃՈ տույժերի, տուգանքների համակարգում» առկա է գրառում (չվճարված, չմարված պարտավորության, ինչպես նաև մարված պարտավորության մասին): Յուրաքանչյուր Վարչական տույժի որոշման վերաբերյալ համապատասխան տվյալները Ֆինանսական կազմակերպությանը տրամադրվում են առանձին (թիվ 2 հաղորդագրություն):

7. Ֆինանսական կազմակերպությունը Հաճախորդից ընդունում և կատարում է Չվճարված պարտավորության դիմաց վճարումը՝ «ՃՈ տույժերի, տուգանքների համակարգին» ուղարկված հարցման արդյունքում ստացված թիվ 2 պատասխան հաղորդագրության տվյալների համաձայն:

8. Ֆինանսական կազմակերպությունը հեռահար սպասարկման համակարգերով կամ ավտոմատ ինքնասպասարկման տերմինալներով Հաճախորդների սպասարկման ժամանակ կարող է «ՃՈ տույժերի, տուգանքների համակարգից» ստացված թիվ 2 պատասխան հաղորդագրության մեջ պարունակվող տեղեկատվությունը հասանելի դարձնել Հաճախորդին, վերջինիս կողմից վճարում կատարելու համար:

9. Ֆինանսական կազմակերպությունը յուրաքանչյուր վճարված տույժի, տուգանքի դիմաց ընդունում է Հաճախորդի ներկայացված վճարային կարգադրությունը (կանխիկ կամ անկանխիկ եղանակով) ըստ վճարվող գումարի և ձևավորում է համապատասխան Անդորրագիր:

10. Ֆինանսական կազմակերպությունը, առանց հարցում կատարելու և թիվ 2 հաղորդագրությունը ստանալու, Հաճախորդից վճարում չպետք է ընդունի:

11. Ֆինանսական կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում «ՃՈ տույժերի, տուգանքների համակարգին» հարցում կատարելու անհնարինության հետևանքով Հաճախորդի վճարումը չընդունելու և չկատարելու համար: Ինչպես նաև ստացված թիվ 2 հաղորդագրության տվյալների անճշտության դեպքում հաճախորդից վճարումը չընդունելու համար:

12. Ֆինանսական կազմակերպությունը Հաճախորդից վճարումը ընդունելուց (Անդորրագիրը ձևավորելուց) անմիջապես հետո «ՃՈ տույժերի, տուգանքների համակարգին» պետք է ուղարկի վճարման ընդունման մասին հաստատումը՝ «Վճարման ընդունման վերաբերյալ» (այսուհետ՝ թիվ 3) հաղորդագրության միջոցով:

13. Հաճախորդի հանձնարարությամբ Ֆինանսական կազմակերպությունը չի կարող իրականացնել ընդունված վճարման հետ կանչում կամ վճարման տվյալների ճշգրտում, եթե «ՃՈ տույժերի, տուգանքների համակարգին» ուղարկել է վճարման ընդունման մասին թիվ 3 հաստատումը:

Սույն դրույթը ապահովելու համար Ֆինանսական կազմակերպությունը Հաճախորդի սպասարկման և վճարման ընդունման ժամանակ պետք է ապահովի և ստանա Հաճախորդի համաձայնությունը ««ՃՈ տույժերի, տուգանքների համակարգին» ուղղված վճարումը չի կարող հետ կանչվել» պայմանի ընդունման վերաբերյալ:

14. Բանկը ապահովում է Վարչական տույժերի, տուգանքների դիմաց ընդունված վճարումների փոխանցումը Կենտրոնական գանձապետարանի կողմից սպասարկվող Ճանապարհային ոստիկանության համապատասխան գանձապետական հաշիվներին՝ ըստ յուրաքանչյուր տույժի, որոնք հավաքագրվել են.

1) Տվյալ Բանկի կողմից՝ իր Հաճախորդների սպասարկման և վճարումների ընդունման արդյունքում,
2) Վճարահաշվարկային կազմակերպության կողմից՝ Հաճախորդների սպասարկման և վճարումների ընդունման արդյունքում: Վերջիններիս հետ կապված Վճարահաշվարկային կազմակերպությունը պետք է իրեն սպասարկող Բանկին ներկայացնի համապատասխան կարգադրություն՝ Հաճախորդներից ընդունված միջոցները համապատասխան գանձապետական հաշիվներին փոխանցելու համար (տրամադրելով յուրաքանչյուր տույժի տվյալները):

15. Բանկը չի իրականացնում Վճարահաշվարկային կազմակերպության կողմից սպասարկված Հաճախորդներից Ճանապարհային ոստիկանության վարչական տույժերի դիմաց ընդունված վճարային տվյալների ստուգումը և դրանց հետ կապված «ՃՈ տույժերի, տուգանքների համակարգին» ուղղված համապատասխան հաղորդագրությունների ուղարկումը:

16. Ճանապարհային ոստիկանության համապատասխան գանձապետական հաշիվներին միջոցները փոխանցելիս Բանկը.

1) իրականացնում է փոխանցումը Կենտրոնական բանկի կողմից հաստատված «Ֆինանսական արտաքին էլեկտրոնային հաղորդագրությունների նկարագրության» պահանջներին համապատասխանող էլեկտրոնային ֆինանսական հաղորդագրությունների միջոցով՝ ըստ յուրաքանչյուր տույժի, տուգանքի,
2) միջոցների փոխանցումը իրականացնում է Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված՝ միջոցների փոխանցման առավելագույն ժամկետների համաձայն,
3) Վարչական տույժերի, տուգանքների հետ կապված՝ սպասարկված Հաճախորդից ընդունված վճարման վերաբերյալ համապատասխան տվյալները լրացնում է կիրառվող էլեկտրոնային ֆինանսական հաղորդագրություններում:

17. Հաճախորդին սպասարկող յուրաքանչյուր Վճարահաշվարկային կազմակերպություն պետք է ապահովի սույն կարգով սահմանված պահանջների համաձայն՝ Վարչական տույժի, տուգանքի դիմաց Հաճախորդներից ընդունված վճարումների հետ կապված համապատասխան տվյալների տրամադրումը Բանկին: Ընդ որում.

1) Բանկին տրամադրվում են միայն «ՃՈ տույժերի, տուգանքների համակարգին» հարցում կատարելու և սույն կարգով սահմանված պահանջների համաձայն սպասարկված Հաճախորդից ընդունված վճարումների հետ կապված տվյալները՝ ըստ յուրաքանչյուր վարչական տույժի, տուգանքի:
2) Վճարահաշվարկային կազմակերպությունը ապահովում է իր կողմից սպասարկված Հաճախորդների դրամական միջոցները գանձապետարան փոխանցելու նպատակով Կենտրոնական բանկի կողմից սահմանված Ֆինանսական էլեկտրոնային հաղորդագրությունների լրացման (ձևավորման) համար անհրաժեշտ բոլոր տվյալների տրամադրումն իրեն սպասարկող Բանկին:

18. Համապատասխան գանձապետական հաշիվներին դրամական միջոցների փաստացի մուտքագրման արդյունքում «ՃՈ տույժերի, տուգանքների համակարգում» անհրաժեշտ գրառումները, այդ թվում՝ համապատասխան վարչական տույժի, տուգանքի դիմաց պարտավորության մարման հետ կապված, կատարվում են Ճանապարհային ոստիկանության կողմից սահմանված ընթացակարգով:

19. «ՃՈ տույժերի, տուգանքների համակարգում» հաշվառվող վարչական տույժերի, տուգանքների հետ կապված պարտավորությունները մարելու նպատակով Հաճախորդները կարող են չվճարված պարտավորությունների դիմաց վճարումը կատարել մաս-մաս, Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետում:

20. Պարտապանի չվճարված պարտավորության դիմաց արտասահմանից իրականացված վճարումների ժամանակ, արտասահմանից ստացվող վճարային հաղորդագրության մեջ պետք է առկա լինեն վարչական տույժի հետ կապված պահանջվող տվյալները: Դրանց հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում գործող Բանկը, սույն կարգով սահմանված պահանջների համաձայն, իրականացնում է «ՃՈ տույժերի, տուգանքների համակարգի» հետ տվյալների ստուգումը, վճարման ընդունումը և դրա փոխանցումը դեպի գանձապետարան: Ընդ որում.

եթե Բանկի կողմից արտասահմանից ստացված հաղորդագրության մեջ բացակայում են վարչական տույժի հետ կապված համապատասխան տվյալները, կամ «ՃՈ տույժերի, տուգանքների համակարգում»

առկա չէ համապատասխան գրառում, ապա Բանկը մերժում է արտասահմանից ստացված վճարման կատարումը:

21. Ֆինանսական կազմակերպությունը երրորդ անձի կամ այլ համակարգի միջոցով ճանապարհային ոստիկանության վարչական տույժերի, տուգանքների դիմաց վճարումների ընդունման դեպքում պետք է ապահովի սույն կարգով սահմանված պահանջների կատարումը:

22. Ճանապարհային ոստիկանության «ՃՈ տույժերի, տուգանքների համակարգում» առկա տվյալները Ֆինանսական կազմակերպություններին տրամադրվում են ըստ թիվ 2 հաղորդագրության համար սահմանված տվյալների:

ԳԼՈՒԽ 4. ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

23. Ճանապարհային ոստիկանության տույժերի, տուգանքների տվյալների ստուգման և այդ տույժերի դիմաց վճարումների ընդունման գործընթացի հետ կապված՝ Ճանապարհային ոստիկանության և Ֆինանսական կազմակերպության (այսուհետ՝ Կողմեր) միջև տեղեկատվության փոխանցումը կատարվում է.

1) էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով, որոնք ձևավորվում են՝ համաձայն դրանց կիրառման համար Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջների:
2) էլեկտրոնային հաղորդագրությունները փոխանցվում են Հաղորդագրությունների փոխանցման ավտոմատացված ծառայության միջոցով, Կենտրոնական բանկի միջնորդությամբ:

24. Էլեկտրոնային հաղորդագրությունները ձևավորվում և ուղարկվում են Կենտրոնական բանկի կողմից սահմանված իրավական ակտերի համաձայն և ապահովում են սույն Կարգով սահմանված՝ Հաղորդագրություններում նշվող համապատասխան տվյալների փոխանցումը: Սույն կետով նշված էլեկտրոնային հաղորդագրությունները չեն հանդիսանում ֆինանսական վճարային հաղորդագրություններ:

25. Հաղորդագրությունների փոխանցման ավտոմատացված ծառայության միջոցով Հաղորդագրությունների փոխանցումը կատարվում է Կենտրոնական բանկի Սի-Բի-էյ-Նեթ (CBANet) միջբանկային համակարգչային ցանցով:

26. Ճանապարհային ոստիկանության կողմից Ֆինանսական կազմակերպությանը փոխանցվում է հետևյալ հաղորդագրությունը.

«Վճարման ենթական վարչական տույժի (տուգանքի) վերաբերյալ» (թիվ 2) պատասխան հաղորդագրություն:

27. Ֆինանսական կազմակերպության կողմից նախաձեռնվում և Ճանապարհային ոստիկանությանն են փոխանցվում հետևյալ հաղորդագրությունները.

1) «Հարցում առկա վարչական տույժերի վերաբերյալ, ըստ տրանսպորտային միջոցը նույնականացնող տվյալների» (թիվ 1) հաղորդագրությունը,
2) «Վճարման ընդունման վերաբերյալ» (թիվ 3) հաղորդագրությունը (հաստատումը):

ԳԼՈՒԽ 5. ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՈՒՅԺԵՐԻ, ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՆԴՐԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

28. «Հարցում առկա վարչական տույժերի վերաբերյալ» (թիվ 1) հաղորդագրությունն իրենից ներկայացնում է ֆինանսական կազմակերպության կողմից «ՃՈ տույժերի, տուգանքների համակարգին» ուղղված հարցում՝ նշանակված տույժերի, տուգանքների մասին: Թիվ 1 հաղորդագրությունը պետք է ներառի առնվազն հետևյալ տեղեկատվությունը.

1) Հաղորդագրության ունիկալ համարը,
2) Հաղորդագրության ուղարկման ամսաթիվը, ժամը (ժամ/րոպե),
3) Հաղորդագրությունը ձևավորող և ուղարկող կողմին նույնականացնող տվյալներ,
   ա) Ուղարկող Ֆինանսական կազմակերպության անվանումը,
   բ) Ուղարկող Ֆինանսական կազմակերպության կոդը,
4) Հաղորդագրությունը ստացող (հասցեատեր) կողմին նույնականացնող տվյալներ,
   ա) Ստացողի անվանումը,
   բ) Ստացողի կոդը (ըստ անհրաժեշտության),
5) Հարցում կատարելու համար պահանջվող տվյալներ, ըստ «ա)» կամ «բ)» ենթակետերի դասակարգման.
   ա) Տրանսպորտային միջոցը նույնականացնող տվյալներ (միաժամանակ պետք է լրացվեն բոլոր տվյալները).
      ա1) ՏՄ պետական համարանիշը և
      ա2) ՏՄ տեխնիկական անձնագրի համարը,

բ) Վարչական տույժը կամ Հետիոտնին նույնականացնող տվյալներ (պարտադիր պետք է լրացվի սույն տվյալներից որևէ մեկը).

բ1) Վարչական տույժ, տուգանք նշանակելու մասին որոշման համարը, կամ

բ2) Հետիոտնի անձնագրային տվյալները (անձնագրի սերիան և համարը)/նույնականացման քարտի (Այ-Դի) համարը Հետիոտնի տույժի վճարման դեպքում:

29. «Վճարման ենթակա վարչական տույժի (տուգանքի) վերաբերյալ» պատասխան հաղորդագրություն (թիվ 2), որը պարունակում է տեղեկացում՝ Պարտապանի նկատմամբ նշանակված վարչական տույժերի (տուգանքների) վերաբերյալ, որոնք ենթակա են վճարման: Թիվ 2 հաղորդագրությունը պետք է ներառի առնվազն հետևյալ տեղեկատվությունը.

1) Հաղորդագրության ունիկալ համարը, այդ թվում.

ա) ուղարկված հարցումային (թիվ 1) հաղորդագրության ունիկալ համարին տրված հղումը,

2) Հաղորդագրության ուղարկման ամսաթիվը, ժամը (ժամ/րոպե),

3) Հաղորդագրությունը ձևավորող և ուղարկող կողմին նույնականացնող տվյալներ.

ա) Ուղարկողի անվանումը,

բ) Ուղարկողի կոդը (ըստ անհրաժեշտության):

4) Հաղորդագրությունը ստացող (հասցեատեր) կողմին նույնականացնող տվյալներ.

ա) Ստացող Ֆինանսական կազմակերպության անվանումը,

բ) Ստացող Ֆինանսական կազմակերպության կոդը:

5) Տրանսպորտային Միջոցի կամ Հետիոտնի նույնականացման համար նշվող տվյալներ (Հետիոտնի տույժի վճարման համար սույն ենթակետի տվյալները չեն նշվում, բացառությամբ գ) ենթակետի, որտեղ նշվում է Հետիոտնի անուն, ազգանունը).

ա) ՏՄ պետական համարանիշը,

բ) ՏՄ տեխնիկական անձնագրի համարը,

գ) ՏՄ սեփականատիրոջ անուն, ազգանունը/անվանումը կամ տուգանված անձի/Հետիոտնի անուն, ազգանունը (Հիմնական պարտապան),

դ) ՏՄ մակնիշը:

6) Վարչական տույժի (տուգանքի) նույնականացման համար նշվում են հետևյալ տվյալները (նշված տվյալներից բոլորը միաժամանակ պետք է լրացվեն), որտեղ յուրաքանչյուր հաղորդագրության մեջ նշվում են մեկ վարչական տույժի, տուգանքի վերաբերյալ տվյալները՝ ըստ համապատասխան դաշտերի.

ա) Վարչական տույժ նշանակելու մասին Որոշման համարը,

բ) Որոշման ամսաթիվը,

գ) Որոշման համաձայն ընդհանուր պարտավորության գումարը՝ ՀՀ դրամ, այդ թվում.

գ1) Նշանակված տույժի գումարը, ՀՀ դրամ (ըստ նշված որոշման),

գ2) Հաշվարկված տուգանքի գումարը, ՀՀ դրամ (եթե տվյալ որոշման հետ կապված այն բացակայում է՝ նշվում է զրո),

դ) Հաճախորդի կողմից վճարված, սակայն ՃՈ հաշվին դեռ չմուտքագրված գումար, ՀՀ դրամ (ՃՈ հաշվին դեռ չմուտքագրված գումար),

ե) Վճարման ենթակա փաստացի պարտավորության գումարը, ՀՀ դրամ (այդ պահին դեռ Չվճարված պարտավորության գումարը՝ կապված տվյալ որոշման հետ),

զ) Մարված (մասնակի մարված) պարտավորության գումարը, ՀՀ դրամ (ըստ նշված որոշման),

է) Ճանապարհային ոստիկանության գանձապետական հաշվի համարը (որին պետք է փոխանցվի գումարը):

30. «Վճարման ընդունման վերաբերյալ» թիվ 3 հաղորդագրությունը պարունակում է հաստատում այն մասին, որ Ֆինանսական կազմակերպությունն ընդունել է Տրանսպորտային միջոցի/Հետիոտնի նկատմամբ նշանակված վարչական տույժի (տուգանքի) հետ կապված տվյալ վճարումը: Թիվ 3 հաղորդագրությունն ուղարկվում է վճարումը ընդունող Ֆինանսական կազմակերպության կողմից, որը պետք է ներառի առնվազն հետևյալ տեղեկատվությունը.

1) Հաղորդագրության ունիկալ համարը, այդ թվում.

ա) ուղարկված պատասխան հաղորդագրության (թիվ 2) ունիկալ համարին տրված հղումը,

2) Հաղորդագրության ուղարկման ամսաթիվը, ժամը (ժամ, րոպե),

3) Հաղորդագրությունը ձևավորող և ուղարկող կողմին նույնականացնող տվյալներ,

ա) Ուղարկող Ֆինանսական կազմակերպության անվանումը,

բ) Ուղարկող Ֆինանսական կազմակերպության կոդը,

4) Հաղորդագրությունը ստացող (հասցեատեր) կողմին նույնականացնող տվյալներ,

ա) Ստացողի անվանումը,

բ) Ստացողի կոդը (ըստ անհրաժեշտության),

5) Վարչական տույժի (տուգանքի) և տրանսպորտային միջոցի նույնականացման համար նշվում են հետևյալ տվյալները (նշված տվյալներից բոլորը միաժամանակ պետք է լրացվեն), որտեղ յուրաքանչյուր հաղորդագրության մեջ առանձին նշվում է մեկ վճարվող վարչական տույժի, տուգանքի վերաբերյալ տվյալները՝ ըստ համապատասխան դաշտերի.

ա) Վարչական տույժ նշանակելու մասին Որոշման համարը,

բ) Որոշման ամսաթիվը,

գ) ՏՄ տեխնիկական անձնագրի համարը (Հետիոտնի տուգանքի վճարման դեպքում սույն տվյալը բացակայում է),

դ) Որոշման համաձայն ընդհանուր պարտավորության գումարը և արժույթը՝ ՀՀ դրամ (Տույժի և հաշվարկված տուգանքի գումարը միասին),

ե) Վճարման ենթակա փաստացի պարտավորության գումարը՝ ՀՀ դրամ (դեռ Չվճարված պարտավորության գումարը, կապված տվյալ որոշման հետ):

6) Ընդունված Վարչական տույժի (տուգանքի) վճարման մանրամասների հետ կապված պարտադիր նշվում են հետևյալ տվյալները (նշվում է յուրաքանչյուր ընդունված վճարման համար).

ա) Պարտավորության դիմաց Վճարված փաստացի գումարը և արժույթը՝ ՀՀ դրամ (որը փոխանցվելու է գանձապետական հաշվին),

բ) Հաճախորդին սպասարկող ֆինանսական կազմակերպության կողմից Վճարման ընդունման ամսաթիվը, ժամը (ժամ, րոպե),

գ) Անդորրագրի ունիկալ համարը (նույնականացուցիչը):

7) Ճանապարհային ոստիկանության համապատասխան գանձապետական հաշվի համարը:

31. Սույն կարգով սահմանված Վարչական տույժերի, տուգանքների դիմաց ընդունված վճարումները գանձապետարանի համապատասխան հաշվին փոխանցելու համար Բանկի կողմից ձևավորվող էլեկտրոնային ֆինանսական հաղորդագրության մեջ պարտադիր լրացվում են հետևյալ տվյալները՝ ստորև նշված կանոնների համաձայն.

1) Վարչական տույժերի, տուգանքի որոշման համարի և ամսաթվի տվյալները լրացվում են վճարային հաղորդագրության համապատասխան դաշտում կիրառվող «PDD/» կոդի միջոցով ըստ էլեկտրոնային ֆինանսական հաղորդագրությունների լրացման պահանջների:
2) Եթե Հաճախորդից վճարումը ընդունվել է Վճարահաշվարկային կազմակերպության կողմից, ապա պարտադիր նշվում են վերջինիս նույնականացման տվյալները:
3) Անդորրագրի ունիկալ համարը պարտադիր լրացվում է (նշվում է) վճարային հաղորդագրության համապատասխան դաշտում և նշվում է «CPO/» կոդի միջոցով՝ ըստ հաղորդագրության լրացման կարգի:
4) Հաճախորդի կողմից փաստացի վճարված գումարի, Հիմնական պարտապանի և (կամ) վճարողի, Ճանապարհային ոստիկանության հաշվի, Անդորրագրում նշված վճարման ընդունման ամսաթվի հետ կապված համապատասխան պահանջվող տվյալները լրացվում են ըստ Կենտրոնական բանկի կողմից էլեկտրոնային ֆինանսական հաղորդագրությունների լրացման համար սահմանված պահանջների:

32. Անդորրագրում պետք է լրացվեն առնվազն ստորև նշված տվյալները՝ սահմանված պահանջներին համապատասխան: Ընդ որում.

1) Վարչական տույժի, տուգանքի որոշման նույնականացման համար պարտադիր նշվում են.

ա) Վարչական տույժի, տուգանքի որոշման համարը,

բ) Վարչական տույժի, տուգանքի որոշման ամսաթիվը,

գ) Հիմնական պարտապանի անվանումը կամ անուն ազգանունը:

2) Վարչական տույժի դիմաց պարտավորությունների հետ կապված կարող է նշվել.

ա) Չվճարված պարտավորության գումարը (կապված միևնույն որոշման հետ), որից նվազեցված են այն վճարումները, որոնք դեռ չեն մուտքագրվել ՃՈ հաշվին,

բ) Հաճախորդի կողմից վճարված, սակայն ՃՈ հաշվին դեռ չմուտքագրված գումարները,

գ) Մասնակի մարված պարտավորության գումարը:

3) Պարտադիր նշվում է Հաճախորդի վճարումը հավաստող վճարային փաստաթղթի՝ Անդորրագրի ունիկալ համարը:
4) Ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից վճարային փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների վերաբերյալ իրավական ակտով սահմանված այլ տվյալներ:

33. Ճանապարհային ոստիկանության տույժերի, տուգանքների համակարգում առկա տվյալների հետ իրականացվող ստուգումների, ինչպես նաև վճարումների ընդունման գործընթացի ավտոմատացման հետ կապված սույն Կարգի համաձայն՝ ուղարկվող հաղորդագրությունների փոխկապվածությունը նշված է կարգի Հավելված 1-ում:

34. Սույն կարգում նշված հաղորդագրություններին համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունների դաշտերը, դրանց տեխնիկագրային նկարագրությունը և լրացման կանոնները սահմանվում են Կենտրոնական բանկի կողմից: Էլեկտրոնային հաղորդագրությունը՝ սույն կարգի իմաստով, հանդիսանում է հաղորդագրությունների փոխանցման ավտոմատացված ծառայության միջավայրում համապատասխան տեխնիկագրային լուծումների կիրառմամբ տեղեկատվության փոխանակման միջոց: Ընդ որում, էլեկտրոնային հաղորդագրությունների նկարագրության կանոններով կարող է սահմանվել, որ սույն Կարգով նշված հաղորդագրություններով փոխանցվող նվազագույն տեղեկատվությունից բացի էլեկտրոնային հաղորդագրությունները կարող են պարունակել նաև այլ տվյալներ, ըստ դրանց համապատասխան դաշտերի, ինչպես նաև կարող են սահմանվել համակարգում կիրառվող ներքին տեղեկատվական հաղորդագրություններ:

35. Սույն կարգում հաղորդագրություններին տրված համարները պայմանական են և կարող են տարբերվել տեխնիկագրային միջավայրում դրանց համապատասխանող էլեկտրոնային հաղորդագրությունների կիրառման համար սահմանվող կոդերից:

ԳԼՈՒԽ 6. ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԾՐԱԳՐԱՅԻՆ ԽԱՓԱՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴԻՑ ՎՃԱՐՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

36. Հաճախորդի կողմից Վարչական տույժի որոշման համարը ներկայացվելու դեպքում Ֆինանսական կազմակերպությունը կարող է ընդունել վճարումը և փոխանցել դեպի գանձապետարան, առանց «ՃՈ տույժերի, տուգանքների համակարգի» հետ սույն կարգով սահմանված ստուգումները կատարելու և հաղորդագրություններն ուղարկելու, եթե անհնար է Ավտոմատացված համակարգով հաղորդագրությունների ուղարկումը և ստացումը՝ առաջացած տեխնիկագրային խափանման պատճառով: Ընդ որում.

1) Տեխնիկագրային խափանումը կապված է Հաղորդագրությունների փոխանցման ավտոմատացված ծառայության և (կամ) «ՃՈ տույժերի, տուգանքների համակարգում» առաջացած խնդիրների հետ: Միաժամանակ պետք է հիմնավորվի, որ տվյալ խափանումը կապված չէ Ֆինանսական կազմակերպության կողմից կիրառվող (շահագործվող) տեխնիկագրային միջոցների խափանման հետ: Ինչպես նաև
2) Ֆինանսական կազմակերպության մոտ պետք է առկա լինեն համապատասխան տեխնիկագրային գրառումներ («log» ֆայլերի գրառում)՝ Ավտոմատացված համակարգի հետ կապված խնդիրների և դրանց պատճառների առաջացման մասին:
3) Կենտրոնական բանկի կողմից Ֆինանսական կազմակերպություններին ուղարկվել է համապատասխան գրություն՝ Ավտոմատացված համակարգում առաջացած տեխնիկագրային խափանման մասին:

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության Ոստիկանության ճանապարհային ոստիկանության վարչական տույժերի, տուգանքների հաշվառման տեղեկատվական համակարգից տվյալներ ստանալու և վճարումների կատարման համար այդ տվյալները պարտադիր ստուգելու մասին կարգի և պայմանների

Սույն կարգով սահմանված «ՃՈ տույժերի, տուգանքների համակարգից» տեղեկատվության տրամադրման և վճարման ընդունման հետ կապված կողմերի միջև ավտոմատացված եղանակով ուղարկվող հաղորդագրությունների փոխկապվածությունը

1. Հաղորդագրություն 1	2. Հաղորդագրություն 2	3. Հաղորդագրություն 3
1) «Հարցում առկա վարչական տույժերի վերաբերյալ» **Ուղարկող:** Ֆինանսական կազմակերպություն **Հասցեատեր:** Ոստիկանություն 2) ուղարկվում է հաճախորդի վճարումը ընդունելուց առաջ	1) «Վճարման ենթական վարչական տույժի (տուգանքի) վերաբերյալ» պատասխան **Ուղարկող:** Ոստիկանություն **Հասցեատեր:** Ֆինանսական կազմակերպություն 2) ուղարկվում է ի պատասխան Հաղորդագրություն 1-ի	1) «Վճարման ընդունման վերաբերյալ» **Ուղարկող:** Ֆինանսական կազմակերպություն **Հասցեատեր:** Ոստիկանություն 2) ուղարկվում է՝ հիմք ընդունելով Հաղորդագրություն 2-ը, հաճախորդի վճարումն ընդունվում է կատարման Ֆինանսական կազմակերպության կողմից

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 230-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով վարկային ռեգիստրին բանկերի, վարկային կազմակերպությունների և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի կողմից տրամադրվող տեղեկատվության հաշվետվական ձևերի բարելավման համար ծրագրային ապահովման միջոցների ձեռնարկումը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, 35-րդ հոդվածի 3-րդ մասը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 29-ի թիվ 142-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 230-Ն որոշման 2-րդ կետում «2015 թվականի մայիսի 1-ին» բառերը փոխարինել «2016 թվականի հունվարի 25-ին» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
22 ապրիլի 2015 թ., N 93-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 231-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով վարկային ռեգիստրին և «ԱՔՌԱ» վարկային բյուրոյին բանկերի, վարկային կազմակերպությունների և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի կողմից տրամադրվող տեղեկատվության հաշվետվական ձևերի բարելավման համար ծրագրային ապահովման միջոցների ձեռնարկումը,

հիմք ընդունելով «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային բյուրոներին տրամադրվող վարկային տեղեկատվության նվազագույն ցանկը սահմանելու մասին» թիվ 231-Ն որոշման 2-րդ կետում «2015 թվականի մայիսի 1-ին» բառերը փոխարինել «2016 թվականի հունվարի 25-ին» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
22 ապրիլի 2015 թ., N 94-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. ապրիլի 18-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 29.04.2015 թ. (ՀՀԳՏ N11 (523)[1], 4.05.2015):

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ
ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ԱՊՐԻԼ 2015)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 61

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների ինդեքսներ

Գնաճ

Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 64

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 69

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 70

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 80

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները

Ռեպո շուկայի շրջանառությունը

Միջբանկային բորսայական վարկերի տոկոսադրույք

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Արժութային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 100

Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների

Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության

Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը

Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների

ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը

Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների

Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության

Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը

Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը

Առևտրային բանկերի ավանդներ 111

Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների

Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 113

Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը

ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը

ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը

ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը

Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը

ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը

Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ

Կառավարման վերցված միջոցներ

Պահառության վերցված արժեթղթեր

ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը

Գրավատների ցուցանիշներ

Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ

Վճարահաշվարկային համակարգ 120

Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ

ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ

ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների

ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	*2015թ. մարտ*	*2015թ. մարտի իրական աճի հինդեքսը 2014թ. մարտի նկատմամբ (%)*	*2015թ. ապրիլ*	*2015թ. ապրիլի իրական աճի հինդեքսը 2014թ. ապրիլի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ		102.2		103.2
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	104898.7	104.0	104366.9	110.6
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	31902.9	105.7	45970.0	105.2
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	22837.7	99.7	23740.0	100.2
Առևտրի շրջաառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	173009.9	94.7	165018.6	89.0
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	89344.9	102.8	87550.3	100.7
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	602.6	96.9	648.0	108.0
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձ *(ՀՀ դրամ)*	179912[1]	105.5[2]	180193[3]	106.4[4]

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2015 թ.	*Սպառողական գների հինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների հինդեքս*	*Գների հինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների հինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	102.5[1]	99.5	100.0	101.5
Փետրվար	99.9[1]	98.4	102.5	99.0
Մարտ	99.9	99.5	100.8	98.9
Ապրիլ	99.6	99.1	100.8	97.2
2015 թ. հունվար - ապրիլը 2014 թ. հունվար - ապրիլի համեմատությամբ	105.0	104.2	106.9	101.8

ԳՆԱՁ

Ժամանակաշրջան	*2013*	*2014*	*2015*	*2015*	*2015*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				*Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*Նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	2.9	2.8	2.5 [1]	2.5 [1]	4.2 [1]
Փետրվար	-0.4	-1.2	- 0.1 [1]	2.4 [1]	5.4 [1]
Մարտ	0.4	-0.4	-0.1	2.3	5.8
Ապրիլ	-0.1	0.5	-0.4	1.9	4.8
Մայիս	0.0	-0.8			
Հունիս	-0.1	-1.8			
Հուլիս	0.4	-0.9			
Օգոստոս	0.3	0.7			
Սեպտեմբեր	-0.2	0.4			
Հոկտեմբեր	0.3	1.0			
Նոյեմբեր	0.9	1.3			
Դեկտեմբեր	1.1	3.0			
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	5.6	4.6			
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	5.8	3.0			

ԳՆԱՁԻ Ն ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՅԻՄԲԵՐԸ [5]

Անվանում	*2015 թ. ապրիլը 2015 թ. մարտի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)*
ՍԳԻ	**99.57**	
Պարենային ապրանքներ (ներառյալ՝ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**98.64**	**-0.66**
Բանջարեղեն և կարտոֆիլ	93.87	-0.34
Միրգ	103.29	0.11
Կենդանական և բուսական յուղեր	96.35	-0.11
Հացամթերք	99.21	-0.08
Ձու	95.63	-0.07
Մսամթերք	99.33	-0.06
Ձկնամթերք	94.72	-0.04
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**101.03**	**0.21**
Դեղամիջոցներ	102.19	0.10
Հագուստ և գործվածք	103.33	0.08
Կոշկեղեն	102.71	0.04
Անձնական օգտագործման մեքենաներ և վառելանյութ	99.12	-0.04
Մշակույթի ապրանքներ	101.50	0.01
Ծառայություններ, որից՝	**100.07**	**0.02**
Տրանսպորտի	98.51	-0.04
Բուժսպասարկման	101.48	0.04
Կենցաղային բնույթի	101.00	0.01
Հանրային սննդի	100.37	0.00

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՁ [5]

ժամանակաշրջան	2013	2014	2015
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.79	0.17	0.94 [2]
Փետրվար	0.21	-0.45	0.21 [2]
Մարտ	0.53	0.02	-0.09
Ապրիլ	0.51	0.14	-0.39
Մայիս	0.38	0.05	
Հունիս	0.54	-0.19	
Հուլիս	0.09	0.30	
Օգոստոս	0.11	0.32	
Սեպտեմբեր	0.28	0.47	
Հոկտեմբեր	0.29	0.47	
Նոյեմբեր	0.06	0.37	
Դեկտեմբեր	-0.19	1.11	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	3.63	3.03	3.82 [2]
Փետրվար	3.73	2.35	4.45 [2]
Մարտ	4.20	1.82	4.40
Ապրիլ	4.71	1.44	3.83
Մայիս	5.30	1.09	
Հունիս	5.50	0.43	
Հուլիս	5.49	0.63	
Օգոստոս	5.70	0.81	
Սեպտեմբեր	5.34	1.01	
Հոկտեմբեր	4.85	1.15	
Նոյեմբեր	4.51	1.46	
Դեկտեմբեր	3.69	2.75	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՁԻ ՆԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ [5]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. այդ թվում՝	**3.83**
Խոզի միս	0.29
Կոնֆետ	0.20
Թթվասեր	0.20
Մածուն	0.17
Նրբերշիկ	0.15
Տավարի միս	0.15
Կարամել	0.14
Թխվածքաբլիթ	0.14
Ծառայություններ զբոսաշրջության՝ արտասահմանյան ուղերթ	0.13
Եփած երշիկ	0.11
Ավտոմեքենա «KIA Cerato»	0.10
Բենզին	-0.07
Թարմ ձուկ «իշխան»	-0.10
Կարագ	-0.12
Օդային տրանսպորտով ուղևորների միջքաղաքային փոխադրման ուղեվարձ	-0.12

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ ԱՎԾ կողմից:

[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ վերանայված տվյալների հիման վրա:

[3] Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:

[4] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների հիման վրա:

[5] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ[1]

Անվանում	*2015 թ. հունվար – մարտ (մլն ԱՄՆ դոլար)*	*2015 թ. հունվար-մարտը 2014 թ. հունվար-մարտի նկատմամբ (%)*	*2015 թ. հունվար – ապրիլ (մլն ԱՄՆ դոլար)*	*2015 թ. հունվար-ապրիլը 2014 թ. հունվար-ապրիլի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	267.6	76.9	376.4	80.7
Ներմուծում *(ՍԻՖ)*	677.5	69.5	881.7	65.5
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	409.9	65.4	505.3	57.4

[1] 2015 թ. արտաքին առևտրի ցուցանիշներն ամբողջական չեն՝ պայմանավորված ԵՏՄ երկրների միջև փոխադարձ առևտրի ցուցանիշների ոչ ամբողջական հավաքագրմամբ, և դրանք հետագայում ենթակա են ճշգրտման:

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	**2014 թվական**					
	Ապրիլ			**Հունվար – ապրիլ**		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	126260	20755	105505	423007	76534	346473
ԱՄՆ	10642	14535	-3893	41627	47924	-6296
Ուկրաինա	885	1261	-376	4936	4921	14
Ղազախստան	1693	324	1369	6658	1008	5649
Գերմանիա	3838	3174	664	11020	13489	-2468
Իսպանիա	833	1486	-653	2792	6906	-4114
Ֆրանսիա	1750	1781	-30	6730	6096	635
ԱՄԷ	1996	2951	-956	10120	14943	-4822
Չինաստան	220	5659	-5439	875	24019	-23143
Թուրքիա	318	2222	-1904	1029	6687	-5658
Այլ երկրներ	18977	17723	1253	79295	72684.04	6611
Ընդամենը	**167411**	**71871**	**95539**	**588089**	**275209**	**312879**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	**2015 թվական**					
	Ապրիլ			**Հունվար – ապրիլ**		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	73112	20229	52883	222105	80329	141777
ԱՄՆ	14667	8172	6494	52494	30764	21731
Ուկրաինա	503	841	-337	2222	2478	-256
Ղազախստան	1550	189	1361	5174	616	4558
Գերմանիա	2257	1891	366	9572	14284	-4712
Իսպանիա	1003	1619	-616	2683	4866	-2183
Ֆրանսիա	1317	1107	210	5587	5559	27
ԱՄԷ	2237	4696	-2460	7431	10241	-2810
Չինաստան	156	4038	-3883	569	14572	-14003
Թուրքիա	194	1223	-1029	1652	3948	-2296
Այլ երկրներ	90852	35312	55540	300172	137778	162394
Ընդամենը	**114735**	**59089**	**55646**	**387556**	**225107**	**162449**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


հազար ԱՄՆ դոլար

երկիր	2014 թվական					
	Ապրիլ			Հունվար - ապրիլ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	109004	17846	91158	372699	62564	310136
ԱՄՆ	7776	2781	4995	29179	13049	16130
Ուկրաինա	853	883	-30	4207	3767	440
Ղազախստան	1472	310	1161	5406	794	4612
Գերմանիա	2708	643	2066	6922	2813	4109
Իսպանիա	622	344	277	2237	1379	858
Ֆրանսիա	1328	772	556	5079	2325	2754
ԱՄԷ	594	626	-32	3287	2583	703
Չինաստան	151	961	-810	426	4607	-4181
Թուրքիա	267	336	-69	657	1191	-534
Այլ երկրներ	8530	4836	3694	34224	16757	17467
Ընդամենը	**133306**	**30339**	**102966**	**464323**	**111828**	**352495**

հազար ԱՄՆ դոլար

երկիր	2015 թվական					
	Ապրիլ			Հունվար - ապրիլ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	70445	16009	54436	214794	66045	148749
ԱՄՆ	10412	3308	7104	36805	11727	25078
Ուկրաինա	503	513	-9	2208	1813	395
Ղազախստան	1204	183	1021	3764	606	3159
Գերմանիա	1222	634	588	4871	1908	2963
Իսպանիա	533	260	274	1920	958	962
Ֆրանսիա	1028	454	574	4105	1637	2468
ԱՄԷ	434	417	17	1487	1232	255
Չինաստան	73	801	-728	272	2573	-2301
Թուրքիա	149	336	-187	528	949	-421
Այլ երկրներ	9906	3887	6019	31498	13859	17638
Ընդամենը	**95910**	**26801**	**69109**	**302252**	**103307**	**198945**





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈՒՄԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ) [1,2,3]

2014	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	133.4	131.9	131.2	132.0	130.1	128.4	128.9	131.7	134.8	138.2	142.0	138.6
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	221.3	222.4	223.8	225.7	225.4	227.3	230.4	234.3	240.5	245.5	249.8	238.6
2015	**Հ**	**Փ**	**Մ**	**Ա**	**Մ**	**Հ**	**Հ**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	143.7	149.5	147.9	146.8								
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	243.0	256.2	257.8	253.3								


[1] Հաշվարկի մեջ ընդգրկվել են 12 (նախկինում՝ 11) գործընկեր երկրների տվյալները՝ բացառելով մարդասիրական օգնությունը, բնական գազի, նավթի և ադամանդի առևտուրը՝ 2007-2011 թթ. կշիռներով (նախկինում՝ 2003-2007 թթ.), 1997=100:
[2] Բոլոր տվյալները ներկայացված են ըստ ԿԲ գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:
[3] Աճը նշանակում է արժևորում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2014	2015			
	Դ [3]	Հ	Փ	Մ [3]	Ա
Համախառն միջազգային պահուստներ	**1489.4**	**1351.1**	**1260.9**	**1491.6**	**1495.8**
Ոսկի	0.0	0.0	0.0	0.0	0.0
ՀՓԻ ԱՄՀ-ում	6.2	6.1	5.5	0.7	0.7
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0.0	0.0	0.0	0.0	0.0
Արտարժույթ [2]	1483.2	1345.1	1255.4	1490.9	1495.1

[1] Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:
[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:
[3] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:




ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2014	2015			
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա
Համախառն արտաքին պարտավորություններ	**568.6**	**549.6**	**551.6**	**553.8**	**564.5**
ԱՄՀ վարկ	290.5	282.7	283.3	273.3	276.2
ՀՓԻ տեղաբաշխում	127.5	124.0	124.4	121.7	122.9
Այլ վարկեր	150.0	142.6	143.4	158.2	164.2
Այլ պարտավորություններ	0.7	0.3	0.5	0.6	1.2

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:*

[2] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

մլն ՀՀ դրամ

	Պահանջներ Կառավարության նկատմամբ		Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ կառավարության նկատմամբ փոփոխության տարբերակում
	վերստուգման ենթակա	ընդամենը	կառավարության հաշվին կատարվող գործարքների համար	կառավարության հաշվին գործարքների համար	ՕՀԳ-երի միջոցներ	ՕՀԳ-երի միջոցներ	ընդամենը	
2014								
Դեկտեմբեր	14634	14634	113933	2166	0	674	116772	**-102138**
2015								
Հունվար	14951	14951	133806	1212	0	676	135693	**-120742**
Փետրվար	14283	14283	105337	1525	0	679	107540	**-93258**
Մարտ	14342	14342	215365	1494	0	668	217527	**-203184**
Ապրիլ	13925	13925	177643	1577	0	676	179896	**-165971**

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

	Փողի բազա[1] *(մլմ ՀՀ դրամ)*	**Շրջանառությունում կանխիկ դրամ** *(մլմ ՀՀ դրամ)*	**Ցպահանջ ավանդներ դրամով** *(մլմ ՀՀ դրամ)*	**M1[2]** *(մլմ ՀՀ դրամ)*	**Ժամկետային ավանդներ դրամով** *(մլմ ՀՀ դրամ)*	**M2[3]** *(մլմ ՀՀ դրամ)*	**Արտարժութային ավանդներ** *(մլմ ՀՀ դրամ)*	**M2X[4]** *(մլմ ՀՀ դրամ)*	**Փողի բազմապատկիչ[5]**	**Հնդիմազմում դրամական[6]**
2014										
Դեկտեմբեր	886765	348359	182886	531245	287032	818277	855918	1674196	1.89	1.09
2015										
Հունվար	833398	306359	170327	476687	283933	760620	853215	1613834	1.94	1.08
Փետրվար	807073	302795	175306	478101	286234	764335	857720	1622055	2.01	1.11
Մարտ	791993	296473	174230	470704	286151	756855	844882	1601737	2.02	1.11
Ապրիլ	809094	306228	179550	485778	291435	777213	858478	1635691	2.02	1.12

[1] Փողի բազան ընդգրկում է ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվները (դրամով և արտարժույթով) և ռեզիդենտների այլ հաշիվները (դրամով և արտարժույթով):


[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[3] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:


[4] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[5] Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:

[6] Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
900000
750000
600000
450000
300000
150000
0
11
12
13
14
15
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
1800000
1500000
1200000
900000
600000
300000
0
11
12
13
14
15
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
50
46
42
38
34
30
26
22
18
08
09
10
11
12
13
14
15


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
65
60
55
50
45
40
35
08
09
10
11
12
13
14
15


ՄԵՋՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

մլն ՀՀ դրամ

Ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2014					
Հունվար	775528	347412	540199	805371	1506049
Փետրվար	767193	345862	537678	803251	1521983
Մարտ	779965	346075	533420	804818	1540685
Ապրիլ	768103	348594	546306	817480	1558493
Մայիս	765638	349374	546081	830438	1579862
Հունիս	755014	352032	550924	843076	1595356
Հուլիս	784154	349393	550852	851979	1599276
Օգոստոս	738340	355405	548786	855534	1606434
Սեպտեմբեր	739065	352907	548443	864037	1599525
Հոկտեմբեր	745869	352190	552801	871640	1625640
Նոյեմբեր	741413	339468	532040	838986	1646509
Դեկտեմբեր	769928	343826	541309	784645	1638777
2015					
Հունվար	814285	316685	497707	782567	1630150
Փետրվար	806307	318488	502297	787929	1634703
Մարտ	804191	315746	501164	783278	1609025
Ապրիլ	805589	319646	502554	794407	1645671

[1] *Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:*
Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են և հրապարակվում «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի տարվա առաջին համարում:
Շարքերի սեզոնային հարթեցումն իրականացվել է՝ օգտագործելով Census X-12-ARIMA հարթեցման եղանակը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի փաստացի և հարթեցված մակարդակները



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2014	2015			
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)					
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ [1]	***392699***	***346451***	***310114***	***407074***	***399846***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***494066***	***486946***	***496959***	***384918***	***409248***
Կառավարություն	-102138	-120742	-93258	-203184	-165971
Բանկեր	312508	321451	301287	281350	267729
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	182603	221522	202672	204768	185070
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոպ	0	0	0	0	0
Դրամական միջոցների ներգրավում (-)	0	-2701	0	0	-2201
Դրամական միջոցների ներգրավման սակարկություններ (-)	0	0	0	0	0
Հակադարձ ռեպո (-)	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոպ (-)	-5813	-5862	-11902	-12004	-10747
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	283697	286238	288930	306753	307490
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***886765***	***833398***	***807073***	***791993***	***809094***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	412345	355649	351813	345938	357945
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	334554	346979	334148	329609	330439
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	135944	125231	115000	110009	115397
Այլ հաշիվներ	3922	5538	6113	6436	5312
Այլ հաշիվներ ՀՀ դրամով	3167	4860	5299	5421	3714
Այլ հաշիվներ արտարժույթով	755	679	814	1016	1598
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)					
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-46248***	***-36338***	***96961***	***-7229***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-7120***	***10013***	***-112041***	***24329***
Կառավարություն	-	-18604	27485	-109927	37213
Բանկեր	-	8942	-20164	-19937	-13620
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	-	38919	-18850	2095	-19698
Դրամական միջոցների ներգրավում (-)	-	2701	-2701	0	2201
Դրամական միջոցների ներգրավման սակարկություններ (-)	-	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	-	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-	2541	2692	17823	736
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-53368***	***-26325***	***-15080***	***17101***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-56696	-3836	-5875	12007
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	-	12425	-12832	-4539	830
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	-	-10713	-10232	-4990	5388
Այլ հաշիվներ	-	1616	574	324	-1124
Այլ հաշիվներ ՀՀ դրամով	-	1693	439	122	-1707
Այլ հաշիվներ արտարժույթով	-	-77	135	202	583
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)					
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-11.8***	***-10.5***	***31.3***	***-1.8***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-1.4***	***2.1***	***-22.5***	***6.3***
Կառավարություն	-	-18.2	22.8	-117.9	18.3
Բանկեր	-	2.9	-6.3	-6.6	-4.8
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	-	0.0	0.0	0.0	0.0
Զուտ այլ ակտիվներ	-	0.9	0.9	6.2	0.2
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-6.0***	***-3.2***	***-1.9***	*2.2*
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-13.7	-1.1	-1.7	3.5
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	-	3.7	-3.7	-1.4	0.3
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	-	-7.9	-8.2	-4.3	4.9
Այլ հաշիվներ	-	41.2	10.4	5.3	-17.5

[1] Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) իրենցից ներկայացնում են փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվների և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունների տարբերությունը: ԶՄՊ-ն հաշվարկված է ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 410.00 դրամ, 1 ՀՓԻ = 1.5147 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.3275 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.5313 ԱՄՆ դոլար:

[2] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ հրջանառության գործառնությունները:

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2014	2015			
	Դ	Հ	Փ	Մ	Ա
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**-810547**	**-771453**	**-738820**	**-739661**	**-748918**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	250404	244347	257670	225303	248082
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով (-)	-971748	-925733	-907536	-871972	-904607
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով (-)	-89203	-90067	-88954	-92991	-92393
ԶՆԱ	**2147192**	**2102706**	**2088468**	**2073555**	**2110507**
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	181612	198438	200254	193392	178548
Պահանջներ Կառավարության նկատմամբ	236878	253167	255073	247524	235635
Պարտավորություններ Կառավարության նկատմամբ (-)	-55266	-54729	-54819	-54132	-57087
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	232350	210581	201297	213027	244824
Պահանջներ ԿԲ նկատմամբ	533379	523017	496695	487785	498313
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ (-)	-301029	-312436	-295398	-274757	-253489
Տնտեսություն	2138789	2100319	2088979	2068270	2088779
Ձեռնարկություններ	1215333	1187245	1180072	1154768	1182609
Դրամով	179452	183365	183559	170873	174864
Արտարժույթով	1028614	997553	990222	977481	1001612
Արժեթղթեր	7267	6326	6291	6414	6133
Տնային տնտեսություններ	824210	816657	811867	811997	814949
Դրամով	513361	507167	497029	494729	490573
Արտարժույթով	310849	309491	314838	317267	324376
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	64186	62098	62371	65958	55141
Դրամով	7264	5315	4695	4167	4207
Արտարժույթով	56922	56783	57676	61791	50934
Այլ ֆինանսական կազմակերպություններ	35060	34319	34668	35547	36080
Դրամով	25954	24576	25810	26124	26482
Արտարժույթով	9105	9742	8858	9423	9598
Զուտ այլ ակտիվներ	-405559	-406632	-402061	-401134	-401645
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	29315	31228	30462	30273	36174
Արտաքին ակտիվներ ոչ փոխարկելի արտարժույթով	371	334	855	797	387
Արտաքին պարտավորություններ ոչ փոխարկելի արտարժույթով (-)	-18	-22	-36	-33	-20
Ներդրումներ փայաբաժիններում	14058	10233	10225	10227	10230
Միջբանկային պահանջներ	69364	62805	51687	56801	47609
Այլ ակտիվներ	202757	204208	207890	205108	206056
Միջբանկային պարտավորություններ (-)	-67995	-59739	-47683	-55001	-55489
Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր (-)	-1848	-1844	-1864	-1836	-2025
Կապիտալ հաշիվներ (-)	-468977	-475961	-480233	-473108	-465128
Այլ պարտավորություններ (-)	-182586	-177872	-173366	-174363	-179439
ԱՎԱՆԴՆԵՐ	**1336645**	**1331254**	**1349648**	**1333894**	**1361589**
Դրամով ավանդներ	480659	474911	489854	489771	504950
Ցպահանջ ավանդներ	180789	166712	171095	169909	177247
Ժամկետային ավանդներ	299870	308199	318759	319862	327702
Արտարժույթով ավանդներ	855986	856342	859794	844124	856639
Ցպահանջ ավանդներ	209092	213027	218128	202321	200309
Ժամկետային ավանդներ	646895	643316	641666	641803	656330

ՀՀ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2014	2015			
	Դ	Հ	Փ	Մ	Ա
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**-66575**	**-68245**	**-65108**	**-63131**	**-63399**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	1188	1551	1319	1294	1054
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով (-)	-49067	-51347	-48351	-47869	-48038
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով (-)	-18696	-18449	-18076	-16556	-16415
ԶՆԱ	**97764**	**99613**	**96255**	**94054**	**93764**
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	-14994	-14914	-15071	-15216	-15444
Պահանջներ Կառավարության նկատմամբ	2640	2699	2525	2357	2268
Պարտավորություններ Կառավարության նկատմամբ (-)	-17635	-17613	-17596	-17573	-17712
Զուտ պահանջներ ավանդային կազմակերպությունների նկատմամբ	53478	70161	79209	75612	74271
Պահանջներ ավանդային կազմակերպությունների նկատմամբ	83212	99576	107956	106149	106272
Պարտավորություններ ավանդային կազմակերպությունների նկատմամբ (-)	-29734	-29415	-28748	-30537	-32001
Տնտեսություն	174079	171700	169646	172165	173733
Ձեռնարկություններ	41101	40375	36459	36412	36969
Դրամով	13618	12993	12877	13351	13245
Արտարժույթով	21955	21791	18199	17812	18467
Արժեթղթեր	5527	5591	5383	5249	5258
Տնային տնտեսություններ	129283	128094	129987	132702	133785
Դրամով	91858	91235	92989	94950	94926
Արտարժույթով	37425	36859	36997	37752	38859
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	3041	3049	3060	2836	2769
Դրամով	1462	1466	1470	1269	1277
Արտարժույթով	1580	1583	1591	1567	1492
Այլ ֆինանսական կազմակերպություններ	654	181	141	215	210
Դրամով	464	181	141	92	86
Արտարժույթով	190	0	0	123	124
Զուտ այլ ակտիվներ	-114799	-127333	-137529	-138507	-138796
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	113	118	169	608	185
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	1	3	3	4	2
Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթով) (-)	0	0	0	0	0
Ներդրումներ փայաբաժիններում	4	4	4	4	4
Պահանջներ վարկային կազմակերպությունների նկատմամբ	6203	6099	6292	6384	6697
Այլ ակտիվներ	10084	10614	10571	10598	10228
Պարտավորություններ վարկային կազմակերպությունների նկատմամբ (-)	-6203	-6099	-6292	-6384	-6697
Թողարկված պարտատոմսեր (-)	-4044	-3274	-3301	-3330	-3258
Կապիտալ հաշիվներ (-)	-110578	-123877	-133741	-134512	-133862
